Այդուհանդերձ, պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում պաշտպանական քաղաքականության մշակման, ռազմավարական տրամաչափի որոշումների ընդունման ու կատարման համակարգում հնարավոր չէ ապահովել անթերի գործառնություն, որից ելնելով էլ այն պահանջում է հետևողական և աշխարհաքաղաքական, տարածաշրջանային ու ազգային անվտանգության քաղաքականության զարգացումներին համահունչ ու ներառող կատարելագործում: Դա բացատրվում է նաև ավանդույթային մոտեցումների որոշակիորեն արմատավորման հանգամանքով:

Պաշտպանական քաղաքականության ապահովման գործընթացում ընդգծված կարևորություն է ստանում նաև միջգերատեսչական համագործակցությամբ ռազմավարական տրամաչափի վերոնշյալ փաստաթղթերի մշակման ու որոշումների ընդունման մշակույթը: Առաջին այդպիսի փորձը, և բավականին հաջող, կատարվեց 2006թ. «Ազգային անվտանգության ռազմավարության» նախագծի մշակման ընթացքում: Այն ժամանակ ռազմավարության մշակմամբ զբաղվող միջգերատեսչական հանձնաժողովը, որը հիմնականում կազմված էր շահագրգիռ գերատեսչությունների ղեկավարների՝ անվտանգության ոլորտի համար պատասխանատու տեղակալներից, օգտագործելով ամերիկյան պրակտիկայում լայնորեն կիրառվող «Դելֆի» եղանակը, մշակեց և Ռասաստանի ու ԱՄՆ-ի համապատասխան առաջատար գիտական կենտրոնների, ինչպես նաև ՆՍՏՕ-ի փորձագետների միջազգային խմբի, ՀՀ առաջատար գիտակրթական կազմակերպությունների և օրենսդիրների միջավայրում հաջողությամբ փորձարկեց ռազմավարության նախագիծը: Բացի այդ, տարբեր գերատեսչություններում զուգահեռ մշակվեցին ռազմավարության իրականացմանն ուղղված ոլորտային ծրագրերը: Երկրորդ փորձն արվեց ՀՀ ռազմական դոկտրինի մշակման ժամանակ: Արհեստավարժ ռեսուրսի, այդ թվում՝ մասնագիտացված վերլուծական կազմակերպությունների ներգրավումը հատկապես կարևոր է ոչ միայն պաշտպանության քաղաքականության, այլ նաև ռազմական քաղաքականության մշակման և այդ ոլորտում ռազմավարական որոշումների ընդունման ժամանակ:

Այդպիսով կարելի է ամփոփել, որ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման կարևոր բաղադրիչներից է պաշտպանական քաղաքականությունը, որն ըստ էության առնչվում է պետության և հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտներին: Պաշտպանական քաղաքականության մշակման և այդ ոլորտում որոշումների ընդունման արդյունավետության ապահովման կարևոր միջոց է համապատասխան մտավոր ներուժի ձևավորումը, համախմբումը և զարգացումը, այդ թվում՝ անկախ փորձագետների և հասարակական կազմակերպությունների ներգրավմամբ: ՀՀ-ում նպատակահարմար է քննադատաբար ընդօրինակել և ներդրել ազգային, հատկապես՝ պաշտպանական անվտանգության ոլորտում որոշումների ընդունման արտասահմանյան առաջավոր քաղաքական մշակույթը՝ դրա տեղայնացմամբ, այն օրգանապես համադրելով հայկական ավանդական մոտեցումների և մյուս դրական տարրերի հետ:

[14] ՀՀ Նախագահի 2007 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը հաստատելու մասին» թիվ ՆՀ-308-Ն հրամանագիր, ՀՀ ՊՏ 2008/1, 07.01.2008, հասանելի է՝ [http://www.arlis.am]

ՀՀ պաշտպանական համակարգի զարգացումը պահանջում է զինված պայքարի միջոցների զարգացման և դրա եղանակների ու ռազմավարությունների համապատասխան փոփոխման համաշխարհային միտումների ներբեռնում, մասնավորապես՝ կարևոր ուղղություններից մեկի՝ զինված ուժերի օժտումը բարձր տեխնոլոգիաների վրա հիմնվող «ցանցակենտրոն պատերազմներ» վարելու կարողությամբ:

Միաժամանակ, պաշտպանական քաղաքականության շրջանակներում բարեփոխումների իրականացման ընթացքում պաշտպանական–անվտանգային համակարգի ու գործունեության արդյունավետությունը կարող է ժամանակավորապես նվազել, քանի որ գործող կառուցակարգերի վերափոխման կամ նոր կառուցակարգերի ներդրման պարագայում ի հայտ են գալիս անճշտություններ, թերություններ, ընդհատումներ, որոնց վերացման համար ժամանակ է պահանջվում: Սակայն, Հայաստանը, ելնելով առկա ռազմաքաղաքական իրադրությունից, իրավունք չունի կատարելու անհաշվենկատ քայլեր, որոնք թեկուզ ժամանակավորապես կարող են բացասաբար անդրադառնալ զինված ուժերի մարտունակության մակարդակի վրա, հետևաբար՝ այդպիսով թե պաշտպանական քաղաքականության և թե դրա հիմնական առանցքը կազմող ռազմական քաղաքականության մեջ Հայաստանի Հանրապետության համար բացառվում է «սխալի իրավունքը»:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2017.12.06/73 (1348), հասանելի է՝ [http://www.arlis.am]
2. «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2007/4, 17.01.2007, հասանելի է՝ [http://www.arlis.am]
3. «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 1999/8(74), 01.04.1999, ներկայումս չի գործում, հասանելի է՝ [http://www.arlis.am]
4. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2008/73, 24.12.2008, ներկայումս չի գործում, հասանելի է՝ [http://www.arlis.am]
5. ՀՀ Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» թիվ ՆՀ-37-Ն հրամանագիր, ՀՀ ՊՏ 2007.02.15/11, 07.02.2007, հասանելի է՝ [http://www.arlis.am]
6. ՀՀ Նախագահի 2007 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը հաստատելու մասին» թիվ ՆՀ-308-Ն հրամանագիր, ՀՀ ՊՏ 2008/1, 07.01.2008, հասանելի է՝ [http://www.arlis.am]
7. ՀՀ արտաքին գործերի նախարարություն, Հայաստան-ՆԱՏՕ համագործակցություն, Պաշտպանական անվտանգություն և ռազմական խնդիրներ, 2019թ., հասանելի է՝ [http://www.nato.mfa.am/hy/issues/]
8. ՀՀ պաշտպանության նախարար Դ.Տոնոյանի տեսլականը՝ կապված երկրի պաշտպանության համակարգի զարգացման ու ոլորտի կատարելագործման առաջնահերթությունների հետ, 9 հուլիսի 2018թ., հասանելի է՝ [http://mil.am/hy/news/5402]
9. Քոթանջյան Հ.Ս., Չիլինգարյան Դ.Ս., Ավետիսյան Վ.Պ., Մինասյան Ա.Ա., «Պաշտպանական քաղաքականություն» հասկացությունը՝ որպես Հայաստանում պաշտպանական բարեփոխումների իրականացման տեսական-մեթոդաբանական գործիք: ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2009, հմ. 1-2, 8-21 էջեր
10. Քոչարյան Տ.Տ., Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության համատեքստում, Եր., ԵՊՀ հրատ., 2012, 373 էջ
11. Военная доктрина Российской Федерации, Утверждена Указом Президента Российской Федерации от 5 февраля 2010 года, հասանելի է՝ [http://kremlin.ru/supplement/461]
12. Военная доктрина Российской Федерации, Утверждена Указом Президента Российской Федерации от 25 декабря 2014 года, հասանելի է՝ [http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_172989/]
13. **Гареев М.А.**, Перспективы развития геополитической обстановки в мире и пути обеспечения оборонной безопасности России, “ПОЛИТИКА”, №2 (20), 2001, стр. 99-108
14. Война и мир, в терминах и определениях. Военно-политический словарь под общ. ред. Д. Рогозина, 2011, изд-во ВЕЧЕ, 640 стр., հասանելի է՝ [http://voina-i-mir.ru/chapter/2]

Сдана/Հանձնվել է՝ 15.12.2019
Рецензирована/Գրախոսվել է՝ 18.12.2019
Принята/Ընդունվել է՝ 20.12.2019

«Третья экспансия» и политическая элита КНР

Бардакчян О. Х.
Магистр Регионоведения, Российско-Армянский Университет (Ереван, Армения)
hovobard@gmail.com

Ключевые слова: китайское, Китай, экспансия, КНР, политической, экономическое, время, годы, страны, влияние, руководство

«Երրորդ էքսպանսիան» և Չինաստանի քաղաքական էլիտան

Բարդակչյան Հ. Խ.
Տարածաշրջանագիտության մագիստրոս, Հայ-Ռուսական Համալսարան (Երևան, Հայաստան)
hovobard@gmail.com

Ամփոփում՝ Հոդվածն անդրադառնում է ՉԺՀ-ում և աշխարհում տեղի ունեցող ժամանակակից գործընթացներին: Ուսումնասիրվում են Չինաստանի քաղաքական վերնախավի վերջին տասնամյակների ընթացքում կատարած գործողությունները պատմաքաղաքակրթական շարունակականության տեսանկյունից: Առաջարկվում է «Երրորդ էքսպանսիա», ՉԺՀ-ի ժամանակակից գործողությունները բնութագրող տերմինը և նրա բացատրությունը:
Վճռորոշ բառեր՝ Չինական, Չինաստան, էքսպանսիա, ՉԺՀ, քաղաքական, տնտեսական, ժամանակ, տարիներ, երկրներ, ազդեցություն, ղեկավարություն

«Third expansion» and the political elite of China

Bardakchyan H.Kh.
Master of Regional Studies, Russian-Armenian University (Yerevan, Armenia)
hovobard@gmail.com

Abstract: The article deals with contemporary processes in CPR and around the world. The activities of the chinese political elite over the last decades are studied in terms of historical-cultural continuity. "Third Expansion", a term used to describe CPR modern political actions with its explanation is suggested.
Keyword: Chinese, China, expansion, CPR, political, economic, time, years, countries, influence, leadership

Китай – уникальное в своем роде государство. В течение всей своей истории, не считая короткие периоды политической нестабильности, Китай всегда имел статус «Великой державы». Так или иначе, Китайское государство, независимо от правящих в нем политических сил, будь то чисто китайские династии или же китаизированные династии завоевателей, всегда занимало доминирующее положение во всей Азии. Культурное, экономическое и политическое влияние Китая на ближайших соседей трудно переоценить.

Западную цивилизацию часто называют агрессивной и захватнической, а значит, предпочитающую экстенсивное развитие, путем завоеваний. В то время как, Восточная цивилизация вообще и Китайская в частности, является примером общности, деятельность которой направлена в большей степени на интенсивное развитие, путем освоения уже находящихся на ее территории элементов. Примером интенсивного развития китайской цивилизации служат многочисленные завоеватели-кочевники, которые, вторгаясь в пределы Китая, неизменно ассимилировались и, через несколько поколений, их трудно было бы отличить от коренных китайцев[1]. Именно эта черта долгие века и была определяющей в государственной политике китайских властных элит. Несмотря на активную торговлю по «Великому Шелковому Пути» и другим торговым маршрутам древности, влияние Китая, политическое, экономическое или культурное, никогда не переходило границы так называемого «ближнего зарубежья» Китайской империи. Под «ближнего зарубежья» мы понимаем соседние с Китаем регионы и страны, которые так или иначе находились или находятся под культурным, экономическим и политическим влиянием Китая. В то же время, даже ближайшие соседи Китая не всегда подпадали под это

[1]Особенности отношений Китая с кочевыми народами на северной периферии империи в эпоху средневековья / Е.Б. Баринова. «Гуманитарные исследования в Восточной Сибири и на Дальнем Востоке», №1,- Влад., 2014, стр.13-19. Доступ к ресурсу: https://cyberleninka.ru/article/v/osobennosti-otnosheniy-kitaya-s-kochevymi-narodami-na-severnoy-periferii-imperii-v-epohu-srednevekovya (дата последнего обращение: 02.10.19)

влияние. Такие регионы как Синцзянь и Тибет, что являются частью современного Китая, обладая самобытной и укорененной в сознании местных жителей культурой, долгие века оставались вне культурного и политического влияния империи. Это можно объяснить тем, что основной политикой китайских императоров и их окружения долгие столетия оставался изоляционизм, а главной военной стратегией - оборончество. Именно этим объясняется то, что, несмотря на огромные ресурсы и проистекающие из них возможности, Китайское государство не часто делает попытки переступить границы своей традиционной зоны влияния, держа под контролем лишь пограничные с самим Китаем страны и регионы. Более того, именно это обстоятельство подвигло китайских императоров и их советников к строительству Великой Китайской Стены и других пограничных укреплений, на долгие столетия обозначив цивилизационные границы Китая. Кроме того, именно интенсивностью развития можно объяснить феноменальные успехи китайской науки и культуры в самых разных областях знаний.

Однако будет неправильно утверждать, что Китайское государство никогда не было агрессором. Много раз именно Китай начинал крупные вооруженные конфликты, направленные на укрепление собственного влияния. Однако мы можем наблюдать лишь две состоявшиеся и крупные попытки экспансии вне традиционной зоны влияния, предприняты правящими в Китае силами. В обоих случаях мы, несомненно, можем заметить обще черты.

В первом случае, в годы правления династии Тан, экспансия была направлена вглубь континента Евразия и носила характер завоевательных походов, с целью не только подчинения новых земель, но и восстановления безопасности на Великом Шелковом Пути. После ряда успехов, экспансия была остановлена набирающим силу Арабским Халифатом. Тогда, во время Битвы на реке Талас в 751 г. н.э., произошло столкновение армии Империи Тан и армии Аббасидов. После поражения в битве, и случившегося через несколько лет Восстания Ань Лушаня, Империя Тан вступила в период затяжного кризиса, вплоть до утверждения в стране династии Сун[2].

Вторая попытка экспансии, предпринятая в первые десятилетия правления династии Мин, носила характер серии торгово-дипломатических миссий. Впервые в истории, в Китае был построен мощный океанский флот. Были заключены торговые договора с рядом приморских государств Тихого и Индийского океанов, а Китай на недолгое время превратился в великую морскую державу. Однако экспансия вновь была остановлена. На этот раз, уже непосредственно китайскими правящими кругами, посчитавшими содержание большого океанского флота слишком затратным делом[3].

Оба приведенных примера весьма красноречиво свидетельствуют о том, что у Китая есть и возможность, и необходимый исторический опыт не только военной, но и экономической экспансии. Многим может показаться, что опыт многовековой давности не может быть актуален в современном мире. Однако опыт военных компаний династии Тан и путешествий адмирала Чжен Хэ прямо повлиял на современную политику, проводимую китайским руководством. Можно утверждать, что сегодня, нашему поколению выпала уникальная возможность стать свидетелем так называемой «Третьей экспансии Китая», в которой были учтены все ошибки прежних китайских политических элит.

Что такое «Третья Экспансия»? С практической точки зрения, это совокупность инвестиционных проектов и экономических инициатив нынешнего китайского руководства, предпринятых после 2012 года. Это не только растиражированная в массовом сознании инициатива «Один_пояс, один-путь» (ОПОП), со своими сухопутными и морскими компонентами, но и ряд проектов в Азитаско-Тихоокенском Регионе (АТР), а так же крупные финансовые инвестиции на африканском континенте, с целью создания условий для нового экономического прорыва китайской экономики. Сопутствующей задачей является усиления экономического и политического влияния Китайской Народной Республики в странах, принимающих участие в «Инициативе ОПОП» и других проектов. Но что собой представляет «Третья Экспансия», если рассматривать ее с исторической точки зрения?

При ближайшем рассмотрении, мы можем заметить ряд присущих всем трем «Экспансиям» черты.

В первую очередь, речь идет о том, что все «экспансии« совершались спустя некоторое время после выхода Китая из затяжных кризисов, в периоды цивилизационного подъема. Так, экспансия в Средней Азии пришлась на пик правления династии Тан, многими китайскими иссле-

[2]Восстановление и расцвет империи: династии Суй и Тан; Ослабление Танской империи в VIII—IX вв/ История Китая; Учебник/ Под редакцией А.В. Меликсетовой. — 2-е изд., испр. и доп. — М.: Изд-во МГУ, Изд-во «Высшая школа», 2002. Стр 182-187.

[3] Там же. Китай в эпоху правления Минской династии (1368—1644); Минский Китай и внешний мир// Стр. 256-260

дователями считающимся «Золотым веком» императорского Китая. А путешествия адмирала Чжэн Хэ начались в начальный период правления династии Мин, при императоре Чжу Ди, когда страна, избавившись от монгольского правления, полностью восстановила свою экономику, а так же влияние в ближнем зарубежье.

Сегодняшний Китай, пережив кризисный для себя двадцатый век, находится на подъеме. КНР и ее политическая элита уже в полной мере восстановили свое влияние в регионе. И нынешняя социально-экономическая ситуация в Китае позволяет руководству страны вести активную внешнюю политику.

Другой точкой соприкосновения с двумя прежними попытками экспансии можно считать ее направления. В первый раз, армия Империи Тан наступала в Средней Азии, по Великому Шелковому Пути, создавая сеть пограничных укреплений и поселений с целью обезопасить торговые маршруты. Во второй раз экспансия затронула уже морские торговые маршруты и такие морские центры торговли, как острова Малаккского Архипелага, портов Индии, Ближнего Востока и Африки. Третья же экспансия географически повторяет направления первой и второй экспансии чуть ли не буквально. Разница состоит лишь в масштабах экспансии, а так же ее ненасильственный характер. В то время как «Первая экспансия», как мы уже отметили, проходили в виде завоевательных войн, а «Вторая экспансия» хоть и имела торгово-дипломатический характер, все же поддерживалась пушками мощного океанского флота, не имеющего себе равных.

Третей же общей чертой всех «Экспансий» можно считать причину, толкнувшую китайскую политическую элиту на активные внешнеполитические действия, а именно- торговлю. «Первая экспансия» была предпринята в ответ на угрозу Великому Шелковому Пути кочевых племен Средней Азии. Целью «Вторая экспансия», было налаживание морской торговли в обход материка из-за политической нестабильности в той же Средней Азии, вызванной завоевательными войнами Тамерлана. Цель «Третьей Экспансии» так же состоит в создании наиболее благоприятных условий для выгодной торговли между Китаем и всей остальной Евразией.

Каждый раз, когда политическая элита Китая обращала внимание на свои западные границы, она за спиною имела страну, находящуюся на экономическом и культурном подъеме. Страну, в которой отсутствовало, или не было ярко выражено внутреннее недовольство, развивались ремесла и торговля. И, главное, требовался рынок сбыта для производимого в Китае товара. Будь то шелк и фарфор в древности или станки и автомобили в наше время. Именно это обстоятельство в первую очередь стало катализатором для китайских императоров и их окружения для первых двух экспансий. Современная политическая элита Китая – не исключение.

Многие нынешние руководители КНР начали свою карьеру уже при правлении Дэн Сяопина, в том числе, и действующий Председатель КНР Си Цзиньпинь. Будучи сторонниками идеи «Социализма с китайской спецификой», приводимой к жизни с помощью «Политики Реформ и Открытости», современное китайское руководство предпринимает ряд шагов, по углублению начатых еще Дэн Сяопином процессов.

За последние тридцать лет, КНР сумело достичь впечатляющих экономических успехов. Однако после экономического кризиса 2008 года, китайская экономика, как и экономика многих ведущих стран, стала выдыхаться. Об этом свидетельствуют такие данные, как медленное падение скорости роста ВВП в течение последних 9 лет[4]. Китайскому руководству стала очевидна непреложная истина: чтобы сохранить достигнутые результаты и обеспечить новый экономический взлет, нужен масштабный, хорошо продуманный политико-экономический проект или серия проектов. Без подобного проекта Китай вполне может разделить судьбу Японии, где после многолетнего экономического подъема, начался тяжелый экономический кризис. Именно успехи в экономике и социальной сфере в условиях отхода от маоизма до 2012 года были главными козырями правящей в Китае политической элиты. И китайская элита прекрасно осознает, что потеря этих преимуществ может поставить крест не только на власти КПК, но и на Китае как «Великой Державе».

Инициатива «Один-пояс, один-путь», масштабные вложения в экономики африканских стран, ряд интеграционных проектов в Азитаско-Тихоокеанском Регионе направлены на решение именно этой задачи, а именно на укрепление политической власти нынешнего руководства Китая.

Руководство КПК, в то же время, прекрасно осознавало, что в такой большой стране как Китай опора исключительно на экономические успехи лишь в краткосрочной и среднесрочной перспективе могут обеспечить устойчивость действующей власти. В долгосрочной же перспективе подобная политика может привести к нежелательным последствиям, в виде появления

[4] The World Bank Web-site //Доступ к ресурсу: https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG?locations=CN&view=chart (дата обращения:02.11.19)

китайского аналога «западного общества потребления», что по ряду причин, не устраивает нынешнюю политическую элиту. По этой причине, китайское руководство использовало выигранное экономическими успехами время, проведя очередное «обновление» национальной идеологии. С ее помощью политическая элита Китая обосновывает свою деятельность за последние тридцать лет в глазах китайской общественности.

Как мы уже отметили, после смерти Мао Цзедуна и отхода от маоизма в чистом виде, главенствующей идеологической конструкцией, вокруг которой и формируется современная китайская пропаганда, стала идея «Социализма с китайской спецификой». Начиная с 12-ого съезда КПК, данная идея постоянно модернизировалась. Появлялись концепции, происходящие от этой идеи, такие как «Социалистическая рыночная экономика» по итогам 14-ого съезда, «Сяокан», то есть «Среднезажиточного Общества» и «Тройное представительство» после 16-ого съезда.

В то же время, решения съездов КПК до 2012 года были сосредоточены большей степени на экономическом аспекте, а не политическом. Но после 18-ого съезда, КПК попыталось воплотить все прежние идеологические наработки в концепции «Китайской мечты». Данная концепция активно продвигается нынешним китайским руководством и имеет все шансы стать если не заменой, то равнозначным с «Социализмом с китайской спецификой» идеологическим конструктом. Что эта концепция собой представляет?

Стоит отметить, что автором термина «Китайская мечта» является не Си Цзиньпинь, как это принято сейчас говорить. Термин был предложен проректором Высшей партийной школы КПК Ли Цзюньжу и профессором Пекинского университета государственной обороны, полковником Ли Миньфу. Правда, на тот момент еще не было точного определения этого термина[5].

Данная концепция, в ее современном понимании, была впервые предложена Генеральным секретарем КПК Си Цзиньпином во время посещения выставки «Путь к возрождению» 29 ноября 2012 года. По словам самого генсека Си: «Китайская мечта - это квинтэссенция многовековых мыслей и чаяний китайского народа о построении справедливого общества, общества, в котором граждане страны будут жить в достатке, а так же о месте Китая на мировой арене, которое бы соответствовало достигнутым этим государством успехам в экономике и политике и отражало бы существенно возросшую военную мощь»[6].

Уже в этом заявлении мы можем наблюдать, что «Китайская мечта» не является такой же аморфной идеей, как, например, «Американская мечта». Наоборот, это всеобъемлющая концепция, является полноценной программой действия для современного китайского руководства. А внешнеэкономическая деятельность, которую мы охарактеризовали как «Третья экспансия» - главный инструмент в достижении КНР целей, обозначенной Си Цзиньпином и другими представителями «Пятого поколения руководителей КПК». Окончательно концепция «Китайской мечты» была оформлена в программном труде Си Цзиньпина «О государственном управлении», увидевшем свет в 2014 году[7].

Идеи Председателя КНР Си Цзиньпиня стали ведущей идеологической конструкцией нынешнего китайского руководства во время 19-ого съезда КПК. Во время съезда, Си Цзиньпинь был переизбран на пост Генерального секретаря КПК, а его теоретических работы были включены в Устав КПК. Впервые после Мао Цзэдуна, имя политического деятеля и его труды включены в основополагающий партийный документ при его жизни.[8]

Таким образом, можно утверждать, что 19-ый съезд КПК стал поворотным моментом в истории современного Китая. Политическая элита страны вместе с идеологическими наработками Си Цзиньпиня, окончательно приняло курс на активную внешнюю политику, деля постмаоистскую историю Китая на три периода.

1. Первый период длился с 1978 по 2012 годы, когда главной повесткой всех съездов было социально-экономические проблемы внутри Китая и пути их решения. На тот момент КНР не претендовала на место мирового лидера. Во главу угла ставилось увеличение благосостояния населения, а так же экономическое развитие. Даже в традиционной зоне влияние страны резко

[5] Концепция «китайской мечты» и её практическое применение//С.В. Новосельцев. Сравнительная политика, Том 7, №1(22),-М., 2016, стр. 5-21. Доступ к ресурсу: https://cyberleninka.ru/article/v/kontseptsiya-kitayskoy-mechty-i-eyo-prakticheskoe-primenenie (дата обращения:02.11.2019)

[6] «Китайская мечта» и новая дипломатия Китая // Л.Л. Суходольская. Общество и государство в Китае. Том 46, №1,-М.,2016, стр. 363-370. Доступ к ресурсу: https://cyberleninka.ru/article/v/kitayskaya-mechta-i-novaya-diplomatiya-kitaya (дата обращения:02.11.2019)

[7] С.В. Новосельцев. Сравнительная политика, Том 7, №1(22),-М., 2016, стр. 5-21. Доступ к ресурсу: https://cyberleninka.ru/article/v/kontseptsiya-kitayskoy-mechty-i-eyo-prakticheskoe-primenenie (дата обращения:02.11.2019)

[8] XIX съезд КПК вписал имя Си Цзиньпина в устав Компартии//Информационно агентство ТАСС. Доступ к ресурсу: https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/4674063?source=post_page/amp/amp (дата обращения: 02.11.19)

уменьшилась внешнеполитическая активность, притом, что в годы правления Мао Цзедуна и большую часть правления Дэн Сяопина, между Китаем и его непосредственными соседями часто шли затяжные пограничные вооруженные конфликты. Последним крупным военным столкновением стала морское сражение между Вьетнамским Народным Флотом и ВМФ КНР за острова Спратли в 1988 году. После чего на два десятилетия в регионе Восточной Азии установился относительный мир.

2.Второй период, который длился с 2012 по 2017 годы, можно назвать переходным. Китайская политическая элита, стала вести более активную внешнюю политику, стараясь, однако, избежать серьезных конфликтов интересов с крупными мировыми игроками, такими как США. Кроме того, в девяностые и нулевые в КНР существовал высокий уровень неудовольствия населения действующей политической элитой. Эта тенденция даже была отмечена Председателем КНР Цзянь Цземином во время своего выступления на 16-ом съезде КПК, когда подводился итог правления «Третьего поколения руководителей КНР»[9]. Второе же десятилетие двадцать первого века отметилось более масштабной поддержкой широких слоев населения проводимой КПК политикой. Кроме того, первый срок правления Си Цзиньпиня отметился возобновлением ряда старых пограничных конфликтов и увеличением напряжения в отношениях с непосредственными соседями КНР.

3. И третий период, начавшийся по итогам 19-сьезда КПК, то есть с 2017 года и продолжающийся по сей день. Особенностью данного периода является то, что китайская политическая элита стала в открытую говорить о месте Китая в мира. Процессы, начавшиеся в переходный период, уже окончательно оформились в желание занять подобающее КНР место в современном мире, то есть превращение КНР в ведущий геополитический центр. Китай, теперь уже официально, отошел от формулы «таогуан янхуей (韬光养晦)-держаться в тени», предложенной еще Дэн Сяопином. Сейчас, кроме возобновления старых пограничных споров с соседями, КНР вступила в экономическое и политическое противостояние с США. В то же время, социально-экономическая повестка никуда не исчезла. Раньше задачей политической элиты Китая было создание «Общества Сяокан» или «Среднезажиточного Общества». Теперь же, когда проблемы социального характера преимущественно решены, у китайской политической элиты появилась возможность в своей внутренней политике сделать упор на качественное усиление китайского общества. Так, опираясь на решения, принятые 19-ым съездом КПК, можно констатировать, что к 2035 году Китай должен стать мировым лидером в сфере инноваций, страной с чистой природой, с массовым средним классом и со значительно сократившимся разрывом между городом и селом в темпах экономического роста, качестве государственных услуг и стандартах жизни[10].

На 19-ом съезде КПК, была подтверждена прозвучавшая еще во время 18-ого съезда долгосрочная цель: к 2049 году построить «модернизированное социалистическое государство». Под этим понятием китайское руководство подразумевает сильное, социально-ориентированное государство, являющееся одним из геополитических центров мира.[11]

Таким образом «Третья экспансия» Китая получила не только экономический, но и идеологический импульс. Принятием идей Си Цзиньпиня, политическая элита Китая показала, что отныне КНР в открытую входит в мировую борьбу за сферы влияния, развернувшуюся во втором десятилетии двадцать первого века. Формула «экономика-отдельно, политика-отдельно», которой ранее руководствовалось политическая элита Китая, в нынешней ситуации теряет свою актуальность. Отныне, при выборе модели поведения в отношениях с Китаем, каждое государство должно учитывать, что предлагаемое КНР и ее первыми лицами экономическое сотрудничество подразумевает в себе и усиление политического влияние Китая. Отныне, нельзя больше говорить о том, что китайское руководство не интересует политический аспект в межгосударственных отношениях, чем раньше грешили некоторые представители научного сообщества.

Пока еще мир не осознал, что в международных отношениях наступило новая эпоха: эпоха «Третьей Экспансии китайской цивилизации». Многие исследователи и политики продолжают по инерции считать Китай лишь одной из Великих Держав, находясь под воздействием устойчивых стереотипов. Однако руководство КНР, за последние тридцать лет показало всему

[9] Доклад Цзян Цзэминя на 16-м Всекитайском съезде КПК//Газета “Женьмин Жибао”. Доступ к ресурсу: http://russian.people.com.cn//zhuanti/partycongress/bao1.html (дата обращения:02.11.2019)

[10] Полный текст доклада, с которым выступил Си Цзиньпин на 19-м съезде КПК//Официальный сайт 19-ого Всекитайского съезда Коммунистической партии Китая. Доступ к ресурсу: http://russian.news.cn/2017-11/03/c_136726299.htm (дата обращения: 02.11.19)

[11] Там же. Доступ к ресурсу: http://russian.news.cn/2017-11/03/c_136726299.htm (дата обращения: 02.11.19)

миру, что умеет добиваться поставленных перед собой целей. Гигантский экономический рост позволил политической элите страны упрочить свое влияние не только в самом Китае, но и за его пределами. Можно с уверенностью констатировать, что действия нынешней политической элиты Китая, направленные на усиления собственной власти, влияют так же и на процессы в остальном мире. Огромные инвестиции китайских компаний уже дали толчок для развития участвующих в «Инициативе ОПОП» и других крупных проектах стран. Влияние Китая в мире сильно выросло по сравнению с нулевыми годами.

При этом по мере активизации внешнеполитической деятельности, КНР все больше и больше встречает противодействия со стороны непосредственных конкурентов на звание мирового геополитического центра. Это касается не только США, отношения с которыми за последние два года у КНР ухудшились, но и таких игроков как Индия и Япония, которые так же претендуют на звание мировых геополитических центров. В связи с чем возникает закономерный вопрос: чем закончиться «Третья Экспансия»? Будет остановлена, как и «Первая» внешними факторами или же, как и в случае со «Второй», сама политическая элита откажется от грандиозных планов, достигнув своих целей?

В данный момент мы можем лишь утверждать, что запущенный в 2013 году механизм экономических преобразований в мире уже не остановить. Слишком много экономических проектов связаны именно с китайским капиталом, что сильно ограничивает оппонентов КНР. Однако противодействие экспансии уже ведется. Экономическое противостояние, инициированное американскими властями, является самым ярким примером противодействия «Третьей Экспансии». Проводником американских интересов в Восточной Азии является Япония, давний противник и конкурент Китая в регионе, лишь недавно уступив КНР пальму первенства среди азиатских экономик. Отношения между странами осложняются нерешенными пограничными вопросами и печальным наследием Японо-Китайской войны 1937-1945 годов. К лагерю противников КНР плавно движется и Индия, которая так же оспаривает у Поднебесной первенство в Азии. Можно предположить, что существует вероятность формирования негласного альянса против КНР.

Для руководства КНР «Третья Экспансия» жизненно необходима. Без завоевания новых рынков сбыта и обеспечения безопасности на торговых путях, будущее КНР видится туманным и неопределенным. В прошлом Китай уже отказывался от становления великой морской державой, что в итоге привело к Имджинской войне и падению династии Мин. Сегодняшняя политическая элита в этом вопросе настроена более решительно. Можно утверждать, что если в Китае не произойдет крупных социально-политических потрясений, таких как революции или военных переворотов, то 21-ый век, по всей вероятности пройдет под знаком гегемонии КНР не только в Азии, но и в мире.

Список используемой литературы

1. **Баринова Е.Б.** Особенности отношений Китая с кочевыми народами на северной периферии империи в эпоху средневековья// «Гуманитарные исследования в Восточной Сибири и на Дальнем Востоке», №1,- Влад., 2014, стр.13-19. [Barinova E.B. Osobennosti otnosheny Kitaya s kochevymi narodami na severnoy periferii imperii v èpokhu srednevekov'ya// «Gumanitarnye issledovaniya v Vostochnoy Sibiri i na Dal'nem Vostoke», №1,- Vlad., 2014, str.13-19.] Доступ к ресурсу: https://cyberleninka.ru/article/v/osobennosti-otnosheniy-kitaya-s-kochevymi-narodami-na-severnoy-periferii-imperii-v-epohu-srednevekovya (дата последнего обращение:02.10.19)
2. **Меликсетова А.В.** История Китая; Учебник//. — 2-е изд., испр. и доп. — М.: Изд-во МГУ, Изд-во «Высшая школа», 2002. Стр. 182-187.[Meliksetova A.V. Istoriya Kitaya; Uchebnik//. — 2-e izd., ispr. i dop. — M.: Izd-vo MGU, Izd-vo «Vysshaya shkola», 2002. Str. 182-187.].
3. **Новосельцев С.В.** Концепция «китайской мечты» и её практическое применение// Сравнительная политика, Том 7, №1(22),-М., 2016, стр. 5-21. [Novosel'tsev S.V. Kontseptsiya «kitayskoy mechty» i eyo prakticheskoe primenenie// Sravnitel'naya politika, Tom 7, №1(22),-M., 2016, str. 5-21.]. Доступ к ресурсу: https://cyberleninka.ru/article/v/kontseptsiya-kitayskoy-mechty-i-eyo-prakticheskoe-primenenie (дата обращения:02.11.2019)
4. **Суходольская Л.Л.** «Китайская мечта» и новая дипломатия Китая//Общество и государство в Китае. Том 46, №1,-М.,2016, стр. 363-370. [«Sukhodol'skaya L.L. «Kitayskaya mechta» i novaya diplomatiya Kitaya//Obshchestvo i gosudarstvo v Kitae. Tom 46, №1,-M.,2016, str. 363-370.]. Доступ к ресурсу: https://cyberleninka.ru/article/v/kitayskaya-mechta-i-novaya-diplomatiya-kitaya (дата обращения: 02.11.2019)
5. Доклад Цзян Цзэминя на 16-м Всекитайском съезде КПК//Газета "Женьмин Жибао". [Doklad Tszyan Tszèminya na 16-m Vsekitayskom syezde KPK//Gazeta "Žen'min Žibao"]. Доступ к ресурсу: http://russian.people.com.cn//zhuanti/partycongress/bao1.html (дата обращения:02.11.2019)
6. Полный текст доклада, с которым выступил Си Цзиньпин на 19-м съезде КПК//Официальный сайт 19-ого Всекитайского съезда Коммунистической партии Китая. [Polny tekst doklada, s kotorym

vystupil Si Tszin'pin na 19-m syezde KPK//Ofitsial'ny sayt 19-ogo Vsekitayskogo syezda Kommunisticheskoy partii Kitaya]. Доступ к ресурсу: http://russian.news.cn/2017-11/03/c_136726299.htm (дата обращения: 02.11.19)

7. XIX съезд КПК вписал имя Си Цзиньпина в устав Компартии//Информационно агентство ТАСС. [XIX syezd KPK vpisal imya Si Tszin'pina v ustav Kompartii//Informatsionno agentstvo TASS]. Доступ к ресурсу: https://tass.ru/mezhdunarodnaya-panorama/4674063?source=post_page-/amp/amp (дата обращения: 02.11.19)
8. The World Bank Web-site //Доступ к ресурсу: https://data.worldbank.org/indicator/NY.GDP.MKTP.KD.ZG?locations=CN&view=chart (дата обращения: 02.11.19)

Сдана/Հանձնվել է՝ 15.01.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 18.01.2020
Принята/Ընդունվել է՝ 23.01.2020

Տնտեսական պատժամիջոցների էությունը և նշանակությունը

Աղաջանյան Մ.Ա.
Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետ (Երևան, Հայաստան)
martin1998yan@gmail.com

Վճռորոշ բառեր՝ տնտեսական պատժամիջոց, տնտեսական ագրեսիա, հարկադրանք, թիրախ պետություն:

Сущность и значение экономических санкций

Агаджанян М. А.
Факультет международных отношений Ереванского государственного университета (Ереван, Армения)
martin1998yan@gmail.com

Резюме: Целью данной работы является выявление и представление особенностей концепции экономических санкций, в частности, демонстрация их отличительных особенностей от других форм экономического принуждения. В настоящей работе делается попытка дать более полное определение концепции экономических санкций, а также представить другие определения, распространенные в профессиональной литературе.
Ключевые слова: экономические санкции, экономическая агрессия, принуждение, целевое государство.

The Nature and Significance of Economic Sanctions

Aghajanyan M.A.
Faculty of International Relations of Yerevan State University (Yerevan, Armenia)
martin1998yan@gmail.com

Abstract: The purpose of this work is to identify and present the features of the concept of economic sanction, in particular, to demonstrate their distinctive features over other forms of economic coercion. The present work attempts to provide a more comprehensive definition of the concept of economic sanction, as well as present other definitions common in the professional literature.
Keywords: Economic sanctions, economic aggression, coercion, target state.

Իշխանությունը Ա սուբյեկտի կարողությունն է Բ սուբյեկտից ստանալու այնպիսի վարքագիծ և զսպվածություն , որը այլ դեպքերում Բ-ն չէր ընդունի և որը համապատասխանում է Ա-ի կամքին:
Գերմանացի սոցիոլոգ, փիլիսոփա և քաղաքական տնտեսագետ
Մաքս Վեբեր

Արդի աշխարհաքաղաքական պայմաններում տնտեսական պատժամիջոցները դարձել են զարգացած պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից արտաքին քաղաքականությունում ամենալայնորեն կիրառվող գործիքներից մեկը. ժամանակի մարտահրավերներին զուգընթաց կոշտ ուժի գործածությունը իր տեղը զիջեց այս գործիքին՝ դիտարկելով այն որպես դրա արդյունավետ այլընտրանք և լրացում: Տնտեսական պատժամիջոցները գերազանցապես օգտագործվում են պետություններին հարկադրելու գնալու որոշակի զիջումների, որոնք համահունչ են պատժամիջոցը կիրառող երկրի շահերին. չնայած իրենց տնտեսական բնույթին տվյալ պատժամիջոցների հետապնդած նպատակները բացառապես քաղաքական են: Ներկայիս զարգացման արագ տեմպերին զուգընթաց արագանում և ուժեղանում են տնտեսական պատժամիջոցների կիրառման հաճախականությունը և ազդեցությունը, միաժամանակ արդիականացվում են այն կառուցակարգերը, որոնք հնարավորություն են ընձեռում պատժամիջոցներից խուսափելու և դրանց ազդեցությունը մեղմացնելու թիրախ հանդիսացող պետության ազգային տնտեսության վրա: Տնտեսական պատժամիջոցները այն կիրառողների կողմից դիտարկվում են որպես հար-

կադրանքի ամենալեգիտիմ միջոցներից մեկը՝ ստիպելու պետությանը կատարելու իր միջազգային պարտավորությունները կամ էլ պահպանելու որոշակի քաղաքական կուրս, իսկ թիրախ պետությունների կողմից դրանք դիտարկվում են որպես իրենց ազգային անվտանգությանը սպառնալիք, որը ուղղորդված է իրենցից տնտեսապես և տեխնոլոգիապես առավել զարգացած պետությունների կողմից:

Ներկայիս աշխարհը բազմաբևեռ է և հարափոփոխ՝ կազմված բազմաթիվ պետություններից, որոնք գտնվում են միմյանց հետ սերտ փոխազդեցության մեջ, սակայն նմանատիպ ոչ բոլոր հարաբերություններն են իրենց բնույթով դրական: Այդ պատճառով էլ տարածված է պետությունների միջև փոխադարձ ճնշման զանգան գործիքները, որոնցից մեկն էլ տնտեսական պատժամիջոցներն են: Վերջին շրջանում տնտեսական պատժամիջոց հասկացությունը ուշադրության է արժանացել ինչպես տվյալ գծով մասնագիտացված փորձագետների, այնպես էլ հասարակական լայն շերտերի կողմից, ինչը մեծամասամբ պայմանավորված է ԱՄՆ-ի կողմից ընդդեմ Ռուսաստանի կիրառված սահմանափակող միջոցառումներով՝ կապված ուկրաինական դեպքերի հետ, ՌԴ-ի կողմից ընդդեմ Թուրքիայի կիրառված պատժամիջոցներով՝ 2015թ. նոյեմբերին ռուսական ինքնաթիռի հետ տեղի ունեցած դեպքից հետո, ինչպես նաև Իրանի և Կուբայի նկատմամբ կիրառված պատժամիջոցների մասնակի հանումից հետո: Տնտեսական պատժամիջոցների շուրջ ծավալվող բուռն քննարկումները նեղ առումով հիմնականում պայմանավորված են թիրախ հանդիսացող պետության տնտեսության նկատմամբ դրանց ազդեցության գնահատականի որոշմամբ, իսկ լայն առումով քննարկումների առարկան է արտաքին քաղաքականության այդպիսի գործիքի արդյունավետության և թույլատրելիության մասին հարցը:

Տնտեսական պատժամիջոցների կիրառումը որպես հանրային քաղաքականության գործիք ներկայումս պայմանավորված է դրա ընձեռած հնարավորությամբ՝ ռազմական բախումներից խուսափելու: Ռազմական ուժի կիրառումը հղի է մի շարք վտանգներով՝ այն հակառակորդ կողմին հրահրում է նույնպես ռազմական ուժի կիրառման, խլում է զինվորների կյանքերը, փոշիացնում պետությունների բյուջեները, խարխլում է հասարակության բնականոն կենսագործունեության հիմքերը: Ի համեմատած հարկադրանքի ռազմական միջոցառումների հետ՝ տնտեսական պատժամիջոցները հարկադրանքի առավել քիչ ռիսկային ու ծախսատար միջոց է, ինչպես նաև գրավիչ այլընտրանք՝ այդպիսով դրդելով հանրային քաղաքականությունը մշակողներին առավել հաճախ կիրառել այն:

Տնտեսական պատժամիջոցների կիրառման արդիականության հաջորդ գլխավոր պատճառը դրանց միահյուսվածության բարձր աստիճանն է առևտրային գործունեությանը. համաշխարհայնացման գործընթացների աճող արագության պայմաններում մարդիկ և պետությունները առավել կապված են դարձել միմյանց, քան երբևէ՝ մեկ համաշխարհային կապիտալիստական համակարգի շրջանակներում, որը մեծացնում է սեփական բարգավաճման համար նրանց կախվածությունը ուրիշներից: Այս հանգամանքը պետություններին, որոնց տնտեսական բարեկեցության մակարդակը խիստ կախված է արտահանման շուկաների առկայությունից, դարձնում է ավելի խոցելի և զգայուն տնտեսական պատժամիջոցների ազդեցությանը, քան նախկինում:

Այսպիսով, տվյալ աշխատանքի ուսումնասիրության օբյեկտն է «տնտեսական պատժամիջոց» հասկացության տեսական և գործնական իմաստավորումը, իսկ ուսումնասիրության առարկան՝ «տնտեսական պատժամիջոց» հասկացության մշակվածության վիճակը և աստիճանը մասնագիտական գրականության մեջ:

Տվյալ աշխատանքը նպատակ է հետապնդում հարցադրում բարձրացնելու առ այն՝

- Ի՞նչ է տնտեսական պատժամիջոցը և ինչպե՞ս է այն տարբերվում տնտեսական ճնշման այլ ձևերից:

Պատմական ակնարկ.

Տնտեսական պատժամիջոցները՝ որպես ներգործության գործիք, այնքան հին են, որքան պետությունը, քաղաքականությունը կամ պատերազմը: Առևտրատնտեսական հարաբերությունների առկայությունը, կախվածությունը տարատեսակ ապրանքներից և ծառայություններից պարարտ հող են ստեղծում մանի-

պուլյացիայի համար՝ նպատակամիտված քաղաքական նպատակների ձեռքբերմանը: Տնտեսական հարաբերություններին միջամտությունը և դրանց ճնշումը հայտնի է եղել ինչպես միջնադարում, այնպես էլ անտիկ շրջանում. դեռևս մ.թ.ա 432թ. տնտեսական պատժամիջոցները կիրառվել են Աթենական ծովային միության կողմից Պելոպոնեսյան միության մաս կազմող Մեգարա քաղաքի նկատմամբ՝ արգելելով այդ քաղաքին առևտրային հարաբերությունների մեջ մտնելու Աթենական միության հետ: Աթենական միության կողմից հետապնդած քաղաքական նպատակն էր կանխարգելելու աթենական փախստական ստրուկների մուտքը Մեգարա քաղաք, ինչպես նաև արգելելու մեգարացիների կողմից որոշակի հողերի օգտագործումը [**1**]: Աթենացիների կողմից կայացված տվյալ որոշումը պատմությանը հայտնի դարձավ որպես **«մեգարական պսեֆիզմա»**՝ դառնալով պատմության մեջ կիրառված ամենաառաջին տնտեսական պատժամիջոցներից մեկը:

Տնտեսական պատժամիջոցները, ունենալով բավականին երկար պատմություն, Միջնադարում հայտնի են եղել նաև «ռեպրեսալի» անվամբ: Միջազգային իրավունքում ռեպրեսալին (հին լատիներեն repressaliae՝ պահել, կասեցնել) տնտեսական և քաղաքական բնույթի իրավաչափ հարկադրական միջոցառումներ էին, որոնք կիրառվում էին մեկ պետության կողմից՝ ի պատասխան մեկ այլ պետության ոչ իրավաչափ գործողություններին: Չնայած իմաստային որոշակի նմանությանը տնտեսական պատժամիջոց հասկացությանը՝ արդի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական պայմաններում ռեպրեսալին կորցրել է իր արդիականությունը և իր տեղը զիջել պատժամիջոց եզրույթին: Միջնադարյան Եվրոպայում պատժամիջոցները ունեցել են հիմնականում տեղային և կարճատև բնույթ հարափոփոխ առևտրային և ռազմական դասավորությունների, ինչպես նաև առանձին գահակալների և ազդեցիկ մարդկանց շահերի փոփոխության պատճառով: Արդեն 19-րդ դ. տնտեսական պատժամիջոցների կիրառման հիմնական եղանակն էր ծովային շրջափակումները, որոնց նպատակը ուղղված էր կոնկրետ երկրի առևտրային հարաբերությունների խոչընդոտմանը և/կամ արգելմանը այլ երկրների հետ՝ **առանց տվյալ երկրին պատերազմ հայտարարելու**: 1827-1914 թթ. ընկած ժամանակահատվածում իրականացվել է շուրջ 21 ծովային շրջափակում, որոնց հիմնական կազմակերպիչներից են եղել Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան [**2**]: Միջնադարում միակողմանի սահմանափակող գործողությունները իրականացվում էին նաև եկեղեցական իշխանությունների կողմից ընդդեմ մահմեդականների. արգելվում էր նրանց վաճառել նավեր, զենք, զինամթերք և այլ ապրանքներ [**3**]:

Ներկա ժամանակներում տնտեսական պատժամիջոցների առավել լայն կիրառությունը պայմանավորված էր տնտեսական հարաբերությունների զարգացմամբ, արտադրության զանգվածայնացմամբ, ինչպես նաև միջազգային տնտեսական հարաբերությունների ձևավորմամբ:

Սահմանման հիմնահարցերը.

Երկար ժամանակ բանավեճեր են ընթացել «տնտեսական պատժամիջոց» հասկացության վերաբերյալ համապարփակ սահմանում կերտելու ուղղությամբ. դրանց նպատակն էր այդպիսի սահմանման միջոցով տվյալ հասկացությունը տարբերակել միջազգային ոչ ռազմական հարկադրանքի մյուս ձևերից և դրանով իսկ նույնականացնել այս հասկացության հիմնական հատկանիշները: Այսպիսով, մինչ օրս բազմաթիվ հարակից հասկացություններ են գործածվել՝ մատնանշելու համար միևնույն երևույթը՝ **տնտեսական ագրեսիա, տնտեսական պատերազմ, տնտեսական հարկադրանք, էմբարգո**: Այնուամենայնիվ, անկախ այն հանգամանքից՝ արդյոք տվյալ եզրույթի գործածումը միշտ տեղին է եղել, և արդյոք բոլոր գործածություններն են փաստացիորեն ի նկատի ունեցել միևնույն երևույթը՝ «տնտեսական պատժամիջոց» հասկացությունը լայն կերպով գործածվել է 1990-ական թթ. սկսած՝ որպես ընդհանուր պիտակ մատնանշելու ազգային տնտեսությունների նկատմամբ իրականացվող հարկադրական միջոցառումները: Տվյալ աշխատանքում կգործածվի միայն տվյալ եզրույթը շփոթությունից խուսափելու նպատակով:

Այնուամենայնիվ, անհրաժեշտ է անդրադառնալ տնտեսական պատերազմ և տնտեսական պատժամիջոց հասկացությունների միջև առկա որակական տարբերություններին:

Ռոբերտ Պեյպը այս երկուսի տարբերակման հիմնական չափանիշն է համարում քաղաքական նպատակի առկայությունը. **եթե պատժամիջոցները հետապնդում են քաղաքական նպատակներ, ապա տնտեսական պատերազմների իմաստը տնտեսական օգուտի մաքսիմալացումն է:** Երկու դեպքում էլ առկա է հարկադրանք, սակայն տնտեսական պատերազմի հետապնդած նպատակը առևտրի և արտադրության տնտեսապես ձեռնտու պայմանների ստեղծումն է, իսկ տնտեսական պատժամիջոցների պարագայում մասնակիցները, հետապնդելով քաղաքական նպատակներ, հաշվի չեն նստում տնտեսական կորուստների հետ [**4**]: Տնտեսական պատերազմ եզրույթի դասական սահմանումը տվել է Գ. Ջոնսոնը, այն է՝ մեկ կամ ավելի երկրների միջև կոնֆլիկտ, որի շրջանակներում կողմերը տնտեսական հարաբերություններում ձեռք են բերում առավելություն երկկողմանի առևտրի ժամանակավոր սահմանափակման հաշվին [**5**]: Ինչպես տնտեսական պատժամիջոցները, այնպես էլ տնտեսական պատերազմները նոր երևույթ չեն. դրանք կարելի է գտնել 14-17-րդ դդ.՝ Հանզայական միության, Անգլիայի և Նիդերլանդների միջև տնտեսական պատերազմները, որոնք արդյունքում վերաճեցին ռազմական բախման [**6**]:

Համաշխարհայնացման ներկայիս գործընթացների շրջանակներում պետությունները առավելագույնս ձգտում են մեծացնել սեփական առևտրի արդյունավետությունը տարիֆային քաղաքականության, արտահանման և ներմուծման քվոտաների, ոչ տարիֆային սահմանափակումների (տեխնիկական ստանդարտներ, նորմատիվ որակներ, մաքսային ընթացակարգեր) գործիքների կիրառման միջոցով: Այնինչ, տնտեսական պատժամիջոցների կիրառման ժամանակ կիրառվում են որակապես տարբերվող գործիքներ՝ ամբողջական կամ մասնակի արգելանք առանձին ապրանքների ներմուծման և արտահանման վրա, ֆինանսական գործարքների վրա, ակտիվների սառեցում և բռնագանձում, կոնկրետ երկրների, ընկերությունների և անձանց հետ գործարքներ կատարելու արգելք: Նպատակայնությամբ պայմանավորված տարբերությունը ինքնակնհայտ է՝ տնտեսական պատերազմների մասնակիցների կողմից հետապնդված հիմնական նպատակն է սեփական ազգային բիզնեսի զարգացման համար անհրաժեշտ միջավայրի ստեղծումը և դրա պահպանումը, իսկ տնտեսական պատժամիջոցներ կիրառողների կողմից հետապնդած նպատակը պետք է հանգեցնի ներդրողների կողմից թիրախ հանդիսացող պետության նկատմամբ վստահության կորստին:

Տնտեսական պատժամիջոցների և տնտեսական պատերազմների մեկ այլ տարբերություն էլ պայմանավորված է արդյունաբերական և առևտրային լոբբիով: Տնտեսական պատերազմներում մեծ է բիզնես հետաքրքրությունը, հենց գործարար հատվածն է հանդես գալիս որպես ակտիվ դերակատար և նախաձեռնող՝ առաջարկելով պետական կառավարման ապարատին այս կամ այն որոշումները. տնտեսական պատերազմներ սկսելու հրահրողներից է համարվում հենց բիզնեսը: Տնտեսական պատժամիջոցների դեպքում առաջատար դերը պատկանում է պետական կառավարման ապարատին՝ գործադիր և օրենսդիր իշխանություններին, իսկ գործարար հատվածը հանդես է գալիս որպես չեզոք դերակատար՝ ստիպված լինելով համակերպվել տնտեսական պատժամիջոցներին. բիզնեսը կարող է բողոքարկել, ջանքեր գործադրել դրանց չեղարկման համար, սակայն չի համարվում նախաձեռնող [**7**]:

Տնտեսական պատժամիջոցների և տնտեսական պատերազմների պարագայում հաղթանակի առավել շատ հնարավորություն ունեն խոշոր խաղացողները, սակայն տնտեսական պատերազմներում ոչ այդքան էլ հազվադեպ հաղթողի դերում հենց փոքր խաղացողներն են [**8**]:

Տնտեսական պատժամիջոցների բարդությունը և բազմաբովանդակությունը պայմանավորել են տվյալ երևույթի նկատմամբ սահմանումների բազմազանությունը:

Ներկայացնենք դրանցից մի քանիսը.

- Տնտեսական պատժամիջոցները տընտեսական բնույթի հարկադրական միջոցառումներ են՝ ձեռնարկված ընդդեմ մեկ կամ մի քանի երկրների՝ հարկադրելու փոփոխություններ կատարել քաղաքականությունում կամ առնվազն ցուցադրել պատժամիջոց կիրառող երկրի տեսակետը

այլ քաղաքականությունների վերաբերյալ [**9**]:

- Միջազգային (տնտեսական) պատժամիջոցները տույժեր են, որոնք հարկադրվում են որպես հայտարարված հետևանք, երբ թիրախ պետությունը ձախողում է պահպանել միջազգային չափանիշները և միջազգային պարտավորությունները [**10**]:
- Տնտեսական պատժամիջոցները կառավարության կողմից ձեռնարկված կանխամտածված գործողությունների ամբողջություն է՝ ուղղված առևտրային և ֆինանսական ավանդական հարաբերությունների դադարեցմանը կամ դադարեցման սպառնալիքին [**11**]:
- Տնտեսական պատժամիջոցները թիրախ պետության առևտրաֆինանսական հարաբերությունների սահմանափակման համակարգված գործողությունների ամբողջություն է՝ նպատակամիտված վատթարացնելու թիրախավորված տարածքի ներսում տնտեսական կյանքը՝ հանգեցնելով քաղաքական որոշակի փոփոխությունների:

Первые переселения восходят ко временам Персидских Аршакидов. Вот что пишет по этому поводу летописец-католикос (898-929) Ованнес Драсханакертци: «*С тех пор, как Хосров утвердился в царстве Персидском, храбрый Смбат Багратуни дал множество страшных сражений всем его врагам и в мужественном ратоборстве одолел и изгнал всех противников его. Хосров был изумлен, и Смбат навечно стал угоден его очам. Почтив его множеством подношений и даров, он дал ему и марзпанство Врканское. Достигнув той страны, Смбат обнаружил там поколение пленных армян, поселившихся у великой пустыни туркестанской стороны, которая зовется Сагастан*[54].

Они позабыли свой язык, а письменность вовсе пришла в упадок. Увидев Смбата, они весьма обрадовались и по его повелению, начав вновь учиться армянскому произношению слогов, обновили язык, обучились письменности и утвердились в вере. Тогда великий патриарх наш Мовсес повелел поставить над ними епископом некоего иерея из них же, по имени Абэл. Созданный, таким образом, удел великого престола святого Григория существует и поныне». [**9**, стр. 80-81].

Второе большое переселение было осуществлено Ленгтемуром в XIV в. [**5**]. Из Агванка было переселено такое внушительное число армян, что послужило поводом к появлению легенды о происхождении названия Афганистан от Агванка [**1**, стр. 244; **8**, стр. 67], а так же научных версий [**11**, стр. 205-206; **12**, стр. 71]. В тот период армяне были расселены в основном в Кабуле[55] и Кандагаре[56]. Сохранилось множество свидетельств и упоминаний, об армянском происхождении одного из племенных объединений пуштунов (афганцев) – гильзаи[57] [**6**, стр. 253], занимающего, по своей роли в стране, второе место после дуррани. Хотя гильзаи по вероисповеданию являются мусульманами-суннитами у них сохранялись традиции свойственные армянам-христианам, например, освящать крестным знамением больного или тесто, оставлять крестные знаки на местах поломничества и т.д. [**6**, стр. 1].

В XVII в. армянские колонии в Кабуле и Кандагаре (1670-е годы) процветали. [**18**, стр. 187].

В XVIII в. община Кабула неоднократно пополнялась со стороны афганских правителей насильственными переселенцами из Исфахана [**1**, стр. 246; **4**, стр. 2-3, **17**, стр. 198], а затем англичанами из Лахора в 1775 г., и достигает численности ок. 150 домов [**1**, стр. 248].

---

[54] **Сагастан** {Сакистан, чаще Систан (перс. سیستان)} – историко-географическая область на юго-востоке Ирана и юго-западе Афганистана. Западный Систан является частью иранской провинции (остана) Систан и Белуджистан, тогда как восточный – афганской провинции Нимроз. В широком смысле к нему относят большую часть Афганистана

[55] **Кабул** (пушту کابـــل; дари کابـــل; англ. Kabul) – столица Афганистана.

[56] **Кандагар** (пушту کنـــدهار; дари قنـــدهار; англ. Kandahar) – город, административный центр одноименной провинции.

[57] **Гильзаи** (пушту غلزی), гарзаи (пушту غرزی) или гильджи (пушту غلجي) – самоназвание одного из племенных объединений пуштунов. Говорят на восточном диалекте пушту. Населяют обширную, преимущественно гористую территорию на востоке Афганистана, главным образом в районах Калат-и-Гильзаи и Газни.

В письме ходжи Мкртума Тифлисского вардапету Гукасу от 12 сентября 1763 г. с тревогой сообщается о том, что во время его путешествия видел «*армян христиан в Кандагаре, Кабуле и Бухаре у которых нет ни настоятеля ни епископа*». [**5**, стр. 553].

На рубеже XVIII и XIX вв. общины тают. Об этом узнаем благодаря тому, что ряд британских исследователей и путешественников останавливались у кабульских армян, включая Д. Форстера (1793) [**13**, стр. 64] Э. Стирлинга (1828) [**18**, стр. 322], Ч. Массона (1832) [**15**, I, стр. 237] и Д. Вулфа (1832) [**19**, стр. 225]. Так в Кабуле численность армян сократилась до 30-40 домов [**1**, стр. 250].

В XIX в. в Кабуле упоминается о двух десятках армян (в 1870 г. в Кабуле оставалось 18 армян) [**17**, стр. 208] , а в конце века – еще о 325 армянах [**16**, стр. 241] живущих в некоем селении Газ-хан[58] на границе с Китаем (рядом сохранился ойконим Хаз-гет[59]).

В 1896 г. эмир Афганистана Абдул Рахман-хан (пушту عبد رحمان خان), направил письмо к армянам Калькутты с приглашением перехать в Кабул. Благо лишь двое искателей приключений откликнулись на приглашение [**17**, стр. 188]. Но уже в следующем, 1897 г., с подачи султана Абдул Гамида II, все армяне были изгнаны из страны осев в Пешаваре, куда привезли множество древних рукописей [**17**, стр. 189].

Ныне в Афганистане проживает несколько армян.

Церковь.

Армяне Афганистана на протяжении веков массово принимали мусульманство, а начиная с XVIII века уже и католичество. Так продолжалось до 1763 г., когда католикосом был избран Симеон Ереванский (1763-1782). Кондаком новоизбранного католикоса Эчмиадзина афганское армянство было переподчинено Агванскому католикосату. В том же году а в Афганистан был послан инок Анания для сплочения общины, преподавания родного языка и письменности [**1**, стр. 246-247]. Кроме того, иноку Анания было поручено в местах со значительным числом армян, строить церкви и рукоположить настоятелей. Однако посланец не доехав скончался [**5**, стр. 553; **1**, стр. 248].

До того, лишь в Кабуле в 1737 г. в крепости Балла-Хиссар[60] была построена церковь [**6**, стр. 253], которая была разрушена по приказу английского генерала Робертса весной 1880 г. во время Второй англо-афганской войны (1878-1880). Несмотря на обещание генерала Робертса выделить общине новое здание, община так и не получила от англичан никакой компенсации. В 1879 г., буквально перед разрушением церкви преподобный Имам Шах, первый "местный" англиканский священник церкви Всех Святых в Пешаваре, посетил кабульскую общину, где совершил Святое Причастие и крестил восьмерых армян, в том числе взрослых [**14**, стр. 456]. Благодаря сохранившейся книги крещений миссии в Пешаваре, нам известны даты рождения крестимых, их имена, а так же имена их родителей и крестных. (Подробнее см. в главе Пакистан).

Есть также упоминания о том, что еще две церкви были построены, фактически первым предводителем общины Григором Санаинским, посланным вслед за первым иноком в 1764 г. [**2**, стр. 4], но увы где они были построены нам не известно. О самом же Григории известно, что он давольно долго прожил в Афганистане и умер по дороге в Бухару [**1**, стр. 248].

В дальнейшем, уже в XIX в., церкви были переподчинены епархии ААЦ “Ирана и Индии” [**7**].

В современный период, в Кундузе[61] основана часовня для армянского контингента в составе Международных сил содействия безопасности (англ. International Security Assistance Force; ISAF) возглавляемых НАТО.

Организации. **Образование**. **СМИ**.

Об образовательных учреждениях сведений не имеется.

Каких либо организаций и периодики не было.

Разное.

Примечательно, что в начале XIX в. на некоторых монетах, а именно на афганской могуре (золотой) и афганской рупии (серебряной), чеканки времен первого правления Шуджа-Шаха Дуррани[62], он упоминается как армянин [**3**, стр. 111].

---

[58] **Газ-хан** (англ. Gaz Khan) – армянонаселенный высокогорный аул в области Вахан (англ. Wakhan или Vakhan; перс. и пушту. واخان, тадж. Вахон) провинции Бадахшан (дари بدخشـــان; англ. Badakhshan). Координаты аула: 37°01'06" N 72°41'27" E. По сути, в этом селении должно быть кладбище или хотя бы отдельные захоронения, но увы сведений не имеется.

[59] **Хазгет** (англ. Khazget; арм. Խազգէտ) – высокогорный аул в области Вахан провинции Бадахшан на реке Памир.

[60] В обиходе научной литературы многократно повторяется неточность. Балла-Хиссар (англ. Bala Hissar) – это не улица, а крепость. Соответственно Джелелабадскими назывались не крепость, а ворота. Сравни [**1**, стр. 247; **3**, стр. 111].

[61] **Кундуз** (дари کندوز Konduz, узб. كندوز) – город и административный центр одноимённой провинции на севере Афганистана.

[62] **Шуджа-Шах Дуррани** (англ. Inayat e Illahi Sultan Shuja Shah Abdali Durrani) (4.11.1785 - 5.04.1842, Кабул) – правитель Дурранийской империи (1803-1809; 1839-1842).

Таблица-перечень памятников архитектуры и топонимики в Афганистане

н/н	Объект	Наименование	Адрес и контакты	Годы	Вид
1.	церковь	армянская	Рядом с Джелелабадскими воротами крепости Балла-Хиссар, **Kabul**	1737 Уп. 1842 Снесена в 1880 г.	
2.	кладбище	армянское	За Джелелабадскими воротами крепости Балла-Хиссар, **Kabul**	XVII-XIX вв.	
3.	церковь	?	**Kandahar**	1760-е	
4.	кладбище	армянское	**Gaz Khan**	XIX в.	
5.	*аул*	Хазгет	**Khazget**		
6.	часовня	армянская	**Qunduz**	24.07.2010	

Список использованной литературы

1. **Աբրահամյան Ա. Գ.** Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության: Հ. Բ: *Հայերը Աֆղանստանում,* էջեր 244-254: – Եր.: Հայաստան հրատարակչություն: 1967: 424 էջ:
2. **Երիցեանց Աղէքսանդր** Հնից եւ նորից (Նյութեր ազգային պատմության համար): 1. *Աֆղանստանի Էմիրի հայերը*: Էջեր 3-4: // «Արձագանք» գրականական եւ քաղաքական շաբաթաթերթ: – Թիֆլիս: Տասնեւհինգերորդ տարի, № 86, 28 յուլիսի 1896:
3. **Հայ Սփյուռք** հանրագիտարան: *Աֆղանստան*, էջ 111: – Եր.: Հայկ. հանրագիտարան. հրատ. 2003: - 732 էջ:
4. ՀՀ ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվ, № 63 (*Աֆղանստան*):
5. [**Սիմէոն կաթողիկոս Երեւանցի**] Սիմէոն կաթուղիկոսի Ցիշատակարանը (1763-1767) / «Դիւան հայոց պատմութեան», հատոր Գ: Կենսագրութեամբ եւ յաւելուածներով ու ծանօթութիւններով հրատարակեց Գիւտ քահ. Աղանեանց: - Թիֆլիս. Տպ. Մ. Շարաձէ, 1894: - 892 էջ:
6. Քաբուլի հայերը: Էջեր 253-256: // «Արձագանք» գրականական եւ քաղաքական շաբաթաթերթ: – Թիֆլիս: Վեցերորդ տարի, № 17, 17 մայիսի 1887:
7. **Քրիստոնյա Հայաստան** հանրագիտարան: *Իրանա-Հնդկաստանի թեմ*, էջեր 405-407:– Եր.: Հայկ. Հանրագիտարան. հրատ., 2002: – 1076 էջ:
8. **Броневский С. М.** Историческия выписки о сношениях России с Персиею, Грузиею и вообще с горскими народами, на Кавказе обитающими со времен Ивана Васильевича доныне. РАН. Институт востоковедения СПб. 1996.
9. **Ованес Драсханакертци**, История Армении. / Перевод с древнеармянского, вступление и комментарии М.О. Дарбинян-Меликян. – Ер., 1984.
10. **Allen, Rev. I.N.** Diary of a March through Sinde and Afghanistan. – London. 1843.
11. [**Bellew, H. W.**] An Inquiry Into the Ethnography of Afghanistan, prepared for and presented to The Ninth International Congress of Orientalists (London, september, 1891,) by H. W. BELLEW, C.S.I., *Surgeon-General, Bengal Army*. (Retd.) The Oriental University Institute, Woking. 1891. – 212 pp.
12. [**Dorn, Bernhard**] History of The Afghans: Translated From The Persian of Neamet Ullah, by BERNHARD DORN, Ph.D. for. M.R.A.S., M.T.C. and Professor of Oriental Literature in the Imperial Russian University of Kharkov. – London: Printed for the Oriental Translation Fund of Great-Britain and Treland, and sold by A.J.Valpy, Red.Lion Court. M. DCCC. XXXVI. (1836).
13. **Forster, George**, A Journey from Bengal to England through the northern part of India, Kashmir, Afghanistan and Persia. 2 vols. – London. 1808.
14. [**Hughes, Thomas P**.] Twenty Years on the Afghan Frontier, By **Thomas P. Hughes**, D. D., Author of The Dictionary of Islam. // «The Independent» volume 45. – New York. Part I (Apr. 6, 1893), pp. 3-4 (455-456).
15. **Masson, Charles**, Narrative of various Journeys in Baluchistan, Afghanistan, and the Panjab, 3 vols. – London. 1842.

16. [**Ravliston, Major-Gen. sir Henry**] England and Russia in the East. A Series of Papers on the Political and Geographical Condition of Central Asia. By Major-Gen. sir HENRY RAVLISTON, K.C.B., F.R.S., President of the Royal Geographical Society, and Member og the Council of India. (Formerly Envoy and Minister at the Court of Persia.) With map. – London: John Murray, Albemarle Street. 1875. – 394 pp+map.
17. [**Seth, Mesrovb Jacob**]. Armenians in India, from the earliest times to the present day. By **Mesrovb Jacob Seth**. – New Delhi-Bombay-Calcutta, Oxford & IHB Publishing Co., 1983. CHAPTER XVI. ARMENIANS AT KABUL. Pp. 207-209.
18. **Stirling, Edward** The Journals of Edward Stirling in Persia and Afghanistan, 1828-1829, ed. J.L.Lee, IsMEO. – Naples, 1991.
19. **Wollf, Rev. Joseph**, Researches and various Missionary Labours amongst the Jews, Mohammedans and other Sects. – London: Nisbet & Co., 1835. Reprints: Philadelphia, O. Rogers, 1837.

Пакистан (урду پاکستان; англ. Pakistan), официальное название **Исламская Республика Пакистан** (урду پاکستان یـٔجمہور ی اسلام; англ. Islamic Republic of Pakistan) – государство в Южной Азии. Пакистан возник в результате раздела территории Британской Индии. Столица Исламабад. Государство разделено на 4 провинции, 1 федеральную столичную территорию и 2 территории Кашмира, административно подчиненных Пакистану. Провинции делятся на 131 округ – зила (урду ضلع,). Федеральная территория племён делится на 7 племенных управлений и 6 пограничных регионов.

История. **География**.

На территории современного Пакистана армяне появились как минимум в средневековье [**4**, стр. 320-321]. Однако сведения о времени возникновения общин отсутствуют.

В XVI в. (во времена империи Моголов) в Лахоре уже имелась довольно большая община. На караванных путях близ города Зиарат были обнаружены наскальные лапидарные надписи торговцев из Джульфы относящихся к XVI в. [**3**].

В самом начале XVII в., об армянской общине в Лахоре, летней столице могольских императоров нам сообщает испанский миссионер-иезуит отец Жером Ксавьер пишущий из Агры 6 сентября 1604 года: «… *более бедные армяне в Лахоре зарабатывают на жизнь, продавая вина, из-за чего они часто попадают в беду, поскольку вице-король ненавидит эту профессию (хотя сам он хорошо пьёт)*… ». Он же, уже в письме из Лахора от 25 сентября 1606 года, сообщает, что во время беспорядков из-за восстания принца Хусру сына Джахангира, армянские купцы хранили свои товары в его доме. В том же десятилетии, со стороны могольского губернатора Лахора над общиной, как и над всеми христианами нависла угроза уничтожения. По словам другого иезуитского священника отца Пинхиэйро: «*12 августа 1609 двадцать три армянских купца, не желая стать мучениками, бежали из города со своими семьями*» [**7**, стр. 201]. Однако, вскоре положение настолько стабилизировалось, что должность губернатора Лахора в разное время занимали этнические армяне – Мирза Искандар (англ. Mirza Iskandar) и его сын Мирза Зул-Карнаин (англ. Mirza Zul-Qarnain). Кроме того, известна армянская рукопись написанная в Лахоре в 1635 г., где предводителем был епископ Хачатур Джугаеци [**2**, стр. 32].

К началу XVIII в. относится упоминание голландским естествоиспытателем и исследователем Франсуа Валентином о наличии в Лахоре епископа ААЦ (10.12.1711) [**10**, vol. IV. стр.

283], что свидетельствует о наличии весьма не малой общины, впрочем как и о наличии культового строения [**7**, стр. 204-205].

Благодаря австрийскому миссионеру-иезуиту отцу Йозефу Тиффенталлеру, известно, что во время второго вторжения Ахмад Шаха в Пенджаб в 1755 г. из Лахора в Кабул было увезено несколько армянских мастеров-оружейников [**7**, стр. 207; **9**, стр. 41-48], а после третьего вторжения в 1757 г., армянский квартал Лахора, находящийся возле форта и окруженный стеной, армянские солдаты, служащие у **Ахмад-шаха** Дуррани (**Абдали**) во время разграбления города охраняли от остальных [**7**, стр. 204; **9**, стр. 41-48].

В благодарность **Ахмад-шаху** армянскими мастерами-оружейниками, под руководством мастера Шахназар-хана, была отлита известная пушка “Замзамах” (англ. “Zam-Zammah” gun; урду زمزمہ) [**6**, стр. 383-385; **7**, стр. 202-203; **8**]. Сам мастер был родом из Лайлу (ныне Ашоцк в Армении) умер 25.04.1784 г. и был похоронен на армянском кладбище в Агре [**8**, стр. 477].

В 1775 г. из Лахора в Кабул англичанами вновь были переселены многочисленные армянские мастера-оружейники [**1**, стр. 250].

Ко времени распада империи Моголов и в следствии афганских нашествий, община значительно поредела в связи с миграцией в более спокойные районы Индии.

В самом конце XIX в. (1897) изгнанные из Афганистана армяне осели в Пешаваре[63], куда привезли множество древних рукописей [**5**, стр. 189].

Ныне в Пакистане проживает ок. 200 армян, в основном сосредоточеных в Карачи[64].

Церковь. **Образование**.

Община как и единственная известная церковь на территории нынешнего Пакистана входили в состав епархии ААЦ “Исфахана и Индии”.

Сохранилась книга крещений (фото Джуда Галстяна) церкви англиканской миссии в Пешаваре, в которой можно увидеть имена 8 армян разного возраста, которых крестил настоятель миссии в Пешаваре преподобный Имам Шах в армянской церкви в Кабуле в 1879 г. [**5**].

Примечательно, что у каждого крещенного в графе Sposors name, по-видимому записаны крестные, но в каждом случае там значится по 3 человека: в 2-х случаях – 2 муж. и 1 жен., в остальных 6-и – наоборот, 1 муж. и 2 жен. Любопытно, что всего 8 человек поровну мужчин и женщин: *Айрапет Баба Джан*, Лука Сервудин, Сукиас Хидр Хан, Казар; *Агини Маргарита*, Хатун Джан, Мариам, Вартуи. Из коих Айрапет Баба Джан и Агини Маргарита, как видно из перечня крещенных с их родителями, являются супругами. Можно преположить, что и остальные, тоже являются супругами, но в каких парах разобрать не представляется возможным.

В графе Quality, trade or profession, напротив одного из крестных – Луки Сервудина (англ. Luka Sarvudin) значится следующая запись: "*Formerly suladar in the Amir's army*", что значит, что он был командиром арсенала Амир Абдул Рахман Хана (эмира Афганистана), а точнее командовал пороховыми заводами в Джелалабаде [**7**, стр. 213]. Необходимо отметить, что его настоящее армянское имя было Лука Овсепян (арм. Ղուկաս Հովսեփյան, англ. Lucas Joseph).



Перечень крещенных

10 августа

Вартуи, дочь Вартана и Мариам, род. 23.12.1837

Карзар, сын Андреаса и Вартуи, род. 03.1858

Орумпасима, дочь Андреаса и Вартуи, род. 14.06.1855

Вартан, сын Айрапет Баба Джан и Маргарит, род. 31.01.1867

24 августа

Хатунджан, дочь Ягут и Апариана, род. 02.1844

Искуи, дочь Ягут и Апариана, род. 4.03.1850

Маргарит, дочь Ягут и Апариана, род. 1853

Таскини, сын Айрапет Баба Джан и Маргарит, род. 16.06.1877

Организации. **СМИ**.

Какие-либо организации, равно как и средства массовой информации отсутствуют.

Разное.

Пакистан – одно из нескольких государств, не признавшее Республику Армения. В свою очередь Армения признаёт Кашмир неотъемлемой частью Индии.

---

[63] **Пешавар** (пушту. پښــورپ; урду پشــاور; санскр. पुरुषपुर; англ. Peshāwar) – город, административный центр провинции Хайбер-Пахтунхва.

[64] **Карачи** (урду ىكـراچ; синдхи ڪراچي; англ. Karachi) – город, административный центр провинции Синд.

Таблица-перечень памятников архитектуры и топонимики в Пакистане

№	Объект	Наименование	Адрес и контакты	Год	Вид
1.	*квартал*	армянский	Находился возле форта и был окружен стеной, **Lahore**[1]	XVII в.	[**7**, стр. 204; **9**, стр. 41-48]
2.	церковь	?	**Lahore**	До 1711 г.	Не сохранилась [**7**, стр. 205]
3.	пушка	Замзамах	Находится на постаменте между факультетом изобразительных искусств Университета Пенджаб и Центральным музеем[2], Mall Rd. (Shahrah-e-Quaid-e-Azam), **Lahore**	1757	
4.	лапидарная надпись	круковая на персидском языке[3]	Находится вокруг ствола, **Lahore**		بامر دُر دوران شه ولی خان وزیر ساخت توپ زمزمه نام قلعه گیر عمل شاه نظر خان
5.	кладбище	армянское	**Lahore**	XVII-XVIII вв.	Не сохранилось вследствии неоднократных нашествий афганцев [**7**, стр. 201]
6.	надгробие	с армянского кладбища	В Центральным музее, **Lahore**	1601	Сохранялись в начале XX в. [**7**, стр. 202]
7.	надгробия	с армянского кладбища	В Центральным музее, **Lahore**		3 надгробные плиты сохранялись в начале XX в. [**7**, стр. 202]
8.	надгробие	Леди Джулиана, жена Мирза Искандара	В саду, **Lahore**	1598	Не сохранилось [**7**, стр. 205]
9.	мавзолей	Елены, жена Мирза Зул-Карнаина	В саду рядом с могилой свекрови, **Lahore**	09.1638	Не сохранился [**7**, стр. 205]
10.	надгробие	Мирза Зул-Карнаин	В саду на родовом кладбище рядом с могилой матери и мавзолеем жены, **Lahore**	1656	Не сохранилось [**7**, стр. 205]
11.	лапидарная надпись	четырехстрочная на армянском языке[4]	На скале, близ **Ziarat**[5]	XVI в.	
12.	лапидарная надпись	двухстрочная на армянском языке[6]	На скале, близ **Ziarat**	XVI в.	

Использованные шрифты: Raavi – пендж. Mangal – санскрит.

---

[1] **Лахор** (урду لاہور; англ. Lahore) – второй по величине город, столица провинции Пенджаб (пендж. ਪੰਜਾਬ ਖੇਤਰ; англ. Punjab).

[2] Центральный музей Лахора (англ. Central Museum). Основан в 1890 г.

[3] Надпись по-персидски вокруг ствола сохранила имя мастера – «*По приказу Императора Дурр-а-Дурран, шах Вали-Хан, Вазир, сделал это оружие по имени Замзамах, захватчик крепостей. Работа шаха Назар-хана*» [**6**, стр. 384; **8**, стр. 478]. Размеры пушки: длина - 4,38 м, внутренняя ширина ствола – 24 см. Первый раз пушка была использована в битве при Пинапате (англ. Pinapat) (14.01.1761).

[4] ՄՈՒՂՏԱՍԻ ՀԱԿՈԲԻ / ՈՐԴԻ ԸՆՈՒՍՏԱՄ, / ՕՐՆ և [ՅԻ]Շ/ԷՔ [**3**, стр. 205].

[5] **Зиярат** (урду زیارت; англ. Ziarat) – поселок, административный центр одноименного округа в провинции Белуджистан (урду. بلوچستان; англ. Balochistan).

[6] ԵՍ … Ի ՈՐԴԻ / ԱՍԼԱՆ [**3**, стр. 206].

Список использованной литературы

1. **Աբրահամյան Ա. Գ.** Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության: Հ. Բ: *Հայերը Աֆղանստանում,* էջեր 244-254: – Եր.: Հայաստան հրատարակչություն: 1967: 424 էջ:
2. **Ներսէսեան, Աւետիս**. Հնդկաստանի Լահոր քաղաքի մէջ 1635-ին գրուած Ոսկեփորիկ (Հաւաքածոյ) մը: Էջեր 29-32: // «Սիոն». Հայ ամսագիր կրօնական, գրական, բանասիրական, 1964, ԼԸ (1-2).
3. **Բասսել, Ջեյմս** Հայերեն երկու արձանագրություն Պակիստանի Ջիարաթ քաղաքից: Էջեր 205-207: // «Պատմա-բանասիրական հանդես», 1989, № 3:
4. **Абраамян Р.А.** Армянский путеводитель по Индии XII века. Стр. 317-328. // «Բանբեր Մատենադարանի», 1958, № 4.
5. **Forster, George**, A Journey from Bengal to England through the northern part of India, Kashmir, Afghanistan and Persia. 2 vols. – London. 1808.
6. [**Latif, Syed Muhammad**]. Lahore: Its History. Architectural Remains and Antiquities. With an Account of Its Modern Institutions, Inhabitants. Their Trade, Customs, &c. By **SYED MUHAMMAD LATIF**. Knan Banadur. Extra Judicial Assistant Commissioner, Gurdaspur, Fellow, Banjab University, & Member of the Bengal Asiatic Society. *Illustrated with more than 100 Engrvings and a map of Lahore*. – Lahore: Printed at the "New Imperial Press". 1892.
7. [**Seth, Mesrovb Jacob**]. Armenians in India, from the earliest times to the present day. By **Mesrovb Jacob Seth**. – New Delhi-Bombay-Calcutta, Oxford & IHB Publishing Co., 1983. CHAPTER XV. ARMENIANS AT LAHORE. Pp. 201-206. CHAPTER XVI. ARMENIANS AT KABUL. Pp. 207-209.
8. **Seth, Mesrovb Jacob**. The Zamzamah - An Eighteenth-Century Gun. pp. 477-479. // The Journal of the Royal Asiatic Society of Great Britain and Ireland. No. 3 (Jul., 1937). Published by: Cambridge University Press.
9. [**Tieffenthaler, Joseph**]. Des Pater **JOSEPH TIEFFENTHALER'S**, d.G.J. und apostol. Mißionarius in Indien, historisch-geographische BESCHREIBUNG VON HINDUSTAN. Ferner, des **HERRN ANQUETIL DÜ PERRON**, Mitglieds der Königl Akad. der Inschriften und K Translator der oriental. Sprachen zu Paris historische und chronologische Abhandlungen von Indien, und Beschreibung des Laufes der Ströme Ganges und Gagra, mit einer sehr großen Charte. Wie auch des **HERRN JACOB RENNELL'S**, ehnmaligen Ober: Ingenieur in Engl. Dienste zu Calcutta General : Charte von Indien, und dessen Charten von dem Laufe des Stromes Burramputer, und von der einländischen Schiffahrt in Bengalen, sammt dahin gehörenden Abhandlungen. Endlich noch verschiedene andere Zusätze und viele Anmerkungen des Herausgebers. Aus den lateinischen, französischen und englischen größtentheils ungedruckten Urschriften in Ordnung gebracht, und an das Licht gestellt von **JOHANN BERNOULLI** en Astronom und ordentl. Mitgliede der Königl. Akademie der Wissenschaften zu Berlin, auch der Kaiserl. Akad. zu S. Petersburg und mehreren Königl. und anderen gelehrten Gesellschaften Ehren Mitglied.Dritter und letzter Band. – BERLIN bey dem Herausgeber, 1787. Том 3. – 258 с.
10. [**Valentijn, François**]. Oud en Nieuw OOST-INDIËN, vervattende Een Naaukeurige en Uitvoerige Verhandelinge van NEDERLANDS MOGENTHEYD in die GEWESTEN, B ENEVENS Eenewydlustige Beschryvinge der MOLUCCOS, AMBOINA, BANDA, TIMOR, en SOLOR, JAVA, en alle de Eylanden onder dezelve Landbestieringen behoorende; het Nederlands Comptoir op SURATTE, en de LEVENS der GROOTE MOGOLS; ALS OOK Een Keurlyke Verhandeling van 't wezentlykste, dat men behoort te weten van CHOROMANDEL, PEGU, ARRACAN, BENGALE, MOCHA, PERSIEN, MALACCA, SUMATRA, CEYLON, MALABAR, CELEBES of MACASSAR, CHINA, JAPAN, TAYOUAN of FORMOSA, TONKIN, CAMBODIA ,SIAM, BORNEO, BALI, KAAP DER GOEDE HOOP en van MAURITIUS. Te zamen dus behelzende niet alleen eene zeer nette Beschryving van alles, wat Nederlands Oost-Indiën betreft, maar ook 't voornaamste dat eenigzins tot eenige andere Europeërs, in die Gewesten, betrekking heft. Met meer dan thien honderd en vyftig Prentverbeeldingen verrykt. Alles zeer naukeurig in opzigt van de Landen, Steden, Sterkten, Zeden der Volken, Boomen, Land en Zeê-dieren, met alle het Wereldlyke en Kerkelyke, van d'Oudste tyden af tot nu toe aldaar voorgevallen, beschreven, en met veele zeer nette daar toe vereyschte Kaarten opgeheldert. DOOR **FRANÇOIS VALENTYN**, Onlangs Bedienaar des Goddelyken Woords in AMBOINA, BANDA, enz. IN VYF DEELEN. Te {DORDRECHT, AMSTERDAM,} by {JOANNES VAN BRAAM, GERARD ONDER DE LINDEN} Boekverkooper M.DCC.XXIV. (1724) MET PRIVILEGIE.

Сдана/Հանձնվել է՝ 13.01.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 18.01.2020
Принята/Ընդունվել է՝ 20.01.2020

«Պայքար» պարբերականի համառոտ նկարագիրը

Սարգսյան Ս. Թ.
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, Հայաստան)
sargsyansuren@yandex.ru

Վճռորոշ բառեր՝ «Պայքար» թերթ, պարբերական, պատմություն, հրապարակախոսություն

Краткое описание газеты “Пайкар”

Саргсян С.Т.
Институт истории НАН РА (Ереван, Армения)
sargsyansuren@yandex.ru

Резюме: Выходящая в свет в разное время совокупность армянских периодических изданий является богатым источником и энциклопедией фактов нашей истории. В свою очередь, каждое периодическое издание, являясь частичкой целого, имело свою роль и свое слово. Опубликовано множество статей, посвященное более чем двух с половиной вековой истории армянской периодической прессы. Однако есть издания, история которых нуждается в освещении. Одним из таких изданий является официальный орган армянской Партии Рамкавар Азатакан в США – газета “Пайкар” (“Борьба”), историю которой можно разделить на четыре этапа: первый или предшествующий борьбе этап, когда газета выходила под названием “Дзайн Айреняц” (“Голос Родины”), а позднее под названиями “Азг” и “Паак”, а в результате их объединения – “Азг-Паак”; второй – американский или новый этап; третий – армянский этап и четвертый – америко-ливанский или новейший этап. Национальный, политический и литературный “Пайкар” и сегодня возносит свой голос во имя армянства, с достоинством осуществляет свою идеологическую миссию, на своих страницах поднимая разные актуальные и животрепещущте для народа проблемы.
Ключевые слова: газета “Пайкар”, периодическое издание, история, публицистика

Brief description of the newspaper “Paykar”

Sargsyan S.T.
Institute of history of NAS RA (Yerevan, Armenia)
sargsyansuren@yandex.ru

Abstract: The set of Armenian periodicals published at different times is a rich source and encyclopedia of the facts of our history. In turn, each periodical, being a part of the whole, had its own role and its own word. Many articles have been published on more than two and a half centuries of history of the Armenian periodical press. However, there are publications whose history needs coverage. One of these publications is the official organ of the Armenian Party of Ramkavar Azatakan in the USA - the newspaper “Paykar” (“Struggle”), the history of which can be divided into four stages: the first or previous stage of the struggle, when the newspaper appeared under the name “Dzayn Hayrenyats” (“Voice Homeland ”), and later under the names“ Azg ”and“ Pahak, ”and as a result of their association,“ Azg-Pahak ”; the second is an American or a new stage; the third is the Armenian stage and the fourth is the US-Lebanese or the latest stage. The national, political and literary “Paykar” today raises its voice in the name of the Armenians, carries out its ideological mission with dignity, raising on its pages various topical and burning problems for the people.
Keywords: newspaper “Paykar”, periodical, history, journalism

Այն հանրահայտ ճշմարտությունը, որ մամուլը ժամանակի և կյանքի հայելին է, լիովին վերաբերում է նաև հայ իրականությանը: 1794 թ. սկսած՝ հայ ժողովրդի կյանքում աստիճանաբար կարևոր դերակատարություն ստանձնող մամուլը հետագայում ոչ միայն դարձավ դրա անբաժանելի մասը, այլև շատ դեպքերում վերածվեց հասարակական-քաղաքական և գաղափարական վճռական գործոնի: Հատկապես ազգային-ազատագրական պայքարի և դրան հաջորդող տասնամյակներում մամուլը դարձել էր այն կարևորագույն հարթակը, որտեղ բախվում, քննարկվում, բայց ի վերջո նաև բյուրեղանում էին տարբեր գաղափարախոսություններ:

Հայկական առաջին՝ «Ազդարար» պարբերականից հետո, աշխարհի տարբեր երկրներում լույս են տեսել շուրջ չորս հազար անուն հայերեն և տարբեր լեզուներով հայեցի դիմագիծ ունեցող պարբերականներ [**1**]: Հայ ժո-

ղովրդի ճակատագիրն իր կնիքն է դրել լրագրության բնույթի վրա: Հայ մամուլի երկուհարյուրքսանհինգամյա պատմության ընթացքում լույս են տեսել ինչպես քիչ հայտնի, երբեմն թիթեռնիկի կյանք ունեցող, այնպես էլ երկարակյաց, ծանրակշիռ, ասելիքով տարողունակ և այդ գործընթացների վրա վճռական ազդեցություն ունեցող պարբերականներ: Դրանցից էին Մխիթարյանների, 1830-50-ական թթ. արևմտահայ, XIX դարի երկրորդ տասնամյակին ծնված և հետագայում հրատարակված արևելահայ մեծ թվով պարբերականները: Մասնավորապես 1860-80-ական թթ. լույս տեսած Ստ. Նազարյանցի, Հ. Սվաճյանի, Գր. Չիլինկիրյանի, Հ. Պարոնյանի, Ա. Հովհաննիսյանի և մյուսների հրատարակած պարբերականները: Անշուշտ, այս ոսկեբույլում հայ ժողովրդին դարավոր ընդարմացումից հանելու գործում իրենց անգնահատելի դերակատարությունն ունեցան Գր. Արծրունին իր «Մշակ»-ով՝ արևելահայ և Մ. Փորթուգալյանն իր «Արմենիա»-ով՝ արևմտահայ կյանքում: Պարբերականներ, որոնք, հիրավի, դարակազմիկ երևույթ էին հայ պարբերական մամուլի ողջ գոյության ընթացքում [**2**]:

Տարբեր ժամանակներում լույս տեսած հայ պարբերականների ամբողջությունը նաև մեր պատմության համար առատ կենսաղբյուր է, փաստերի շտեմարան: Իսկ յուրաքանչյուր պարբերական, լինելով այդ ամբողջի մասնիկը, նաև իր դեմքն ու գույնն ունի, ասելիքն ու դերակատարութունը: Անկասկած, դրանց թվում են նաև հայ հասարակությանն անփոխարինելի ծառայություն մատուցած կուսակցական պարբերականները, որոնք, հաղթանակի նկատմամբ անսասան հավատ ներշնչելով, նախ՝ազատագրական պայքարի ոգեկոչեցին հայությանը, իսկ այնուհետև լծվեցին հայապահպանության սրբազան գործին:

***

Սփյուռքահայ մամուլի մասին մեծաքանակ ուսումնասիրություններ են հրապարակվել[1], սակայն դեռևս կան զգալի թվով պարբերականներ, որոնց պատմությունը կարոտ է լուսաբանման: Ընդհանրապես մամուլի մասին խոսելիս մենք սովորաբար նշում ենք դրանց ստեղծման թվականը, վայրը, խմբագրերի անունները: Այնինչ զուտ մատենագիտական այդ տվյալներից ավելի կարևոր է գաղափարախոսական ու թիրախային ասելիքը, որը սփյուռքահայ երկարակյաց թերթերի պարագայում կուսակցական, համայնքային կամ անհատական կենսագրությունից բացի նաև ազգի, հայրենիքի ու պետության կենսագրությունն է արձանագրում:

Դրանցից մեկը Ռամկավար ազատական կուսակցության Ամերիկայի շրջանակի պաշտոնական օրգան, ազգային, քաղաքական և գրական «Պայքար» թերթն է, որի պատմությունը կարելի է բաժանել **չորս փուլերի:**

Առաջին կամ **նախապայքարյան շրջան՝** երբ թերթը լույս է տեսել «Ձայն հայրենյաց» [3], ապա՝ «Ազգ» և «Պահակ»[2] և սրանց միավորումից հետո՝ «Ազգ-Պահակ» անուններով: 1899 թ. Գարեգին Չիթճյանը և Մխո Շահենը Նյու Յորքում սկսում են հրատարակել «Ձայն Հայրենյաց» անունով թերթ, որը Հայկակ Էկինյանն էր փոխանցել իրենց: Կարճ ժամանակ անց թերթը Նյու Յորքից փոխադրվում է Ուստր, որտեղից էլ՝ Բոստոն, որն այդ օրերին աստիճանաբար սկսել էր դառնալ ամերիկահայության կարևոր օրրանը:

Մխո Շահենի թերթից հեռանալուց հետո, Գ. Չիթճյանը թերթը դարձնում է Վերակազմյալ հնչակյան կուսակցության պաշտոնաթերթը: Հետագայում կուսակցության պառակտումների և եղբայրասպան ցավալի իրադարձությունների հետևանքով «Ձայն Հայրենյացը» դադարում է լույս տեսնել: Այդ պատճառով վերակազմյալները Բոստոնում հիմնում են «Ազգ» շաբաթաթերթը, այն նկատելով իբրև «Ձայն Հայրենյացի» շարունակություն: Իսկ

[1] Այդպիսիք բավականին շատ են և աշխատանքն ավելորդ չծանրաբեռնելու նկատառումով ձեռնպահ կմնանք դրանք թվարկելուց:

[2] Գրական, քաղաքական եռօրյա **«Պահակ»** (1911-1915 թթ.՝ շաբաթաթերթ) պարբերականը Վերակազմյալ հնչակյան կուսակցության Ամերիկայի շրջանակի պաշտոնաթերթն էր: Լույս է տեսել 1911-1921 թթ.՝ Բոստոնում (1911, 1916-1921) և Պրովիդենսում (1912-1915): Խմբագիրներ՝ Հ. Երվանդ, Ա. Տեր-Մարկոսյան, Վ. Քյուրքճյան, Ե. Մեսիայան: Անդրադարձել է Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականությանը, մերկացրել երիտթուրքերի պանիսլամիզմը, նրանց հայահալած գործելակերպը: «Պահակը» ողջունել է խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում: 1921 թ. միացել է «Ազգ»-ին և շարունակվել իբրև «Ազգ-Պահակ»: 1921 թ. լույս է ընծայել բացառիկ (տարեգիրք) հրատարակություն՝ գրական-բանասիրական, պատմագիտական բովանդակությամբ:

1908 թ. սկսում է լույս տեսնել որպես Հայ Սահմանադրական Ռամկավար կուսակցության Ամերիկայի շրջանակի պաշտոնաթերթ [**4**]:

1911 թ. նույն Բոստոնում սկսում է լույս տեսնել Վերակազմյալ հնչակյանների մեկ այլ՝ «Պահակ» շաբաթաթերթը, որն էլ 1921 թ. միանում է «Ազգին»: Որոշ ժամանակ թերթը լույս է տեսնում «Ազգ-Պահակ» միացյալ անունով, իսկ 1922 թ. արդեն՝ «Պայքար» անունով: 1922-1980 թթ. թերթը լույս է տեսել Բոստոնում, ապա Ուոթրթաունում և կրկին Բոստոնում: Տարբեր տարիներին թերթի գլխավոր խմբագիրներ են եղել Ա. Նազարը, Ե. Մեսիայանը, Հ. Երվանդը, Ա. Փոլատյանը, Ա. Անդրեասյանը, Ն. Պերպերյանը:

Երկրորդ՝ ամերիկյան կամ **նոր շրջան**: Թերթն այս ընթացքում ակտիվորեն լուսաբանել է ամերիկահայ, ինչպես նաև սփյուռքի այլ գաղթավայրերի ազգային, կրթական, մշակութային կյանքը, արձագանքել ընդհանրապես հայությանը հուզող խնդիրներին՝ փաստորեն դառնալով XIX դարի վերջին և XX դարի ութ տասնամյակների ամերիկահայ կյանքի հայելին ու յուրակերպ տարեգիրը: Շուրջ մեկ դար դրվատելի որակով և բարձրարժեք հրապարակումներով ծառայելով Ամերիկայի Արևելյան ափի հայությանը՝ թերթը միաժամանակ իր աշխույժ գործունեությամբ ու հրատապ ասելիքով ներդաշնակ համագործակցում էր կուսակցության մյուս պաշտոնաթերթերի հետ: «Պայքարը» մշտապես ու անխաթար քարոզել է ՌԱԿ գաղափարախոսությունը, մերժելով կեղծիքն ու օտարամոլությունը՝ տեր կանգնել հայեցի արժեքներին, հրատապ հարցերի նկատմամբ Սփյուռքում զգաստ է պահել հայության ժողովրդական զանգվածներին և դարձել կուսակցական մտավորականության կարևորագույն հարթակներից մեկը: Վեր կանգնելով գաղափարախոսական տարբերություններից և մերժելով բոլշևիկների իշխանության տարիներին տեղ գտած անհանդուրժող, կտրուկ և բռնի գործելաձևերը, միաժամանակ ողջունել է Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը, հաճախ նյութեր տպագրել խորհրդահայ տնտեսության և մշակույթի ձեռքբերումների վերաբերյալ, քաջալերել նրա շինարարական աշխատանքներին օժանդակող կազմակերպությունների (ՀՕԿ, «Հայ կարմիր խաչ», ամերիկահայ հայրենակցական միություններ և այլն), ՀԲԸ Միության հայրենանպաստ գործունեությունը:

«Պայքարն» անդրադարձել է նաև միջազգային քաղաքական բոլոր կարևոր իրադարձություններին, քեմալական շարժմանը Թուրքիայում, Հայաստանի Առաջին հանրապետությանն ու դրանում ընթացող գործընթացներին, այնուհետև խորհրդային իշխանության հաստատմանը Հայաստանում: Բուռն արձագանքել և մեծ թվով հոդվածներ է հրապարակել 1920-1930 թթ. և 1946 թ. զանգվածային հայրենադարձության մասին: Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին թերթը լուսաբանել է հակահիտլերյան խմբակցության ռազմական ձեռնարկները, խորհրդային բանակի հաղթանակները, հայ ռազմիկների և սպաների մասնակցությունը պատերազմին, «Ամերիկահայ ազգային խորհրդի» գործունեությունը: Ետպատերազմյան շրջանում «Պայքարը» նպաստել է Հայրենիք-Սփյուռք կապերի զարգացմանը, պարբերաբար նյութեր տպագրել Խորհրդային Հայաստանի տնտեսության, գիտության ու մշակույթի ձեռքբերումների վերաբերյալ, արտատպումներ կատարել խորհրդահայ մամուլից: Թերթի գրական բաժնում տեղ են գտել արևմտահայ, սփյուռքի, խորհրդահայ, ինչպես նաև այլ օտար հեղինակների տարբեր ժանրերի գործեր [**6**] :

Կարճ ասած՝ չկա այդ տարիների քիչ թե շատ նշանակալի որևէ իրադաձություն, որին իր բովանդակալից ասելիքով, խորազնին դիտարկումներով և ժամանակի մեջ հիմնականում քննություն բռնող եզրահանգումներով ու իրատեսական կանխատեսումներով արձագանքած չլինի թերթը: Որպես պատմաբան և հայ պարբերական մամուլի պատմությանը նվիրված մի քանի աշխատությունների հեղինակ, կարող եմ վստահաբար ընդգծել, որ թերթին թռուցիկ ծանոթությունն անգամ հուշում է, թե որքան ասելիք ու հետազոտության կարոտ հիմնախնդիրներ կան պարփակված դրա էջերում: Վստահ եմ նաև, որ մոտ ապագայում այն այլևս դուրս չի մնա երիտասարդ ուսումնասիրողների տեսադաշտից:

1982 թ. «Պայքարը» վերածվում է շաբաթաթերթի, իսկ 1993 թ.՝ ամսագրի:

Երրորդ՝ հայաստանյան շրջան: 1995 թ. թերթը փոխադրվում է Երևան և իբրև Ռամկավար ազատական կուսակցության եռամսյա հանդես լույս է տեսնում մինչև 1998 թվականը: Թերթի այս տեղափոխումն անմիջական և սերտ կապ ուներ Հայաստանի վերանկախացման, Ռամկավար ազատական կուսակցության հայաստանյան կառույցի՝ Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության հիմնադրման և դրան հաջորդող այլ կարևոր իրադարձությունների հետ: Կարճ ժամանակում պարբերականը հասցրեց դառնալ հայ մտավորականներից շատերի գիտամշակութային խոսափողը: Դրա էջերում տեղ գտան հայրենի և սփյուռքյան շատ նշանավոր հեղինակների հրապարակումներ: Սակայն օրվա իշխանությունների ոչ այնքան բարեհաճ վերաբերմունքը, տպագրական ծախսերի թանկացումը, ավագ սերնդից շատերի ասպարեզից հեռանալը, հայալեզու ընթերցողների թվի պակասումը, ներկուսակցական որոշ տարաձայնություններն ու հատկապես նյութական միջոցների անբավարարությունը բացասաբար ազդեցին և հանդեսը դադարեց լույս տեսնել:

Չորրորդ՝ ամերիկա-լիբանանյան կամ **նորագույն շրջան**: Տևական ընդմիջումից հետո, ՌԱԿ երկարամյա մի խումբ անդամների և հատկապես հայ մամուլի երախտավորներ Երվանդ Ազատյանի և Հակոբ Վարդիվառյանի ու նրանց համախոհների ու քաջալերողների ջանքերով 2017 թ. հունվարի 1-ին, որպես Ռամկավար ազատական կուսակցության պաշտոնաթերթ, «Պայքարը» վերստին սկսեց լույս տեսնել միաժամանակ Լոս Անջելեսում և Բեյրութում [**5**]: Մինչ այդ նույն հարցերը նորից էին ծառացել նախաձեռնության հեղինակների առջև. արդյոք նույն դժվարությունները չեն կաշկանդի «Պայքարի» վերածնունդին: Բայց հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին տարիներին Նյու Ջերսիի շրջանում Միջին ու Մերձավոր արևելքից եկածների հաշվին զգալիորեն ավելացել էր հայախոսների թվաքանակը, որ թերթի էլեկտրոնային տարածումը հնարավորություն էր ընձեռել բացառել առաքման ծախսերը, որ վճարովի ծանուցումներ հրատարակելու բարձր հավանականություն կա, որը ևս հույս էր ներշնչում, որ հնարավոր դառնա նորածին թերթի անսայթաք ընթացքը, անվարան ձեռնարկեցին թերթի հրապարակումը: Անչափ կարևոր էր նաև այն, որ հայկական որակյալ նոր թերթի հրատարակությունը իր ներդրումը պիտի կատարեր արևմտահայերենի պահպանման կենսականորեն անհրաժեշտ և կարևոր հարցում:

Նպատակի հստակ գիտակցումով և դեպի այն աներեր ու հավատով լեցուն ընթացք ապահովելով, ինչպես նաև ներդրած ջանքերի ու իրենց գործի արհեստավարժ խմբագրակազմի բեղուն աշխատանքի շնորհիվ շատ կարճ ժամանակում շաբաթաթերթը դարձավ սփյուռքահայ մտավորականության ամբիոնը, ռամկավար և ոչ ռամկավար մտավորականների, պատմաբանների, հասարակագետների, քաղաքագետների, մշակութային ու կրթական մշակների, գրողների և արվեստագետների հանդիպման վայրը՝ ապացուցելով, որ արդար ու տեղին էր 118 տարեկան «Պայքարին» երրորդ շնչառություն տալու նախաձեռնությունը: Հիրավի, զինվորագրյալների այն թիմը, որն իրականություն դարձրեց այդ ազգանվեր առաքելությունը, միանգամայն արժանի է գնահատանքի, իսկ յուրաքանչյուր գիտակից հայի պարտքն է՝ բոլոր միջոցներով սատարել թերթին, որպեսզի ակնթարթային չլինի այս վերածնունդը և հարատև լինի ընթացքը: Շտկվեց նաև այն սխալը, որ մինչ այդ, հատկապես հրապարակախոսական մեծ ավանդույթներ ունեցող լիբանանահայ գաղութում չնայած մինչ այդ գործող ռամկավար «Զարթոնք», հնչակյան «Արարատ>», դաշնակցական «Ազդակ» և այլ կուսակցական թերթերի առկայությանը, սակայն սփյուռքահայ բազմաթիվ մտավորականներ, զրկված էին ազատ ամբիոն ու խոսափող ունենալու հնարավորությունից, իսկ ՌԱԿ-ը՝ պատվարժան պարբերական ունենալուց:

Այնպես որ, շատ արագ «Պայքարը» գրավեց իր արժանի տեղը սփյուռքահայ մամուլի պատվարժան ընտանիքում: Մի բան, որը ուրախացրեց շատերին, սակայն շարժեց նաև ոմանց նախանձը: Արդյունքում Լիբանանի արաբական «Ալ Նաշրա» կայքում «Պայքար» շաբաթաթերթի դեմ տեղադրվեց մի զրպարտագիր, վերջինիս վերագրելով ներլիբանանյան համակեցությունը խաթարելու, մամուլի մասին լիբանանյան օրենքը խախտելու, Մեծի

տանն Կիլիկիո կաթողիկոսի նկատմամբ թշնամանք հրահրելու, նույնիսկ Հայաստանի Հանրապետության դեմ հակաքարոզչություն կատարելու և բարեկամ երկու երկրների միջեւ հարաբերությունները վատթարացնելու վերաբերյալ «մահացու» մեղքեր: Այնինչ, «Պայքարի» մինչ այդ լույս տեսած 42 համարների բովանդակությունը լիովին հակառակն էին ապացուցում: Ուստի միանգամայն բնական էր, որ չնայած որոշ փոքրոգիների թափած ջանքերին, խնդիրը շատ արագ հարթվեց և «Պայքարը» հանդարտ ու հաստատակամ շարունակեց իր ազգաշահ երթը:

Մերօրյա համաշխարհայնացման (globalizacia) գործընթացների ու էլեկտրոնային լրատվամիջոցների բազմազանության մեջ «Պայքարն» ասպարեզ վերադարձավ իր առաքելությանը և ՌԱԿ-ի գաղափարախոսությունը համայն հայությանը հասցնելու հստակ գիտակցությամբ: Խիստ պատվավոր մի ընթացք, որը պետք է ապահովի գործին քաջատեղյակ, այդ ասպարեզում բեղմնավոր ճանապարհ անցած և ճիշտ ընտրված խմբագրակազմը՝ պատասխանատու խմբագիր՝ Երվանդ Ազատյանը, գործադիր խմբագիր Հակոբ Վարդիվառյանը, դոկտ. Հարություն Արզումանյանը, Հակոբ Ավետիքյանը, Պայծիկ Գալաճյանը, Զավեն Գրիգորյանը, Վաչե Սեմերճյանը:

Լավագույնս գիտակցելով, որ մեր օրերում տպագիր մամուլը որոշ նահանջ է ապրում, խմբագրակազմն իրավացիորեն որոշել է միաժամանակ հրապարակել նաև թերթի էլեկտրոնային տարբերակը [7], որով այն հասանելի է դարձել աշխարհասփյուռ հայությանը: Ինչպես նաև իր ձայնն է հնչեցնում հոգուտ հայանպաստ գործերի և որպես ՌԱԿ-ի գաղափարական պատգամախոս, անկասկած իր նպաստավոր ազդեցությունը կունենա կուսակցության վերակառուցման և հիմնովին առողջացման գործընթացներում: Գաղտնիք չէ, որ տեղեկատվության պակասի կամ միակողմանիության հետևանքով, երբեմն կուսակցական շրջանակները հայտնվում են թյուր իրողության շրջապտույտներում: Հենց այդտեսակ թյուրիմացություններից խուսափելու, կուսակցության գաղափարախոսությունն ու գործելակերպը ճիշտ ներկայացնելու անհրաժեշտության ըմբռնումով է խմբագրակազմը ճանապարհ դուրս եկել:

Բոլորովին պատահական չէր, որ ՌԱԿ-ի տարբեր կառույցներ, մի շարք պարբերականներ և էլեկտրոնային կայքեր, կուսակցության երախտավորներ և մտավորականներ, ինչպես նաև տողերիս հեղինակը, ժամանակին ողջունեցին կուսակցության գաղափարական պատգամախոս «Պայքարի» սպասված վերադարձը, բարի երթ մաղթեցին և հույս հայտնեցին ու հավատացին, որ այն ազնիվ ու անզիջում կպայքարի ստի ու խաբեության, հոսսական դրսևորումների, ազգավնաս ու կուսակցադավ բոլոր դրսևորումների դեմ, վեհանձնորեն կիրականացնի գաղափարական առաքյալի իր դերը՝ զգաստ կպահի զանգվածներին հայության հրատապ հարցերի նկատմամբ, ինչպես նախկինում է արել: Նախկին եղեռնվածի ու խեղճի փոխարեն՝ կներկայացնի սեփական ուժեղ պետության տիրոջ և պահանջատեր ժողովրդի դիմագիծը: Որպես ամենամոտ ապագայում հիմնովին առողջ ու միասնական կուսակցության պաշտոնաթերթ՝ կարևոր դերակատարություն կունենա մեզ նետված մարտահրավերներին արժանիորեն պատասխանելու և նշագծելու այն ուղիները, որոնցով հայ ժողովուրդը կկերտի նորանոր հաղթանակներ:

«Պայքարը» պիտի պայքարի, որ Հայաստանի հանրապետությունը և համայն հայությունը դիմագրավեն մեզ առաջադրված բազմաբնույթ մարտահրավերներին, որոնք թեև թավշյա հեղափոխությունը եկավ լուծելու, սակայն Արցախի, սոցիալ-տնտեսական, արտագաղթի և բազմաթիվ այլ հիմնախնդիրներ օր առաջ դեռևս լուծման կարիք ունեն: Այսպես՝ տակավին հայրենի իշխանությունները գործնականում լիովին չեն որդեգրել ժողովրդից, ժողովրդի հետ և ժողովրդի համար գործելաձևը, ամբողջովին չի դադարել երկիրը հյուծող արտագաղթը, դժվարություններ կան Հայրենիք-Սփյուռք և Հայաստան-Արցախ հարաբերություններում և այլն: Իսկ Հայաստանում և Սփյուռքում գործող կազմակերպությունները, եկեղեցին, Բարեգործականը, կուսակցական և մշակութային միություններն այդ խնդիրներն ու իրենց հուզող զանազան հարցեր վերլուծող, լուծումներ առաջարկող, հավասարակշռված և վստահություն ներշնչող

գաղափարախոսական առողջ և թարմ ասելիք ունեցող պարբերականի կարիք ունեին: Այդ դերակատարությունն ստանձնել և ՌԱԿ մամուլի հնաբնակների հետ փորձում է լուծել «Պայքար» թերթը, որն առողջ ու թարմ շունչ բերեց և իր բարերար ազդեցությունն ունեցավ հայության կյանքում: Ուստի միանգամայն օրինաչափ էր, որ կարճ ժամանակում «Պայքարի» այդ առողջ պայքարը և իր ազգանվեր առաքելության միանգամայն ճիշտ գիտակցումն ու կատարումը միանգամայն արժանիորեն արժանացավ հայկական PR(ՓիԱր) ընկերակցության և հաղորդակցության ամենամյա մրցանակաբաշխության դափնեկրի կոչման:

Մրցանակաբաշխություն, որի նպատակն է բարձրացնել ու կարևորել հանրային կապերի մասնագետի դերը, խրախուսել հաղորդակցության կառավարման նոր մեթոդներն ու ճարտարագիտական նորարարական կիրառումները, ինչպես նաև արձանագրել ոլորտում առկա բացթողումները: Հայկական PR(ՓիԱր) կազմակերպության նախագահ Աստղիկ Ավետիսյանն իր շնորհավորելով խմբագրակազմին նշեց, որ Հայկական PR(ՓիԱր) ընկերակցությունը պարգևատրում հանրային կապերի և հաղորդակցության լավագույն ծրագրերի ու գաղափարների հեղինակներին: Մրցանակաբաշխությունը միտված է գնահատելու հանրային կապերի և հաղորդակցության ոլորտում կատարված լուրջ ներդրումը և բարձրաձայնելու առկա խնդիրները, ձեռքբերումներն ու մարտահրավերները: «Պայքարն» արժանապատվորեն է կատարել իր առջև դրված այդ խնդիրները և լիովին արժանի էր այս մրցանակին:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայ պարբերական մամուլի պատմություն XVIII-XIX դարեր, Ե., 2006, էջ 19:
2. Սարգսյան Ս., «Արմենիա» պարբերականը ազատագրական գաղափարախոսության ակունքներում, Ե., 2014, էջ 68:
3. Հայ պարբերական մամուլի պատմություն 1900-1922, Ե., 2017, էջ 628-639:
4. Սարգսյան Ս., Հայ Սահմանադրական ռամկավար կուսակցություն (1908-1921 թթ.), Ե., 2009, էջ 117-139:
5. «Պայքար» թիվ 1, Յունուար 1, 2017:
6. https://grahavak.blogspot.com/2014/12/pdf.html կայքում տեղադրված «Պայքար» թերթի բոլոր համարները:
7. baikarweekly@gmail.com

Сдана/Հանձնվել է՝ 10.01.2020
Рецензирована/Գրախոսվել է՝ 13.01.2020
Принята/Ընդունվել է՝ 20.01.2020

Ժողովրդական պատգամավորների տեղական խորհուրդների գործունեությունը 1991-1992 թթ.

Զաքարյան Լ.Ս.
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի ավագ գիտաշխատող, պ.գ.թ., դոցենտ (Երևան, Հայաստան)
lilit_zakaryan@mail.ru

Վճռորոշ բառեր՝ ժողովրդական պատգամավորների տեղական խորհուրդներ, տեղական ինքնակառավարման մարմիններ

Вопросы местного самоуправления в первые годы независимости Республики Армения. Деятельность местных советов народных депутатов в 1991-1992 годах

Закарян Л.С.
старший научный сотрудник Института истории НАН РА, к.и.н, доцент (Ереван, Армения)
lilit_zakaryan@mail.ru

Резюме: В статье представлена проблема управления на местах в 1991-1992гг. После провозглашения независимости в Армении начался процесс реконструкции центральных органов власти, однако на местах сохранились местные советы народных депутатов. Местные советы, оказавшись в новых условиях работы, не всегда справлялись с новыми проблемами. В республиканских органах правления к власти пришли новые силы, Коммунистическая партия полностью потеряла свое влияние, между тем в большинстве местных советов представители старой номенклатуры остались на уровнях принятия решений. Это создавало недоверие и недовольство у представителей центральной власти. Был поставлен вопрос ликвидации местных советов и создания органов местного самоуправления, но проблему стало возможно решить только после завершения военных действий и принятия Конституции РА в 1995 году.
Ключевые слова: местные советы народных депутатов, местноесамоуправление

Issues of local government in the first years of independence of the Republic of Armenia. The activities of local councils of people's deputies in 1991-1992

Zakaryan L.S.
Senior Researcher, Institute of History of NAS RA
PhD in History, Associated Professor (Yerevan, Armenia)
lilit_zakaryan@mail.ru

Abstract: The article presents the problem of local governance in 1991-1992.After independence, the process of reconstruction of the central authorities began in Armenia, however, local councils of people's deputies were locally preserved.The local councils, finding themselves in new working conditions, did not always cope with the problems that fell upon them.New forces came to power in the republican government bodies, the Communist Party completely lost its influence, meanwhile, in most local councils, representatives of the old nomenclature remained at decision-making levels.This created distrust and discontent among representatives of the central government.The question of eliminating local councils and creating local self-government bodies was raised, but the problem became possible to solve only after the end of hostilities and the adoption of the Constitution of the Republic of Armenia in 1995.
Keywords: councils of people's deputies, self-government

ԽՍՀՄ-ի վերջին տարիներին՝ ժողովրդավարացման գործընթացների և Կոմունիստական կուսակցության անվերապահ իշխանության թուլացման պայմաններում սկսեցին քննարկումներ գոյություն ունեցող ժողովրդական պատգամավորների տեղական խորհուրդների համակարգը Տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիայի[1] դրույթներին հարմարեցնելու ուղղությամբ:

[1]Տեղական ինքնակառավարման մասին եվրոպական խարտիան մշակվել է Եվրոպայում իշխանության տեղական և տարածաշրջանային մարմինների մշտական կոնֆերանսի (ներկայիս՝ Եվրոպայի տեղական և տարածաշրջանային իշխանությունների կոնգրեսի) նախաձեռնությամբ 1985 թվականին:

1990-1991 թթ. ԽՍՀՄ-ում այդ հարցի շուրջ ձևավորվել էին հետևյալ մոտեցումները՝

- Պահպանել կառավարման տեղական խորհուրդների համակարգը
Արագածոտն	12	19	33	20	25	27	13	25	21
Արարատ	52	77	74	86	75	77	47	88	77
Արմավիր	18	39	53	60	78	62	34	65	51
Գեղարքունիք	22	39	49	45	48	51	34	49	36
Լոռի	39	56	72	48	51	47	38	52	57
Կոտայք	32	57	68	75	71	84	45	57	74
Շիրակ	47	90	71	67	95	80	48	112	79
Սյունիք	13	16	29	21	26	28	26	35	27
Վայոց Ձոր	4	7	5	10	5	11	8	3	8
Տավուշ	10	10	16	18	18	23	7	28	19
ընդամենը	440	683	772	734	688	795	453	794	707

րի ամրապնդմանը: Այսօրվա դրությամբ հայկական ընտանիքների հիմնական մասը ունակ չէ պաշտպանել իր անդամներին և վերականգնել նրանց նորմալ հոգեվիճակը: Դա բացատրվում է մարդկանց նյութական ծանր կացությամբ և բազմաթիվ կարիքների առկայությամբ: Իր ընտանիքի գոյության համար նվազագույն կենսական պահանջներ ապահովելու անկարողությունն արժեզրկում է մարդուն, հատկապես տղամարդուն նվաստացնում նրան, բացասաբար ազդում վերջինիս սոցիալական կարգավիճակին և հոգեկան աշխարհին: Սա էլ հանգեցնում է ընտանիքի հոր հեղինակազրկմանը, նվազագույնի է հասցվում հոր դերը երեխաների դաստիարակության և ընտանիքի նյութական ապահովման գործում: Դա է պատճառը, որ շատերն իրենց հոգսերը մոռանալու նպատակով սկսում են զբաղվել հարբեցողությամ, խորտակվում օղու շշի մեջ: Նշված հանգամանքներն էլ մեր կարծիքով ընտանեակենցաղային հողի վրա հարբացության վիճակում գտնվող տղամարդկանց կողմից կատարվող բռնարարքների հիմնական պատճառներն են [**10**]: Այս պարագայում բարեկամների և հարազատների մասնակցությունը չափազանց կարևորվում է: Սակայն այստեղ էլ սա չպետք է անցնի սահմանը՝ սահմանապակվելով նյութական օգնությամբ և առանց խառնվելու ընտանիքի ղեկավարման հարցերին:

Ընտանեկան բռնության դեմ պայքարի միջազգային փորձը ցույց է տվել, որ պետական իշխանության և ոչ մի մարմին, կանխարգելիչ և ոչ մի միջոցառում ունակ չեն հասնելու վերջնական հաջողության, եթե չհիմնվեն հասարակության ամենատարբեր կառույցների աջակցության օժանդակության վրա: Ընտանիքում բռնությունների կանխման գործում անչափ մեծ նշանակություն ունի ծնողների մոտ տարրական մանկավարժական հմտությունների ձևավորումը և ամրապնդումը: Մասնավորապես, շատ կարևոր է երեխայի դաստիարակության մեթոդների և ձևերի մեջ ընտրություն կատարելիս հաշվի առնել, որ ծնողը կարող է և պետք է սեր և հարգանք դրսևորի երեխայի հանդեպ՝

- Բացատրելով, թե ինչպես պետք է արվի ինչ-որ բան և ոչ թե ինչու պետք է արվի հենց այդ ձևով,
- Լսելով երեխայի մտքերն և հարցերը և համբերատար ու անկեղծ պատասխանելով դրանց,
- Երեխային հարգալից վերաբերվելով,
- Փորձելով գտնել, թե երեխայի նման պահվածքի համար ինչ պատճառ կա,
- Գտնելով պատժելու այլ տարբերակներ՝ ծեծելու կամ վիրավորելու փոխարեն [**2**]:

Հանրային իրազեկման մակարդակը բարձրացնելու նպատակով մեծածավալ աշխատանքի կարիք կա, քանի որ կատարված աշխատանքի արդյունքում ընտանեկան բռնության վիճակագրությունը և հանրային վերաբերմունքը դեռևս ձևավորված չէ: Չնայած կատարված աշխատանքներին իրազեկվածության մակարդակն առկա ծառայությունների առումով մնում է անբավարար:[1]

Ամփոփում: Ընտանեկան բռնության կանխարգելմանն ուղղված միջոցառումները պետք է ավելի շատ գաղափարախոսական ուղղվածություն ունենան: Առաջին հերթին յուրաքանչյուր անհատ պիտի ճիշտ ընկալի ընտանիք կառույցը, հատուկ ուշադրություն դարձնելով դաստիարակությանը դեռ վաղ մանկական տարիքից՝ սեռրմանելով հոգևոր և բարոյական արժեքների: Այնուհետև բարելավվեն կենսական-տնտեսական պայմաններն, բարձրացվի իրազեկվածությունն, վերացվի գենդերային խտրականությունը, ապահովվի ընտանիքում սոցիալ- տնտեսական կայունությունն:

Բռնարարքների դեմ պայքարելու անմիջական նպատակ չի հետապնդում նաև բնակչության շրջանում հոգևոր մշակույթի զարգացումը, բայց դա կնպաստի մարդկանց դրական հայացքների և բարքերի ձևավորմանն: Կարևորագույն քայլերից պետք է դառնա հասարակության օրենսդրահիրավական դաշտի հստակեցումը, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության գործառույթներ իրականացնող մարմինները և հատուկ կառույցների հետ համագործակցությունը (ոստիկանությունը, կրթության ոլորտի լիազոր գործադիր մարմինը, խնամակալության և հոգաբարձության մարմինները, ապաստարանները) և այլը՝ հաշվի առնելով և՛ օրենքը, և՛ սոցիալական նորմերը:

[1] Հայաստանում ընտանեկան բռնությանը բազմաոլորտային արձագանքի տրամադրման առկա պրակտիկայի և նախաձեռնությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված Որակական հետազոտություն, Երևան 2017

Օգտագործված գրականության ցանկ

1. **Առաքելյան Ս.Վ.**,Կանանց իրավական պաշտպանությունը բռնությունից, Երևան, 2001, էջ 34:
2. Երեխաների պաշտպանությունը բռնությունից, “Save the children” կազմ., Դասընթացի նյութեր, “Ասողիկ” հրատ., Երևան,2011
3. **Կարապետյան Ծ.**, Ընտանեկան բռնություն, Ձեռնարկ ոստիկանների համար, Երևան, 2010, էջ 5:
4. **Бэрон Р. Ричардсон Д.** Агрессия. -СПб.: Питер, 2000
5. **Конт Р.** Сексуальное насилие над детьми // Энциклопедия социальной работы, в 3 т., Т.3, -М.,1994
6. **Либоракиной М.И., Шапиро Б.Ю., и др.** – М.: ЗАО «Редакционно-издательский комплекс Русанова», 1999
7. **Москаленко В.Д.** Программа социальной работы с семьями больных алкоголизмом. — М.: Центр общечеловеческих ценностей
8. **Сидоренко Т.А, Максудов Р.Р.** Комплексный подход к защите от насилия в семье // Социальные работники за безопасность в семье / Под ред.
9. **Стар Б.** Насилие в семье // Энциклопедия социальной работы, в 3 т., Т2. – М.,1994,
10. **Тащёва А.И.**, Зелинская С.Ю. Насилие в алкогольной семье. / Психологический вестник
11. **Хасина А**. Женщины, домашнее насилие, стресс. // Насилие и социальные изменения. – №2. – 2000.

Сдана/Հանձնվել է՝ 15.10.2019
Рецензирована/Գրախոսվել է՝ 17.12.2019
Принята/Ընդունվել է՝ 20.12.2019

КУЛЬТУРА И РЕЛИГИЯ

Աղթամարի մշակութային ժառանգությունը

Ներսիսյան Ս. Ա.
Մանրանկարիչ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ,
Կերպարվեստի ֆակուլտետ (Երևան, Հայաստան)
sepuh-nersisyan1999@mail.ru

Վճռորոշ բառեր՝ Կղզի, Աղթամար, Ս. Խաչ, մշակույթ, ժառանգություն, եկեղեցի քաղաք, մանրանկարչություն, ճարտարապետություն:

Культурное наследие Ахтамара

Нерсисян С. А.
Миниатюрист, АГПУ им. Хачатура Абовяна
Факультет изобразительных искусств (Ереван, Армения)
sepuh-nersisyan1999@mail.ru

Резюме: Статья посвящена выявлению особенностей различных культурных сфер церкви Святого Креста в Ахтамаре. Проанализировано все то новое и особенное, что было вложено этим памятником в армянское и мировое культурное наследие миниатюры, мозаики, фрески и в архитектуры.
Ключевые слова: остров, Ахтамар, Святой Крест, культура, наследие, церковь, скульптура, миниатюра, архитектура.

The cultural heritage of Akhtamar

Nersisyan S. A.
Miniaturist, ASPU after Khachatur Abovyan
Faculty of Fine Arts (Yerevan, Armenia)
sepuh-nersisyan1999@mail.ru

Abstract: The article is dedicated to identifying specificities of different cultural spheres of church St. Cross in Akhtamar. There is analyzed all that new and specific which was invested by this monument in Armenian and worldwide miniature, mosaic, mural and architectural cultural heritage.
Keywords: Island, Akhtamar, St. Cross, culture, heritage, church, sculpture, miniature, architecture

Վանա լճի չորս կղզիներից, Աղթամարն ամենամեծն է (մյուս երեքն են՝ Լիմը, Կտուցը և Արտերը), որի մասին շատ պատումներ կան: Աղթամար անվան առաջացման մասին հայկական հին ավանդազրույցներից մեկը պատմում է հետևյալը. Երբեմնի Բզնունյաց ծովում գտնվող մի անանուն կղզու վրա արքայադուստր Թամարի ապարանքն էր կառուցված: Նա սիրահարված լինելով մի երիտասարդի՝ ամեն երեկո կրակ էր վառում լճի ափին: Տղան տեսնելով ճրագի լույսը՝ նետվում էր լճի ջրերն ու լողում իր սիրած աղջկա ափի կողմը: Այդ խարույկի լույսն իսկական փարոս էր հանդիսանում տղայի համար: Մի անգամ երկնքից լճի վրա փոթորիկ էր իջել ու հանգցնելով կրակը՝ երիտասարդին զրկել էր Թամարին գտնելու ուղղուց: Թեև սիրեցյալն ամեն ճիգ գործադրել էր կղզուն հասնելու համար, սակայն անկարող լինելով հաղթահարելու վարարուն ալիքներն. «Ա՜խ, Թամար, ա՜խ Թամար», բացականչելով ընկղմվել էր Վանա լճի հորձանուտում: Այս տխուր պատմությունից ի վեր կղզին կոչվում է Աղթամար [**1**]: Սույն հիշատակությանն է նվիրված նաև Հովհաննես Թումանյանի համանուն ստեղծագործությունը [**2**]:

Աղթամար կղզին ամբողջանում է Ս. Խաչ եկեղեցով: Դժվար է պատկերացնել մեկն առանց մյուսի: Ասում են, որ եթե աշխարհի յոթ հրաշալիքները տեսնեին Ս. Խաչն, ապա նրա առաջ անպայման ծնկի կիջնեին [**3**]: Սույն եկեղեցին կառուցվել է Գագիկ Արծրունի արքայի պատվերով և ճարտարապետ, քանդակագործ ու նկարիչ Մանվելի նախագծով 915-921 թվականներին:

Հիրավի, արևի շողերի ներքո Ս. Խաչի գեղեցկությունը բազմապատկվում է: Այն դարձել է հայկական ճարտարապետության գլուխ-

գործոցը: Նրա եզակիությունը պայմանավորված է քանդակների վեց շարքերով և բարձր գեղարվեստական որմնանկարներով: Քանդակներն այլաբանորեն պատկերել են արաբ զավթիչների դեմ հայ ազգի մղած ազատագրական պայքարը, քրիստոնեությունը, խաղաղ մշակի աշխատանքը, նրա կենսակերպը, դարերի խորքից եկած սովորություններն ու հավատալիքները:

Այն սերը, որով ստեղծվել են այս գեղեցիկ քանդակները, ստիպում են ժամերով հիանալ իրենցով: Պատերին կենդանանում են Ադամն ու Եվան, Սամսոնը և Գողիաթը, ողջ հասակով պատկերված է Քրիստոսը, որի օրհնությամբ էլ Գագիկ Արծրունի թագավորը որոշեց եկեղեցի հիմնել. «Փրկչի դիմաց՝ ճշգրիտ նմանությամբ, հորինեց (Մանվել ճարտարապետը) նաև Գագիկ արքայի փառահեղ պատկերը, որը մեծապանծ հավատքով բարձրացրել է եկեղեցին բազուկների վրա, ինչպես մանանայով լի ոսկե սափոր կամ որպես անուշահոտությամբ լցված ոսկե տուփ» [**4**]: Առյուծներն են մռնչում պատերից, հովազի և արջի պայքարի ժամանակ քարայծը գետնին է տապալվում, իսկ ավելի վեր տարածվել են խաղողի ողկույզները, գյուղացին հնձում է արտն ու պատրաստում գինի:

Տաճարի հարավային աբսիդում մուտքից վերև, առկա է թագավորական օթյակը, ուր բարձրացել են արտաքին քարե սանդուղքներով: Այն առանձնացված էր կամարակապ բազրիքով և արտաքուստ հարդարված ճոխ քանդակներով: Ս. Խաչ եկեղեցին իր կատարելությամբ դարձել է եզակի երևույթ հայ միջնադարյան արվեստում: Ամեն անգամ, երբ հայացքդ մի պատկերից թեքում ես դեպի մյուսը, պատմության անիվը, կարծես, փոխում է դարաշրջանը:

Եկեղեցին տարբերվում է նաև իր յուրահատուկ որմնանկարներով: Պատերի վերին մասում պատկերված է Ադամի և Եվայի աստվածաշնչյան պատմությունը: Դրա ներքևի մասերն իրենց մեջ են առնում որմնանկարների երեք շարքերը՝ հերթականությամբ պատկերելով տեսարաններ Քրիստոսի կյանքի և մահվան, նրա փառքի և վերածննդի մասին: Սույն որմնանկարների հավասարման կառուցվածքը և կերպարների համաչափ, նպատակահարմար դասավորությունը նպաստում են եկեղեցու ինտերիերի ամփոփ բնույթին ու շքեղությանը: Հստակ ու սահուն ընդգծվածությունները, գծային ռիթմի միջոցների օգտագործումը, ոճավորումներն ու տարաբնույթ նրբանցումները կատարման խնամքի, ջանասիրության ու մոտեցման անկեղծության հետ առավել մարդամոտ են դարձնում վերոնշյալ կերպարներին, դրանց փոխանցում ըմբռնելի ու ոգեղեն ջերմություն:

Ըստ ոճի՝ Աղթամարի որմնանկարները մի կողմից կարելի է վերագրել վաղ միջնադարին, մյուս կողմից՝ գեղանկարչության նոր ճյուղին, որը ձևավորվել էր 9-11-րդ դարերում: Դրանք հիմնականում արված են նուրբ, աչքերը հանգստացնող երանգներով՝ կապույտ, դեղին, տեղ-տեղ բաց կարմիր և երկնագույն: Իրոք, որ եկեղեցու ուշագրավ կողմերից մեկը որմնանկարների գույնն է, որը մեծապես նպաստում է ընդհանուր տարածությունում հոգևոր մտքերի ու ապրումների դրսևորմանը: Պարզ հարթություններով դրված գունաշարը ստեղծում է մի ուրույն հուզական պատկեր: Այս ամենը հիմքն է հնուց ավանդաբար եկած գույնի հստակ ընկալմանն ու որմնանկարչական կանոնների պահպանմանը: Դյուրացված պատկերային կառուցվածքը և տեսարանների հաջորդականությունն իրենց մակագրություններով՝ դեկորատիվ տպավորության հետ մեկտեղ վկայում են նաև հայ հին բանահյուսական պատկերացումների հետ ունեցած որմնանկարչության սերտ կապը: Բարձրորակ վարպետության շնորհիվ պատկերներն անգամ փոխանցում են իրադարձությունների ոգին: Հերոսների ապշեցնող հայացքները փոխանցում են ողջ միջավայրը: Սրբերի հայացքներն ուղղված են դեպի վեր՝ հասնելով եկեղեցու ամենաբարձր կետերին, իրենց ետևից ստիպելով այցելուներին նայել գմբեթի ամենավերին հատվածին: Եկեղեցու որմնանկարներն իրենց բնույթով խոշոր ազդեցություն են ունեցել ինչպես հետագա հայկական արվեստի զարգացման, այնպես էլ Վասպուրականի մանրանկարչության դպրոցի վրա:

Աղթամարի ճարտարապետական փառքն էլ ավելի էր մեծացել 1316 թվականին, երբ եկեղեցու հյուսիս-արևելքում կառուցվել էր ժամատունը, իսկ 1763 թվականին էլ զանգակատունը, որի վրա պահպանված է հետևյալ արձանագրությունը. «Շինեցաւ զանգակա-

տունս արդեամբք աստուածասէր իշխանացն Ախիջան եւ Գեորգ աղայիցն յանուն Ս. Համբարձման ի յիշատակ ննջելոցն եւ կենդանեացն» [**5**]:

Այս ընթացքում արևմտյան կողմում կառուցվել էր նաև չորս սյունանոց գավիթը: Եկեղեցուց հարավ-արևելք գտնվում է 13-17-րդ դարերի խաչքարերով գերազմանոցը: Ս. Խաչը եղել է Աղթամարի կաթողիկոսարանի հոգևոր կենտրոնը 1113 թվականից մինչև 1895 թվականը:

Հատկանշական է այդ տարվա Խաչվերացի տոնի մի պատմական լուսանկարը, ուր այս եկեղեցու մուտքի մոտ հավաքված են մի խումբ հոգևորականներ Աղթամարի վերջին կաթողիկոս Խաչատուր Բ Շիրոյանի գլխավորությամբ՝ առջևում Արծրունյաց տան երկգլխանի արծվի զինանշանով:

2005-ին սկսվել էին Ս. Խաչի վերականգնման աշխատանքները, որը տևել էր շուրջ երկու տարի: Իր էությամբ դա աննախադեպ իրադարձություն էր: Առաջին անգամ թուրքական կառավարությունը հայկական եկեղեցու վերականգնման վերաբերյալ որոշում էր ընդունել: Անհրաժեշտ չէ օժտված լինել մեծ հեռատեսությամբ հասկանալու համար, որ այդ քայլը չէր կատարվում բարձր հոգևոր մղումներից ելնելով: Մեծ դեր էր խաղացել նաև թուրքերի՝ Եվրամիության անդամ երկիր դառնալու քաղաքական ձգտումը, սակայն փաստ է, որ մեր ճարտարապետության մեծագույն նմուշներից մեկը փրկվեց ժամանակի կործանարար ազդեցությունից: Ս. Խաչն իր նոր տեսքով աշխարհին ներկայացավ 2007 թվականի մարտին: «Սուրբ Խաչն առանց խաչի», - այսպես էր բնութագրել ժամանակի մամուլը եկեղեցու բացման արարողությունը: Քաղաքական նկատառումներից ելնելով խաչը տեղադրվեց ավելի ուշ:

Հատկանշական է, որ ճարտարապետական սույն գլուխգործոցի պահպանմանը մինչ մեր օրեր թրքական իրականության մեջ, մենք ակամայից «պարտական ենք» հանրաճանաչ քուրդ գրող Յաշար Քեմալին, ով մեծացել էր Վանի թուրքմենաբնակ գյուղերից մեկում: Հայտնի հոդվածագիրը նավարկելով Վանա լճի ջրերում՝ պատահաբար տեղեկացել էր, որ տեղի իշխանությունները պատրաստվում են քանդել Աղթամար կղզու եկեղեցին, որն անգամ թուրքերը մշակութային մեծ ժառանգություն էին համարում: Գործադրելով ամեն ջանք ու զանգահարելով տարբեր պաշտոնեաների ու նախարարների Յաշարը կարողացել էր ի վերջո նախ կասեցնել, ապա նաև լիովին չեղարկել Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու ավերումը: Դա 1951 թվականի հունիսիս 25-ն էր [**6**]:

Շարունակելով կղզում առկա պատմամշակութային ժառանգության թեման նշենք, որ Ս. Խաչ եկեղեցուն կից եղել էր նաև հսկայական արքայանիստ պալատը. «Պալատի մեծությունը ահավոր է և ապշեցուցիչ: Նրա մեջ դրված են մանր հորինվածքով, հրաշալի գեղեցկությամբ կատարված դռներ, որոնք բացվելիս երկփեղկվում և թարմ օդ են ներս բերում, զովացնում» [4]: Եվ ո՞վ կմտածեր, որ դարեր անց, երբ արդեն ի չիք էին դարձել երբեմնի հայոց թագավորություններն ու ողջ երկիրն ընկղմվել էր մահմեդական խավարամիտ կառավարիչների ղեկավարման ներքո, նրանցից մեկի՝ Ջահանշահի կողմից կթույլատրվեր 1465 թվականին այստեղ վերականգնելու Արծրունիների թագավորությունը. «Եւ յայնժամ օծեցին զպարոն Սմբատ թագաւոր ըստ նախնեաց իւրոց Գագկայ, զի ի վաղուց անտի ազգս Հայոց չէր տեսեալ թագաւոր» [7]:

Թագավորության վերականգնմանը մեծ դերակատարություն էր ունեցել Զաքարիա Գ կաթողիկոսը, որն ավաղ մահացել էր մինչ թագադրումը: Սմբատ Արծրունի թագավորին օծել էր նորընտիր Ստեփանոս Դ Տղա կաթողիկոսը: Սույն պալատում կրկին, թեև կարճ ժամանակով (մինչ 1471 թ.), զգացվել էր իսկական արքայական շունչը: Դրանից հետո պալատը կրկին ամայացել էր: Հարակից բացատում դեռ պահպանվել են Ս. Ստեփանոս եկեղեցու ավերակները:

Աղթամար կղզու պատմամշակութային հուշարձանների մասին դարեր ի վեր կազմվել են տարաբնույթ աշխատություններ, մենագրություններ և հուշապատումներ: Այդուհանդերձ գտնում ենք, որ այստեղ դեռևս հիմնարար ամբողջական ուսումնասիրության կարիք կա՝ թե պատմամշակութային և թե քաղաքական տեսանկյունից: Ավելացնենք միայն, որ առավել չքնաղ տեսարան չկա, քան մայրամուտը Վանա լճի ափին: Ջուրն ու երկինքը միահյուսվել են հանճարեղ մեղեդու ալիքնե-

րով, թռչունները թռնում են այդ հրաշալի երևույթի նոտաներով, իսկ մենք արևի վերջին շողերի ներքո հրաժեշտ ենք տալիս Սուրբ Խաչի մոգական հրաշքին:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Ոսկեան Հ.**, Վասպուրական-Վանի վանքերը, մաս Ա, Վիեննա, 1940:
2. **Թումանյան Հովհաննես**, Երկեր, հ. 1, Ե.,1958:
3. Աշխարհի հրաշալիքները, կազմ. Վ. Աբրահամյան, Ե., 2016:
4. **Թովմա Արծրունի և Անանուն**, Պատմություն Արծրունյաց տան, Ե., 1985:
5. **Լալայեան Ե.**, Վասպուրական. նշանաւոր վանքեր, պրակ Ա, (Արտատպուած «Ազգագրական հանդէսից»), Թիֆլիս 1912:
6. **Yaşar Kemal**, The legend of Ararat, London: Collins and Harvill Press, 1975.
7. **Ակինեան Ն.**, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, պատմական ուսում, Վիեննա, 1920:

Сдана/Հանձնվել է՝ 15.11.2019
Рецензирована/Գրախոսվել է՝ 18.11.2019
Принята/Ընդունվել է՝ 20.11.2019

Սփյուռքահայերի կրթության խնդիրների լուսաբանումը 1960-ական թթ. լիբանանահայ մամուլում

Ավագյան Գ. Ա.
ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի ասպիրանտ (Երևան, Հայաստան)
gayaneavakyan@gmail.com

Վճռորոշ բառեր՝ հայկական ինքնություն, կրթական գործունեություն, դպրոց, հայրենասիրության սերմանում, Սփյուռքի ապագա, ապագա առաջնորդների պատրաստում, կուսակցական սերնդափոխություն, մամուլ, «Ազդակ» «Արարատ» «Զարթոնք», «Նաիրի»

Освещение проблем армянской диаспоры в армянской прессе Ливана 1960-х годов

Авагян Г. А.
Кафедра новых медиа и коммуникации факультета журналистики ЕГУ (Ереван, Армения)
gayaneavakyan@gmail.com

Резюме: Армянская пресса Ливана 1960-х годов представляет общую картину организации образовательного дела в диаспоре, связи между образованием и сохранением армянской идентичности, видением будущего диаспоры. Газеты приписывают образовательным учреждениям несколько миссий. В статье также обсуждаются под-слои каждой миссии.
С одной стороны, ливано-армянская пресса придает важность сохранению армянской идентичности через школы, а с другой - интеграции в ливанское общество. Наряду с привитием армянской самобытности и патриотических идей, газеты отмечают также факт привития партийной идеологии через школы. А миссия по подготовке будущих общественных лидеров связывается с проблемой смены партийных поколений.
В статье делается заключение, что ливано-армянские газеты сталкиваются с обстоятельствами, продиктованными особым статусом диаспоры и, в соответствии с этим, формируют публично-аналитическую речь.
Ключевые слова: армянская идентичность, образовательная деятельность, школа, привитие патриотизма, будущее диаспоры, подготовка будущих лидеров, смена партийного поколения, пресса, “Аздак”, “Арарат”, “Зартонк”, “Наири”.

The Coverage of the Educational Issues of Diaspora Armenians in the Lebanese-Armenian press of 1960s

Avagyan G.A.
The New Media and Communication Department, Faculty of Journalism, YSU (Yerevan, Armenia)
gayaneavakyan@gmail.com

Abstract: The Lebanese-Armenian press of the 1960s presents the overall picture of the organization of education in the Diaspora, the interconnection between education and preservation of the Armenian identity, and the vision of the Diaspora’s future. The press attributes several missions to educational institutions. The article also discusses the sub-layers of each mission.
On the one hand, the Lebanese-Armenian press gives high importance to the preservation of the Armenian identity through the schools, and on the other hand – to the integration into the Lebanese society. The newspapers state that along with inculcating the Armenian identity and patriotic ideas, the schools also inculcate the party ideology. And the mission of preparing future community leaders is linked to the problem of party generation change.
The article concludes that the Lebanese-Armenian newspapers face the circumstances which are dictated by the unique status of the Diaspora, and based on that form the public-analytical speech.
Key words: Armenian identity, educational activities, school, inculcating the patriotism, the future of Diaspora, preparing the future leaders, changing of party generation, press, “Azdak”, “Ararat”, “Zartonk”, “Nairi”.

Հայապահպանման գործում 1960-ական թվականներին Լիբանանի հայ պարբերականները մեծ դեր են հատկացնում կրթությանը: Դպրոցին և կրթական մյուս հաստատություններին մամուլը մի քանի առաքելություն է վերագրում՝ անհատի կրթության ապահովում, նրա մեջ հայկական ինքնության դաստիարակում, հայրենասիրության սերմանում, ապագա ղեկավարների պատրաստում Սփյուռքի համայնքների համար և այլն:

Այս առաքելություններից յուրաքանչյուրը լիբանանահայ մամուլի էջերում ներկայա-

նում է մի քանի ենթաշերտերով.

1) Լիբանանի կրթված քաղաքացու և առհասարակ աշխարհաքաղաքացու պատրաստում,

2) Հայկական ինքնությանը զուգահեռ «կուսակցական ինքնության» դաստիարակում, «կուսակցականացված հայրենասիրության» սերմանում,

3) Հայկական ինքնությամբ թրծված կուսակցական գործչի, գաղափարական հետևորդի պատրաստում, սերնդափոխության ապահովում:

Անհատի կրթության ապահովում. առերեսում երկակի իրականության հետ

Սփյուռքի համայնքներում կրթական հաստատությունները տասնամյակներ շարունակ սերունդներին կրթելու կարևոր գործառույթ են իրականացրել: Դրանց անհրաժեշտությունը հատկապես ընդգծվում է, երբ հաշվի ենք առնում ընդունող երկրների լեզվի տիրապետման ցածր աստիճանը Ցեղասպանությունից հետո ստվարացած հայ համայնքներում: Նման պարագայում հայկական կրթական հաստատությունները լավագույն լուծումն էին՝ կրթությամբ ապահովելու հայ անհատին:

1960-ական թվականներին լիբանանահայ պարբերականների հրապարակումները ցույց են տալիս, որ դպրոցների առաջին առաքելության հիմքում գիտելիքներով զինված, մրցունակ, աշխատաշուկայում պահանջված անհատների պատրաստումն է Սփյուռքի համայնքներում: Թերթերը ներկայացնում են այդ գործող դպրոցները, որոնք հաճախ գտնվում են կուսակցական որևէ կառույցի հովանավորության տակ[1]: Նման շեշտադրումը վկայում է միևնույն համայնքի կրթական ասպարեզում կուսակցական անջրպետների գոյությունը: Անգամ «Զարթոնքի» հրապարակման մեջ կարելի է կարդալ հակադիր կուսակցությունների դպրոցներ չուղարկելու երևույթի մասին[2]:

Կրթական կառույցների քաղաքական բևեռացվածությունը փաստում են ուսումնասիրությունները[3]: Այդուհանդերձ, դրանք արձանագրում են նաև զարգացման այն փուլերը, որոնք հաղթահարել է հայկական կրթական համակարգը Լիբանանում 1950-60-ական թվականներին[4]:

Հայաստանի խորհրդայնացմանը չհամակերպվող «Ազդակն» իրեն բնորոշ ոճով հակադրում է կրթական ասպարեզում բոլոր գաղութների ջանքերը Խորհրդային Հայաստանի կրթական ոլորտի բացթողումներին[5]:

Լիբանանի հայ մամուլը հետևողական է ինչպես համայնքի, այնպես էլ Սփյուռքի ողջ տարածքում կրթական հաստատությունների գործունեության և որակի հարցում: 1960-ական թվականներին զովասանքի կողքին պարբերաբար հանդիպում են նաև դժգոհություններ կրթական հաստատությունների պակասի, կրթական ծրագրի, որակյալ մասնագետների, ֆինանսական պատճառով դպրոցների փակման, կրթության կազմակերպման գործում հայ հարուստների անգործության և այլ հանգամանքների վերաբերյալ, որոնք թերթերը դիտարկում են որպես օտար դպրոցներ աշակերտների հոսքի պատճառ[6]: Մտահոգությունները բոլոր թերթերը հայտնում են առավելապես ընդհանուր դատողությունների տեսքով: Մասնավորեցումներ գրեթե չեն կատարվում, և չեն առանձնացվում կրթա-

[1] Տե՛ս **Զոպեան Վ.,** Տիպար հայ աղջկանց վարժարան մը Պէյրութի մէջ. Դարուհի Յակոբեան, Զարթօնք, Բեյրութ, 1965, սեպտեմբերի 30, թիվ 3, «Ազգային Ռուբինեան վարժարանի ամսավերջի հանդէսը», Արարատ, Բեյրութ, 1967, հուլիսի 1, թիվ 196, **Շահինեան Յովհ.,** Լոս Անճելըսի երկու հայ դպրոցները, Ազդակ, Բեյրութ, 1968, հոկտեմբերի 8, թիվ 183

[2] Տե՛ս **Միքայէլեան Ա.,** Դաշնակցական դպրոց, Զարթօնք, Բեյրութ, 1968, օգոստոսի 17, թիվ 272

[3] Տե՛ս **Migliorino N.,** (Re)constructing Armenia in Lebanon and Syria: ethno-cultural diversity and the state in the aftermath of refugees crisis, Studies in forced migration , Vol. 21, New York, 2008, p. 116

[4] Տե՛ս **Migliorino N.,** (Re)constructing Armenia in Lebanon and Syria: ethno-cultural diversity and the state in the aftermath of refugees crisis, Studies in forced migration , Vol. 21, New York, 2008, pp. 113-115

[5] Տե՛ս **Վրոյր**, Դառն խոստովանութիւններ, Ազդակ, Բեյրութ, 1968, հունիսի 24 և 25, թիվ 92 և թիվ 93

[6] Տե՛ս **Խոշաֆեան Ն.,** Նշանակէտը հայ դպրոցն է, Արարատ, Բեյրութ, 1967, հունիսի 22, թիվ 188, **Մելքոնեան Զ.,** Մեր վարժարաններուն եւ մեր ուսեւորներուն մասին, Զարթօնք, Բեյրութ, 1966, սեպտեմբերի 24, թիվ 301, սեպտեմբերի 27, թիվ 1, հոկտեմբերի 4, թիվ 7, **Կեսարացի Վ.,** Սփիւռքահայութեան ապագան, Զարթօնք, Բեյրութ, 1968, օգոստոսի 3 և 4, թիվ 260 և թիվ 261, **Պալեան Յ.,** Օտար վարժարաններու հայ տղաքը, Ազդակ, Բեյրութ, 1965, հունվարի 20, թիվ 269

կան հաստատություններ: Մի կողմից՝ դա պայմանավորված է խնդրի համընդհանուր լինելու հանգամանքով, մյուս կողմից՝ կուսակցությունների «խոսափողները» թերևս չէին կարող մատնանշել նույն կուսակցության հովանավորությամբ գործող հաստատությունների թերացումները:

Այդուհանդերձ, «Ազդակի» քննադատության թիրախում է հայտնվում ՀԲԸՄ-ն (երբեմն նաև մի քանի հիմնադրամներ)՝ «քարացած գործելաոճով» և հին դպրոցները վերականգնելու փոխարեն նորերը բացելու սկզբունքով: ՀՅԴ մամուլի օրգանը տեսնում է կրթական ոլորտում *«միահեծան իշխանության»* հասնելու միտում և ՌԱԿ-ի ազդեցությամբ կողմնակալության դրսևորում անգամ կուսակցական հակումից զերծ դպրոցների հանդեպ[7]:

Ի տարբերություն «Ազդակի»՝ «Զարթոնքը» ՀԲԸՄ-ին հիմնականում դրականորեն է անդրադառնում, գովաբանում է միության հիմնած դպրոցները, և նորերի ավելացմամբ պայմանավորում Լիբանանի ու մյուս գաղութների զորացումը[8]:

Թերթերի տեսադաշտում է նաև հայկական դպրոցների ծրագիրը Լիբանանի պետական ծրագրին համապատասխանեցնելու և պետական քննությունները հաղթահարելու խնդիրը: Այս պարագայում արտահայտվում է Լիբանանի քաղաքացի պատրաստելու առաքելությունը: Քաղաքացի, ով կկարողանա օգտվել երկրում աշխատելու և կայանալու բոլոր հնարավորություններից:

1960-ականներն ուսումնասիրողները ևս փաստում են, որ հայ կրթության առաջնորդները կրթական ծրագրերը համապատասխանեցնում էին Լիբանանի ազգային ուսումնական ծրագրերին, որպեսզի հայ երիտասարդների մեջ կարողանար ձևավորվել «երկրորդ հայրենիքին» պատկանելու զգացում, իսկ գործնականում, որպեսզի կարողանային ստանալ ճանաչելի դիպլոմ, ինչը վճռորոշ էր համալսարաններ կամ աշխատավայր մուտք գործելու համար[9]:

Թերթերը զգուշորեն արտահայտում են առաջացող երկվությունը. մի դեպքում դպրոցը պետք է հարգի պետական կարգը, ապահովի ընդունված ծրագրով, որպեսզի հայ աշակերտները դուրս չմնան ընդունված սահմանագծից և հետագայում իրենց տեղը գտնեն երկրում: Մյուս կողմից բարդանում է երկրորդ՝ հայ պատրաստելու առաքելությունը, քանի որ արդյունքում կրճատվում են հայերենով դասավանդվող առարկաները կամ դառնում լրացուցիչ[10]:

Ի հայտ է գալիս, մի իրողություն, որին այս կամ այն չափով բախվում է Սփյուռքի ներկայացուցիչը աշխարհի տարբեր անկյուններում: Խնդիրը երկակի իրականության հետ առերեսումն է: Մեկը թելադրում է ամեն գնով հայկական դիմագծի պահպանում նոր միջավայրում, մյուսը՝ ինտեգրում այդ հասարակությանը՝ մարգինալային անձի կարգավիճակում չմնալու համար[11]:

Պետական քննություններին նախապատվությունը տալու, դրանք հաղթահարելու համար հայերենով դասավանդվող առարկաները կրճատելու խնդրի միջոցով «Ազդակը» արձանագրում է հայկական կրթական հաստատությունների ինքնավարության թվացյալ լինելը[12]: Այդուհանդերձ, կառավարությանը մեղադրելու փոխարեն դրսևորվում է ճիշտ մարտավարություն ընտրելու կարևորությունը: «Զարթոնքը», կրթական ծրագրերի զուգակցումն ընկալելով բնականոն գործընթաց, իր հրապարակախոսությունը ձևավորում է գոր-

---

[7] Տե՛ս **Թէօլէօլեան Մ.,** «Դափնիներու վրայ չքնանալու» եւ «Համազգային» նկարագիր ստանալու համար…, Ազդակ, Բեյրութ, 1968, փետրվարի 14, թիվ 292, **Թէօլէօլեան Մ.** Քանի մը կէտեր, իրատես հաստատումներու առիթով, Ազդակ, Բեյրութ, 1968, ապրիլի 5, թիվ 28, **Թէօլէօլեան Մ.,** Այո,-«Ազգին հանդէպ մեղանչում» պիտի ըլլայ, եթէ…Ազդակ, Բեյրութ, 1968, ապրիլի 6, թիվ 29

[8] Տե՛ս «Կիրակի, 1 դեկտեմբեր 1968 «Մշակոյթի օր» Հ.Բ.Ը.Մ.ի», Զարթօնք, Բեյրութ, 1968, նոյեմբերի 30, թիվ 55, **Վարժապետեան Տ.,** Մշակոյթի ճանապարհով, Զարթօնք, Բեյրութ, 1967, ապրիլի 15, թիվ 165

[9] Մանրամասն տե՛ս **Migliorino N.,** (Re)constructing Armenia in Lebanon and Syria: ethno-cultural diversity and the state in the aftermath of refugees crisis, Studies in forced migration , Vol. 21, New York, 2008, pp. 116-117

[10] Տե՛ս «Ինչ բանի կը ծառայէ. . . հայերէն լեզուն. . .» Նայիրի, Բեյրութ, 1968, սեպտեմբերի 22, թիվ 18

[11] *«Մարգինալների խմբի մեջ մտնում են այն անձինք, ովքեր կորցրել են իրենց հոգեկան կապը ավանդական, հարազատ, էթնիկական հանրույթի հետ, բայց դեռևս չեն գտել իրենց տեղը նոր հանրույթում»* (**Նալչաջյան Կ.**, Էթնիկական ինքնագիտակցություն, Եր., Զանգակ-97, 2003, էջ 62)

[12] Տե՛ս **Իշխան Մ.,** Հայերէն լեզուի ուսուցումը եւ պետական քննութիւնները, Ազդակ, Բեյրութ, 1968, հոկտեմբերի 17, թիվ 191

ծընթացի իրագործումը համայնքում արդյունավետ կազմակերպելու գաղափարի շուրջ[13]:

Իրավիճակի լավագույն ձևակերպումը տալիս է Ն. Միգլիորինոն. «*Հայկական դպրոցների կրթական ողջ նախագիծը այլևս միայն այն չէր, որ պահպանվեր (կամ զարգացվեր) հայկական մշակույթը և ոչ նույնիսկ զուտ գոյատևման գործիքակազմ տալը հայ նոր սերնդին՝ Սփյուռքում ապրելու համար, այլ ավելի հավակնոտ էր. նոր սերնդին պատրաստել լինելու հայ և լիբանանցի միաժամանակ*»[14]:

Հայկական ինքնություն և «կուսակցականացված հայրենասիրություն»

Թերթերը միաձայն կարծում են, որ համայնքի կրթական հաստատությունների գլխավոր առաքելությունը սաների հայեցի դաստիարակումն է, նրանց ինքնության հայկականության ամրապնդումը: Այդ շարքը շարունակվում է նաև **հայկական միջավայրի ապահովման և հայրենասիրական գաղափարների սերմանման** դրույթներով: Դրանցից շեղումը կամ ոչ լիարժեք իրագործումը պարբերականները ցավով են արձանագրում:

Այս առաքելության իրագործումը թերթերը տեսնում են հայոց լեզվի, պատմության, գրականության, երգի, պարի և հայկականությանն առնչվող այլ դասաժամերի պարտադիր ուսուցման մեջ: Ընդհանուր առմամբ, կրթարանների միջոցով հայկական արմատներին մերձենալը թերթերը նույն կերպ են պատկերացնում: Սակայն երբեմն վերհանվում է հայոց պատմությանը և արմատներին տարբեր ոգով ծանոթացնելու խնդիրը[15]: Հրապարակումներում թեթև ակնարկներն անգամ վկայում են, որ յուրաքանչյուր դպրոցում ուսուցանվող հայոց պատմությունը միևնույնը չէ: Պատմությունը մեկնաբանվում է յուրաքանչյուր կուսակցության դիտանկյունից, կամ ավելին՝ առանձին ուսուցանվում է կուսակցության պատմություն: Փաստորեն, համայնքի ներսում ձևավորվում են տարբեր պատկերացումներ պատմական արմատների մասին:

Նույն կերպ Խորհրդային Հայաստանի հանդեպ վերաբերմունքը պայմանավորում է դասավանդվող պատմության վերաիմաստավորումը: Սփյուռքի դպրոցների կապը Խորհրդային Հայաստանի հետ ամեն թերթ մեկնաբանում է՝ իր համոզմունքներից ելնելով: Խորհրդային Հայաստանի հանդեպ հակոտնյա դիրքորոշմամբ պայմանավորված՝ կրթական հարցերում միջամտությունը մի թևը համարում է անհատի հայկական ինքնության ամրապնդման գործում խանգարող, մյուսը՝ նպաստող գործոն:

Օրինակ՝ «Արարատը» կողմնակից է, որպեսզի կրթարաններում հայրենասիրության սերմանումը զուգակցվի Հայաստանում հաստատված խորհրդային կարգերի հանդեպ դրական վերաբերմունքի ջատագովմամբ:

«Ազդակը» լուսաբանում է ՀՅԴ դպրոցների բոլոր այն նախաձեռնությունները, որոնցում պատմական անցյալն է վկայակոչվում, տոնվում են հերոսամարտերը, Հայաստանի առաջին հանրապետության հռչակումը: Թերթը կրթարանների միջոցով ազատ, անկախ հայրենիքի համար պայքարող հայի ինքնության ամրապնդման կողմնակիցն է:

«Զարթոնքը» վկայակոչում է պատմական անցյալը, բայց ընդունում է ներկան, խաղաղ, ապահով խորհրդային իրականությունը Սփյուռքի երիտասարդների համար կրթության միջոցով ընդունելի դարձնելը:

«Նաիրին» նույնպես կողմնակից է կրթական ոլորտից սկսած Խորհրդային Հայաստանի հետ կամուրջ հաստատելու և հայրենիքի իրականությունն ընդունելու գաղափարին:

Հայեցի կրթությանը զուգահեռ թերթերը կարևորում են դպրոցներում հայկական միջավայրի ապահովման առաքելությունը: Պարտադիր առարկաներ անցնելուց զատ հայրենակիցների, հայ ուսուցիչների հետ փոխհարաբերությունները դիտարկվում է որպես անհրաժեշտ գործոն Սփյուռքում ծնված պատանուն ազգային արմատների և իր ինքնության հետ ամուր կապելու համար: Սա-

---

[13] Տե՛ս **Տատուրեան Ե.,** Մեր երկրորդական վարժարանները եւ լիբանանեան պաքալորէան, Զարթօնք, Բեյրութ, 1965, հոկտեմբերի 2 և 3, թիվ 5 և թիվ 6

[14] **Migliorino N.,** (Re)constructing Armenia in Lebanon and Syria: ethno-cultural diversity and the state in the aftermath of refugees crisis, Studies in forced migration , Vol. 21, New York, 2008, p. 117

[15] ՀՅԴ դպրոցները մեղադրվում են անգամ հայրենադավ ոգով դաստիարակելու մեջ (տե՛ս «Հայեցի դաստիարակութիւն», Արարատ, Բեյրութ, 1961, հուլիսի 16, թիվ 207)

կայն պարբերականների հրապարակումներն ուսումնասիրելիս նկատելի է, որ երիտասարդները սերտորեն կապվում են առավելապես համայնքի այն թևի հետ, որի քաղաքական գաղափարախոսությունը, եկեղեցու հանդեպ դիրքորոշումը տարիներ շարունակ ներարկվել են կրթական գործունեության միջոցով:

Ըստ էության, հայկական ինքնության և հայրենասիրական գաղափարների սերմանմանը զուգահեռ՝ թերթերն արձանագրում են կրթարանների միջոցով ինքնության մեջ կուսակցական ջրբաժանի անցկացումը և կուսակցական գաղափարախոսության սերմանումը: Անգամ ներարկվող հայրենասիրությունն է «կուսակցականացված» և տարբերվում է գաղափարական նրբերանգներով:

Հայրենասեր մասնագետների պատրաստումը և կուսակցական սերնդափոխությունը՝ կրթական կյանքի կարևոր խնդիրներ

1960-ական թվականներին Լիբանանում տպագրվող հայկական թերթերը ընթերցողների մեջ արմատավորում են նաև կրթական գործի մասնագետների և համայնքների ապագա առաջնորդների պատրաստման առաքելությունը: Այս կեցվածքում արտահայտվում է նրանց մտահոգությունը Սփյուռքի ապագայի վերաբերյալ:

Հատկանշական է, որ Սփյուռքի մասին խոսելիս ուսումնասիրողներն ընդգծում են *նախնիների հայրենիքը որպես իրական, իդեալական տուն դիտարկելու և այնտեղ նպաստավոր պայմանների դեպքում վերադառնալու* գաղափարը[16]: Սակայն այդ տարիներին վերադարձի տեսլականը, այնուհանդերձ, մշուշոտ է: Թերթերին դեռևս մտահոգում է Սփյուռքի լինելության խնդիրը՝ ազգային դիմագծով: Հետևաբար կրթարանների հաջորդ առաքելությունը Սփյուռքի մտավորական ներուժի վերարտադրման հարցն է:

Հայտնի է, որ Լիբանանի հայկական դպրոցները կրթական գործունեության լայն ազատություն են վայել 1960-ականներին: Տեղի հայ համայնքը օժտված է եղել Սփյուռքի կենտրոն համարվելու բոլոր նախադրյալներով, բայց և այնպես մասնագետներ պատրաստելու գործում բախվել է մի շարք խնդիրների:

Առաջին հայացքից նպաստավոր դրության կողքին թերթերը մատնանշում են երիտասարդների՝ համայնքի հարցերով զբաղվելու պատասխանատվությունից խուսափելը, մայրենիի ոչ բավարար իմացությունը, վարժարանների թերացումը, մասնագետների ցածր վարձատրությունը, քաղաքական ու կրթամշակութային առանցքային կառույցների ծրագրի բացակայությունը և այլն: Կանխատեսում են նաև, որ գաղութահայությունը մոտ ապագայում հայ գրող, հայագետ, Հայ դատը հետապնդող, համայնքի հանրային ծառայող ու մամուլի գործիչ չի ունենա[17]:

Պատճառները քննելիս թերթերի էջերում բանավեճեր են ծավալվում ավագ սերնդի և երիտասարդների միջև: Յուրաքանչյուրին վերագրվում է մեղավորության իր չափաբաժինը[18]:

Հրապարակումներում դիտարկվում են ինչպես հավաքական մակարդակով խնդիրը լուծելու, այնպես էլ վերջինի՝ անհատական մակարդակով պայմանավորված լինելու հանգամանքները: Նշվում է, որ մի կողմից՝ համայնքում կրթական գործունեությունը կարող է նպաստել ազգային կյանքով և նրա ապագայով մտահոգ ապագա առաջնորդների սերնդի պատրաստմանը: Մյուս կողմից՝ յուրաքանչյուրի որոշումից է կախված այդպիսի ապագայի ընտրությունը, իսկ այդ գործում գլխա-

[16] Տե՛ս **Safran W.**, "Diasporas in modern societies: myths of homeland and return", in Diaspora, Volume 1, no. 1, Spring 1991, p. 83-84

[17] Առաքելության իրագործմանը խանգարող խնդիրների քննարկումները տե՛ս **Թորոսեան Յ.,** Հայ դպրոց, հայ ուսուցիչ, հայ մամուլ…, Զարթօնք, Բեյրութ, 1967, մարտի 29, թիվ 150, **Պ.Ս.**, Եթէ այժմէն չմտածենք, Ազդակ, Բեյրութ, 1968, սեպտեմբերի 6, թիվ 156, **Թէօլէօլեան Մ.,** Հայութիւնը՝ իր վէրքերով ու երգերով. Ճարճատիւններ, Ազդակ, Բեյրութ, 1968, մարտի 1, թիվ 305, **Իշխան Մ.,** Հայ համալսարանական ուսանողները, Ազդակ, Բեյրութ, 1968, օգոստոսի 21, թիվ 142

[18] Տե՛ս **Մարգարեան Մ.,** Կոչ հայ ուսանողութեան, Նայիրի, Բեյրութ, 1962, նոյեմբերի 4, թիվ 25, **Արծրունի Ա.,** Դժգոհութիւններ, Ազդակ, Բեյրութ, 1968, հոկտեմբերի 10, թիվ 185, «Նամակ խմբագրութեան», Ազդակ, Բեյրութ, 1968, սեպտեմբերի 19, թիվ 167, **Պ.Ս.,** Նամակ՝ նամակագրին, Ազդակ, Բեյրութ, 1968, սեպտեմբերի 23, թիվ 170, **Թէօլէօլեան Մ.,** «Պէտք ունին»…, Ազդակ, Բեյրութ, 1968, սեպտեմբերի 24, թիվ 171, **Իշխան Մ.,** Դարձեալ հայ համալսարանականներուն հետ, Ազդակ, Բեյրութ, 1968, սեպտեմբերի 25, թիվ 172

վոր գործոնը անհատի գիտակցությունն է և ընտրությունը: Հետևաբար հայապահպանության ներարկմամբ կրթական ոլորտում ավագ սերնդի ջանքերը միայն մասնակիորեն կարող են հող նախապատրաստել անհատի ընտրության համար:

Թերթերը լուծումը տեսնում են կուսակցությունների, հիմնադրամների, միությունների, մամուլի, մտավորականության ծրագրերի վերանայման և տնտեսական բոլոր աղբյուրների համախմբման մեջ[19]: Ընդհանուր այս կեցվածքում կան նրբերանգային տարբերություններ: Եթե «Ազդակը» համարձակվում է քննադատել ՀԲԸՄ-ի և տարբեր հիմնադրամների անարդյունավետ աշխատանքը, ապա «Զարթոնքը» և «Արարատը» ապավինում են ոչ միայն այդ կառույցների, այլև Խորհրդային Հայաստանի կառավարության ձեռնարկումներին[20]:

Կրթական ոլորտի համընդհանուր նպատակի կողքին գրեթե անքակտելիորեն արծարծվում է նաև կուսակցական սերնդափոխության խնդիրը: Ըստ էության, թերթերը նաև հայ քաղաքական կուսակցությունների գոյության խնդիրն են լուծում, ընթերցողի մեջ սերմանում այն գիտակցությունը, որ անհրաժեշտ է պատրաստել ապագա քաղաքական առաջնորդներ[21]:

Բնականաբար, պաշտոնաթերթերից յուրաքանչյուրն իր կուսակցության գաղափարախոսական շղթայի շարունակականությամբ է անհանգստացած: Ուստի հարցականի տակ է դրվում Սփյուռքի լինելության խնդրի լուծման միասնական տեսլականի քաղաքականության ձևավորումը և համատեղ ջանքերով իրագործումը:

Այսպիսով, 1960-ական թթ. լիբանանահայ մամուլն ընդհանուր պատկեր է ձևավորում Սփյուռքում կրթական գործի կազմակերպման, ներհամայնքային ջանքերի, կրթության ու հայապահպանության միջև կապի, Սփյուռքի ապագայի տեսլականի մասին: Թերթերը, կուսակցական կողմնորոշմամբ հանդերձ, ուշագրավ դիտարկումներ են անում կրթական ասպարեզում ի հայտ եկած խնդիրների շուրջ: Նրանք առերեսվում են Սփյուռքի առանձնահատուկ կացության թելադրած հանգամանքներին և հրապարակային-վերլուծական խոսքը ձևավորում՝ հաշվի առնելով վերոնշյալ իրողությունները:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Migliorino N.,** (Re)constructing Armenia in Lebanon and Syria: ethno-cultural diversity and the state in the aftermath of refugees crisis, Studies in forced migration , Vol. 21, New York, 2008, 256 pp.
2. **Safran W.**, "Diasporas in modern societies: myths of homeland and return", Diaspora: A Journal of Transnational Studies, Volume 1, no. 1, Spring 1991, 83-99 pp.
3. **Նալչաջյան Կ.**, Էթնիկական ինքնագիտակցություն, Երևան, 2003թ., 215 էջ
4. «Ազդակ», Բեյրութ, 1965թ., հունվարի 20, թիվ 269
5. «Ազդակ», Բեյրութ, 1968թ., փետրվարի 14, թիվ 292
6. «Ազդակ», Բեյրութ, 1968թ., մարտի 1, թիվ 305
7. «Ազդակ», Բեյրութ, 1968թ., մարտի 2, թիվ 306
8. «Ազդակ», Բեյրութ, 1968թ., ապրիլի 5, թիվ 28
9. «Ազդակ», Բեյրութ, 1968թ., ապրիլի 6, թիվ 29
10. «Ազդակ», Բեյրութ, 1968թ., հունիսի 24, թիվ 92
11. «Ազդակ», Բեյրութ, 1968թ., հունիսի 25, թիվ 93
12. «Ազդակ», Բեյրութ, 1968թ., օգոստոսի 21, թիվ 142
13. «Ազդակ», Բեյրութ, 1968թ., սեպտեմբերի 6, թիվ 156
14. «Ազդակ», Բեյրութ, 1968թ., սեպտեմբերի 19, թիվ 167
15. «Ազդակ», Բեյրութ, 1968թ., սեպտեմբերի 23, թիվ 170
16. «Ազդակ», Բեյրութ, 1968թ., սեպտեմբերի 24, թիվ 171
17. «Ազդակ», Բեյրութ, 1968թ., սեպտեմբերի 25, թիվ 172
18. «Ազդակ», Բեյրութ, 1968թ., հոկտեմբերի 8, թիվ 183
19. «Ազդակ», Բեյրութ, 1968թ., հոկտեմբերի 10, թիվ 185

[19] Տե՛ս **Թէօլէօլեան Մ.,** Հայութիւնը՝ իր վէրքերով ու երգերով. Եթէ կ՚ուզենք վէրքը…երգի վերածել, Ազդակ, Բեյրութ, 1968, մարտի 2, թիվ 306, **Քեշիշեան Գ.,** Երիտասարդութիւնը՝ ազգապահպանման անփոխարինելի կռուանը, Զարթօնք, Բեյրութ, 1966, հունվարի 13, թիվ 88

[20] Բավական է կարդալ Սփյուռքի ուսուցիչների և աշակերտների համար կազմակերպված Հայաստան այցերի, վերապատրաստումների մասին հրապարակումները (Օրինակ՝ «Սփիւռքահայ ուսուցիչները Հայաստանում», Զարթօնք, Բեյրութ, 1962, սեպտեմբերի 15, թիվ 297, «Պուլկարահայ ուսուցիչները որակաւորման դասընթացքներու հետեւեցան», Արարատ, Բեյրութ, 1967, սեպտեմբերի 25, թիվ 269)

[21] Տե՛ս **Խմբագրական,** Հնչակեան կուսակցութեան 80ամեակին 80 երիտասարդներ մտան կազմակերպութեան շարքերը, Արարատ, Բեյրութ, 1967, մայիսի 27, թիվ 166

20. «Ազդակ», Բեյրութ, 1968թ., հոկտեմբերի 17, թիվ 191
21. «Արարատ», Բեյրութ, 1961թ., հուլիսի 16, թիվ 207
22. «Արարատ», Բեյրութ, 1967թ., մայիսի 27, թիվ 166
23. «Արարատ», Բեյրութ, 1967թ., հունիսի 22, թիվ 188
24. «Արարատ», Բեյրութ, 1967թ., հուլիսի 1, թիվ 196
25. «Արարատ», Բեյրութ, 1967թ., սեպտեմբերի 25, թիվ 269
26. «Զարթօնք», Բեյրութ, 1962թ., սեպտեմբերի 15, թիվ 297
27. «Զարթօնք», Բեյրութ, 1965թ., սեպտեմբերի 30, թիվ 3
28. «Զարթօնք», Բեյրութ, 1965թ., հոկտեմբերի 2, թիվ 5
29. «Զարթօնք», Բեյրութ, 1965թ., հոկտեմբերի 3, թիվ 6
30. «Զարթօնք», Բեյրութ, 1966թ., հունվարի 13, թիվ 88
31. «Զարթօնք», Բեյրութ, 1966թ., սեպտեմբերի 24, թիվ 301
32. «Զարթօնք», Բեյրութ, 1966թ., սեպտեմբերի 27, թիվ 1
33. «Զարթօնք», Բեյրութ, 1966թ., հոկտեմբերի 4, թիվ 7
34. «Զարթօնք», Բեյրութ, 1967թ., մարտի 29, թիվ 150
35. «Զարթօնք», Բեյրութ, 1967թ., ապրիլի 15, թիվ 165
36. «Զարթօնք», Բեյրութ, 1968թ., օգոստոսի 3, թիվ 260
37. «Զարթօնք», Բեյրութ, 1968թ., օգոստոսի 4, թիվ 261
38. «Զարթօնք», Բեյրութ, 1968թ., օգոստոսի 17, թիվ 272
39. «Զարթօնք», Բեյրութ, 1968թ., նոյեմբերի 30, թիվ 55
40. «Նայիրի», Բեյրութ, 1962թ., նոյեմբերի 4, թիվ 25
41. «Նայիրի», Բեյրութ, 1968թ., սեպտեմբերի 22, թիվ 18

Сдана/Հանձնվել է՝ 12.12.2019
Рецензирована/Գրախոսվել է՝ 17.12.2019
Принята/Ընդունվել է՝ 20.12.2019

Алгоритм Гермеса как диалектика гармонии

Григорьян Э.Р.
доктор философских наук, профессор,
Общественный институт политических и социальных исследований Черноморско-Каспийского региона (Ереван, Армения)
ernestgrig@hotmail.com

Ключевые слова: философия, диалектика, целое, сущность, социальный организм, гармония, алгоритм, противоречия

Հերմեսի ալգոռիթմը որպես ներդաշնակության դիալեկտիկա

Գրիգորյան Է.Ռ.
փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Սեվծովյան-Կասպյան տարածաշրջանի քաղաքական եվ սոցիալական հետազոտությունների հանրային ինստիտուտ (Երևան, Հայաստան)
ernestgrig@hotmail.com

Ամփոփում՝ Հոդվածում փորձ է արվում զարգացնել Հերմես Տրիսմեգիստի կոնցեպտուալ գծի վրա հիմնված ամբողջականության հասկացությունը, և դուրս բերել մարդկության զարգացման ներկա փուլի համար ավելի արդյունավետ և սուր մտածողության ուղիների մի շարք: Քանի որ աշխարհը միասնական է, ինչպես և արտացոլվում են տիեզերքի օրենքները իր բոլոր անկյուններում և պատմական իրադարձությունների անվերջանալի շարքում: Հենվելով աշխարհի ամբողջականության հասկացության վրա՝ իրադարձությունների բազմազանության այս անհերևակայելի քաոսին տալիս է տիեզերական մասշտաբի միասնական իմաստ:
Վճռորոշ բառեր՝ փիլիսոփայություն, դիալեկտիկա, ամբողջություն, էությունը, սոցիալական մարմինը, ներդաշնակություն, ալգոռիթմ, հակասություններ

Hermes Algorithm as a Dialectic of Harmony

Grigoryan E.R.
Doctor of philosophy, professor
Public Institute of Political and Social Research of Blacksea-Caspian Region (Yerevan, Armenia)
ernestgrig@hotmail.com

Abstract: The article attempts to develop Hermes Trismegistus' conceptual line, based on the concept of wholeness, and to deduce a number of more effective and acutely actual ways of thinking for the current stage of human development. Since the world is one, as are the laws of the Universe in all its corners, they are reflected and in all the endless series of historical events. Relying on the concept of the wholeness of the world gives this unimaginable chaos of a variety of events a single Meaning of universal scale.
Keywords: philosophy, dialectics, wholeness, essence, social organism, harmony, algorithm, contradictions

В уничтожении противоречий, в связывании их в единое целое, более высокое и дающее основание обоим крайностям, заключается цель истинного искателя.
Дж. Бруно

Агрессивная и экспансионистская государственная философия американского правящего класса плодит военные конфликты по всему миру, отбрасывая весь мир на более примитивные уровни социокультурного существования. Истоки этой философии мы видим в наследии Аристотеля, которое намеренно упрощалось и в течение веков приобрело статус навязываемого народам «ярма» для укрощения их созидательного духа. Приход к власти идеологий, основанных на логике исключения противоречий (или-или): да или нет, сегодня привел к тому, что познание окружающего мира ограничивается приоритетами логики противоречия, предпочтением анализа – разделения вещей и людей – перед синтезом, их единством, что, в свою очередь, привело сегодня мир к политике конформизма ко злу и возникновению мирового терроризма.

Дело не в самом учении Аристотеля, а в том, что выхолощенная на его основе схема, увековеченная во всех системах образования, стала догмой и препятствием для более развитых и прог-

рессивных подходов. Суть этой схемы – принцип исключенного третьего: либо А, либо не-А. Как говорил Гегель по этому поводу, *формальное мышление возводит себе в закон тождество, низводит противоречивое содержание ... в сферу представления ... выступает перед сознанием без взаимного соприкосновения (цит по (1)).* Такое однобокое мышление было задано логикой Аристотеля, провозглашающей принцип исключенного третьего, принцип несводимости, непримиримости противоположных явлений и понятий. Современные научные знания в основном базируются на формальной логике Аристотеля, исключающей целостность окружающего мира.

Далее эта линия была продолжена Гегелем в виде упора на борьбу (войну) этих противоположностей, и как образец диалектического мышления стала основополагающим принципом современной западной цивилизации, составила остов всех действий сориентированного таким образом (с помощью образования) отряда человечества. Применяемые законы отрицания противоречия и тождества, опирающиеся на изначальное отрицание связей целого с процессом раздвоения системы понятий, не могут привести к истине. Процесс познания как достижение истины предполагает единство анализа и синтеза.

Но задолго до Аристотеля другой мыслитель древности, Гермес Трисмегист, предложил иную схему мышления и познания природы, вошедшую, по нашему предположению, частично и в восточный – китайский и индийский – цивилизационный багаж. Но и там наследие Гермеса не было раскрыто должным образом. Попробуем в данной статье продолжить концептуальную линию Гермеса и вывести ряд более эффективных и остроактуальных для сегодняшней стадии развития человечества путей мышления.

Согласно Гермесу, с мнением которого мы полностью солидаризуемся, хотя и несколько модернизируя его, мир, в котором мы живем, Вселенная - это целостность, система, а каждый компонент этой системы содержит все пронизывающие систему воздействия и должен "работать" на эту целостность. Все совершается по законам, присущим целостности. Инородное тело не может в ней появиться. Даже разделенные миллионами световых лет галактики при наличии схожих с Землей условий породят весьма близкий к человеку тип разумного существа.

Живая природа стремится к новым событиям через гармонизацию своего внутреннего развития и путем взаимодействия с окружающей средой по золотой пропорции, с учётом памяти о своём возникновении и развитии (кумулятивный алгоритм Фибоначчи). Бытие, как открытая система, стремясь к новым событиям, состоит из разных частей. Между этими частями возникают границы, между ними могут возникать потоки энергии, вещества и информации. При этом каждая часть или подсистема стремится стать оптимальным преобразователем каких-то конкретных параметров энергии, вещества и информации по золотой пропорции. Эта динамичная организация материи достигает нового способа преобразования поступающей, в том числе и социальной энергии, через собственное развитие с учётом памяти о своём развитии, начиная с возникновения. При этом рост и развитие земной природы изменяет постоянно свойства глобальной космической окружающей среды.

Мир един и едины законы Вселенной во всех ее уголках. Поэтому в жизни каждой из цивилизаций, как и в жизни каждого человека, отражается единый логический закон Вселенной. И нужно разглядеть его в нескончаемой череде исторических событий. Ибо тогда весь этот невообразимый хаос многообразия событий вдруг приобретает Смысл вселенского масштаба.

Формы вещей жестко подчинены математическим закономерностям. Фигура тела человека и его органов – это совершенные и единственно возможные результаты эволюционной трансформации. Нет ничего в человеке, что не содержалось бы в более ранних и более примитивных формах. А если что-то кажется присущим только человеку, то возникает вопрос: как могло появиться нечто, не имеющее предпосылки, или предварительной фазы созревания, или схемы действия, повторение которой дало новый результат? Удивительно, как точно много тысяч лет назад предвосхитил эту формулу Гермес Трисмегист: «Вечное не рождено иным, оно рождено самим собой или, скорее, оно творит себя бесконечно»; «если Творец есть не что иное, как то, что творит, он неизбежно творит сам себя, ибо именно творя, становятся Творцом»; «он есть то, что есть, и то, чего нет» (2).

Современный ученый легко распознает в этих утверждениях сквозящую идею фрактала, гомоморфизма, симметрии, золотой пропорции и всего того арсенала естественно-научных методов, которые уже прочно обосновались в научной методологии. Но учтите, это было развито уже более 4 тысяч лет назад! Математика шумеров, как и древних египтян уже содержала золотые пропорции, применявшиеся, например, при строительстве пирамид. Как далеко могло бы уйти человечество, если бы кумулятивное развитие не прерывалось бы нашествием варваров, которым уже Аристотель был пределом понимания.

Аналогии

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 2-ից, կենսաթոշակային ֆոնդերի մասնակիցների ճնշող մեծամասնությունը՝ 99,17%-ը, ընտրել է պահպանողական ֆոնդերը, և միայն 0,43%-ն է ընտրել ավելի նվազ ռիսկային՝ կայուն եկամտային ֆոնդը և մոտ 0,4%-ը՝ ամենաշատ ռիսկային՝ հավասարակշռված ֆոնդը: Սա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ մասնակիցների մեծ մասը ֆոն

[3] OECD Pensions Outlook 2018 http://www.actuarialpost.co.uk/downloads/cat_1/OECD-PensionsOutlook2018-master-181109.pdf

[4] ԷՀ պետական կենսաթոշակային կենտրոնի պաշտոնական կայք, Pensionikeskus https://www.pensionikeskus.ee/en/statistics/ii-pillar/funded-pension-daily-statistics/

[5] Olga Rajevska, "Funded Pillars in the Pension Systems of Estonia, Latvia and Lithuania", Article in Economics and Business, 23:83-89, January 2013 https://www.researchgate.net/publication/280067255_Funded_Pillars_in_the_Pension_Systems_of_Estonia_Latvia_and_Lithuania

[6] Pension Funds Online, published by Wilmington Publishing & Information https://www.pensionfundsonline.co.uk/content/country-profiles/estonia/9



Գծապատկեր 3: Կենսաթոշակային ֆոնդերի իրական եկամտաբերությունները ԷՀ-ում և ՀՀ-ում 2014-2017թ. (OECD Pension Market in Focus 2018 http://www.oecd.org/daf/fin/private-pensions/Pension-Markets-in-Focus-2018.pdf)

դի և կառավարչի ընտրություն չի կատարել, և համակարգն, ըստ ՀՀ օրենսդրության, ավտոմատ ընտրություն է կատարել նրանց փոխարեն՝ ընտրելով միջին ռիսկայնություն ունեցող պահպանողական ֆոնդը: Ասվածը վկայում են նաև ՀՀ կենտրոնական բանկի ներկայացրած պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի վերաբերյալ վիճակագրական տվյալները, որտեղ փայերի քանակի փոփոխության մասին աղյուսակի «ծրագրային մոդուլով» ընտրված փայեր (այսինքն, մասնակիցը չի ընտրել ֆոնդ և կառավարիչ, այլ համակարգի ավտոմատ ընտրության հիման վրա են ձեռքբերվել) տողից պարզ է դառնում, որ հենց այդ եղանակով են ընտրված պահպանողական ֆոնդերի 3830083 փայերը, որոնք կազմում են կենսաթոշակային ֆոնդերի փայերի քանակի շուրջ 96,28%-ը:[1] Այս հանգամանքը կարող է պայմանավորված լինել ինչպես մասնակիցների ֆինանսական գրագիտությամբ, այնպես էլ նրանց կողմից համակարգի գործունեության նկատմամբ էական անտարբերությամբ: Այս առումով տարբերվող է էստոնացիների մոտեցումը, որոնց մեծ մասը ոչ միայն նախընտրում է ավելի ռիսկային ֆոնդերը, այլ նաև մասնակիցները բավականին հաճախ են փոփոխում իրենց ֆոնդերի տեսակները և կառավարիչներին, ինչն էլ չի կարող բարենպաստ միջավայր ստեղծել երկարաժամկետ ներդրումների համար[2]:

Էստոնիան նորարարական կարգավորման մոտեցումներով շուկա է, չնայած այն ակտիվների կառավարիչների համար մեծ շուկա չէ՝ կախված երկրի փոքր չափերից: Էստոնիայում պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կարգավորումը առանձնանում է. չկան նվազագույն երաշխիքներ եւ գրեթե չկան սահմանափակումներ միջազգային ներդրումների եւ միջոցների տրամադրման ռիսկ/եկամտաբերության տարբեր պրոֆիլների վրա: Միջազգային ներդրումներին վերաբերող կանոնները զգալիորեն ազատական բնույթ են կրում: Եվրոպական տնտեսական գոտում, ՏՀԶԿ-ի երկրներում և մի շարք այլ երկրներում ներդրումների սահմանափակումներ չկան, բայց կան որոշակի ներդրումային սահմանաչափեր կոնկրետ գործիքների վրա:

ՀՀ օրենսդրությունն ավելի խիստ սահմանափակումներ է նախատեսում կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների ներդրման նկատմամբ: Կենսաթոշակային ֆոնդերի ակտիվների ներդրումները կատարվում են հայկական դրամով և արտարժույթով, ընդ որում՝ արտարժույթով ներդրումները չեն կարող գերազանցել կենսաթոշակային ֆոնդի միջոցների 40%-ը (կարող ենք ներդրվել ՏՀԶԿ և ԵՄ անդամ պետություններում): Դա նշանակում է, որ գումարի առնվազն 60%-ը ներդրվում է Հայաստանում հայկական դրամով՝ խթանելով երկրի տնտեսությունը: Կենսաթոշակային ֆոնդի մասնակիցների կատարած պարտադիր կուտակային վճարների ամբողջ գումա-

[1] ՀՀ Կենտրոնական բանկ, Ֆինանսական կազմակերպությունների վիճակագրություն, Պարտադիր կենսաթոշակային ֆոնդեր https://www.cba.am/am/SitePages/statfinorg.aspx

[2] Reeta Paakkinen, "Pensions in CEE: New dawns for Baltic pensions", Intelligence on European Pensions and Institutional Investment, January 2017 (magazine) https://www.ipe.com/pensions/pensions-in/cee/pensions-in-central-and-eastern-europe-new-dawns-for-baltic-pensions/10016931.article

րի՝ ճշգրտված տարեկան գնաճով, վերադարձելիությունը երաշխավորվում է ՀՀ և երաշխիքային ֆոնդի միջոցների հաշվին[3]:

Կուտակային համակարգի հաջողության գլխավոր նախապայման է կուտակվող միջոցներով ներդրումների քաղաքականությունը, ուստի հայաստանյան օրենսդրությունը այս տեսանկյունից թեպետ բավականին խիստ է, սակայն ՀՀ կենսաթոշակային ֆոնդերի՝ վերջին տարիների գրանցած արդյունքները եկամտաբերության առումով շատ ավելի բարձր են, քան առավել «ազատական» օրենսդրությամբ Էստոնիայի կենսաթոշակային ֆոնդերինը: Համեմատության համար վերցնելով 2014թ.-ից սկսած ԷՀ և ՀՀ կենսաթոշակային ֆոնդերի եկամտաբերությունները՝ կունենանք հետևյալ պատկերը (գծապատկեր 3):

Ինչպես տեսնում ենք, Էստոնիայի կենսաթոշակային ֆոնդերի իրական եկամտաբերությունը վերջին տարիներին գնալով նվազել է: Իրական եկամտաբերությունը վերջին 15 տարիների ընթացքում կազմում է տարեկան -0,2%, իսկ իրական եկամտաբերությունը վերջին 10 տարիների ընթացքում -1,3% տարեկան: Ըստ ՏՀԶԿ-ի ՝՝Pension Markets in Focus՝՝ 2018թ. տարեկան հաշվետվության՝ 2017թ. ԷՀ կենսաթոշակային ֆոնդերի իրական եկամտաբերությունը կազմել է -0,1%, ինչը ՏՀԶԿ երկրների շարքում երկրորդ բացասական արդյունքն է: Այս ցուցանիշը ցածր է գնաճի ցուցանիշից: Համեմատության համար նշենք, որ ՏՀԶԿ-ի երկրների կենսաթոշակային ֆոնդերի միջին կշռված իրական եկամտաբերությունը 2017թ. կազմել է 6,6%: Իհարկե, ՀՀ կենսաթոշակային ֆոնդերի համար դեռ վաղ է կարծիք կազմելը, սակայն դրանք տարեկան եկամտաբերության առումով առաջատար դիրքերում են գտնվում ՏՀԶԿ և ՏՀԶԿ անդամ չհանդիսացող երկրների համեմատ (ՏՀԶԿ-ի ՝՝Pension Markets in Focus՝՝ 2017թ. հաշվետվության մեջ ՀՀ-ն զբաղեցնում է 1-ին տեղ[4], իսկ ՏՀԶԿ-ի ՝՝Pension Markets in Focus՝՝ 2018թ.՝ 6-րդ տեղը):

Էստոնիայի կենսաթոշակային ֆոնդերի ցածր եկամտաբերությունը բացատրվում է մի շարք գործոններով (ոլորտը կարգավորող կանոնները, ֆոնդերի կառավարիչների բարձր վարչական ծախսերը և այլն): Վերջին մի քանի տարիների ընթացքում այս քննադատությունը նույնիսկ հանգեցրել է երկրորդ բաղադրիչի շուկայում նոր ոչ բանկային խաղացողի՝ TULEVA-ի առաջացմանը, որի կենսաթոշակային ֆոնդերը ցածր վարչական ծախսեր ունեն և պարզապես հետևում են շուկայի խոշոր խաղացողների որոշումներին, սակայն դրանք նույնպես միայն աճել են ավելի շատ, քան գնաճը Էստոնիայում:

Ամփոփելով կատարված հետազոտությունը կարող ենք կատարել հետևյալ եզրահանգումները.

- Երկու երկրների գլխավոր ընդհանրական առանձնահատկությունն այն է, որ կենսաթոշակային համակարգերն հիմնված են 3 հենասյունների վրա՝ պետական թոշակ, կուտակային թոշակ (պարտադիր) և լրացուցիչ կուտակային թոշակ (կամավոր):
- ՀՀ-ում պարտադիր բաղադրիչի շրջանակներում մասնակիցների օգտին կատարվող հատկացումները գրեթե 2 անգամ գերազանցում են Էստոնիայում կատարվող հատկացումներին, որը կարող ենք բացատրել այն հանգամանքով, որ ՀՀ-ում մասնակիցներն ունեն ավելի քիչ ժամանակ կուտակելու համար մինչև կենսաթոշակային տարիքի լրանալը, քան Էստոնիայում, և բնական է, որ ՀՀ-ում կուտակային վճարների չափը պետք է ավելի մեծ լինի, որպեսզի ապահովվի կենսաթոշակի ցանկալի մակարդակը:
- Էստոնիայում մասնակցությունը պարտադիր բաղադրիչին շատ ավելի ընդգրկուն է, քան Հայաստանում: Պատճառն այն է, որ ԷՀ-ում այս բաղադրիչին միանալը պարտադիր դարձավ ոչ թե մասնակիցների բոլոր խմբերի համար միաժամանակ, այլ կազմակերպվեց մի քանի փուլերով:
- Էստոնիայում օրենքով սահմանված կարգով կարող են լինել 4 տեսակի, իսկ ՀՀ-ում՝ 3 տեսակի կենսաթոշակային ֆոնդեր, ընդ որում՝ ՀՀ-ում բացակայում է ամենառիսկային ֆոնդի տեսակը Էստոնիայում (ֆոնդի ակտիվների մինչև 75%-ը կարող է ներդրվել բաժնետոմսերում և բաժնային արժեթղթերում):
- Էստոնացիների մեծ մասն ընտրել է առավել ռիսկային կենսաթոշակային ֆոնդերը

[3] «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, 22.12.2010

[4] OECD Pension Market in Figures 2018 http://www.oecd.org/daf/fin/private-pensions/Pension-Funds-in-Figures-2017.pdf

և հաճախ է փոփոխում դրանք, որը կարելի է դիտարկել որպես ֆոնդային շուկայի բարենպաստ զարգացման հետևանք: Մասնակիցների մեծ մասն ընտրել է անհամապատասխան ֆոնդ մասնակցելու համար, ինչը կարող ենք բացատրել թե՛ ֆոնդի կառավարիչների կողմից իրականացվող ակտիվ գովազդային արշավներով, և թե՛ այն հանգամանքով, որ ավելի տարեց մասնակիցներն ունեն ավելի քիչ ժամանակ մինչ կենսաթոշակային տարիքի հասնելը և ցանկանում են իրենց միջոցները ներդնել ավելի մեծ եկամտաբերություն «խոստացող» ֆոնդերում:Ի տարբերություն Էստոնացիների՝ ՀՀ-ում մասնակիցների ճնշող մեծամասնությունը հատկացումներ է կատարում միջին ռիսկայնության՝ պահպանողական ֆոնդերում՝ հիմնականում պայմանավորված այն հանգամանքով, որ համակարգն ավտոմատ ընտրություն է կատարել նրանց փոխարեն՝ ֆոնդ և կառավարիչ չընտրելու պատճառով: Այսպիսի վարքագիծը կարող է պայմանավորված լինել ինչպես մասնակիցների ֆինանսական գրագիտությամբ, այնպես էլ նրանց կողմից համակարգի գործունեության նկատմամբ էական անտարբերությամբ:

- ՀՀ կենսաթոշակային համակարգը կարգավորող օրենսդրական դաշտն, ի տարբերություն էստոնականի, առավել խիստ սահմանափակումներ է նախատեսում, սակայն ՀՀ կենսաթոշակային ֆոնդերի՝ վերջին տարիների գրանցած արդյունքները եկամտաբերության առումով շատ ավելի բարձր են, քան առավել «ազատական» օրենսդրությամբ Էստոնիայի կենսաթոշակային ֆոնդերինը: Վերջին տարիներին Էստոնիայի կենսաթոշակային ֆոնդերը իրական եկամտաբերության առումով բավականին ցածր ցուցանիշներ են գրանցել, իսկ հայաստանյան կենսաթոշակային ֆոնդերը տարեկան եկամտաբերության առումով առաջատար դիրքերում են գտնվում ՏՀԶԿ և ՏՀԶԿ անդամ չհանդիսացող երկրների համեմատ:

Օգտագործված գրականության ցանկ

1. ԷՀ պետական կենսաթոշակային կենտրոնի պաշտոնական կայք՝ https://www.pensionikeskus.ee/en/ [EH petakan kensatoshakayin kentroni pashtonakan kayq - https://www.pensionikeskus.ee/en/]
2. «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենք, 22.12.2010թ. [“Kutakayin kensatoshakneri masin” HH orenq, 22.12.2010t. [in Armenian]]
3. ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական կայք՝ https://www.cba.am [HH Kentronakan banki pashtonakan kayq - https://www.cba.am]
4. ՀՀ Վիճակագրական կոմիտե՝ https://www.armstat.am/am/ [HH Vichakagrakan komite - https://www.armstat.am/am/]
5. Andres Võrk, Magnus Piirits and Evelin Jõgi, “The Impact of Introduction of Funded Pension Schemes on Intragenerational Inequality in Estonia”, A Cohort Microsimulation Analysis, 29 June 2015
6. Magnus Piirits, Mart Masso, Ingel Kadarik, “Estonia: First steps towards a more flexible pension system”, Eurofound, Published on: 01 Mar 2017
7. OECD Pension Market in Figures 2018
8. OECD Pension Market in Focus 2018
9. OECD Pensions Outlook 2018
10. OECD Survey of investment regulation of pension funds 2018
11. Olga Rajevska, “Funded Pillars in the Pension Systems of Estonia, Latvia and Lithuania”, Article in Economics and Business, 23:83-89, January 2013
12. Pension Funds Online, published by Wilmington Publishing & Information
13. Reeta Paakkinen, “Pensions in CEE: New dawns for Baltic pensions”, Intelligence on European Pensions and Institutional Investment, January 2017 (magazine)
14. Ringa Raudla & Karsten Staehr, “Pension Reforms and Taxation in Estonia”, Baltic Journal of Economics, Published online: 03 Jun 2014, Pages 64-92

Сдана/Հանձնվել է՝ 25.11.2019
Рецензирована/Գրախոսվել է՝ 28.11.2019
Принята/Ընդունվել է՝ 2.12.2019

Եկամտային հարկի համահարթեցման հնարավոր հետեվանքների ազդեցությունը տնտեսական աճի վրա Հայաստանի Հանրապետությունում

Սարոյան Կ.Ի.
ՀՀ Պետական Կառավարման Ակադեմիա (Երևան, Հայաստան)
karensaroyan@paara.am

Վճռորոշ բառեր՝ Եկամտային հարկի համահարթեցում, միավոր աշխատաժամանակ, տնօրինվող եկամուտ, մուլտիպլիկատորի էֆեկտ, սպառման և խնայողության հակում

Влияние возможных последствий выравнивания подоходного налога на экономический рост в Республике Армения

Сароян К.И.
Академия Государственного Управления Республики Армения (Ереван, Армения)
karensaroyan@paara.am

Резюме: В этой статье на теоретическом уровне анализируется влияние возможных последствий выравнивания подоходного налога на экономическый рост в Республике Армении. Рассматриваются возможные негативные последствия выравнивания подоходного налога, сравнивая их с ожидаемыми выгодами. Теоретический анализ свидетельствует, что в краткосрочной перспективе кажется больее вероятным, что выравнивание будет препятствовать экономическому росту из-за возможного сокращения рабочего времени и низкого влияния мультипликатора потребления.
Ключевые слова: Выравнивание подоходного налога, единица труда, располагаемый доход, эффект мультипликатора, склонность к потреблению и сбережению

The Impact of the Possible Consequences of Flat Income Tax on Economic Growth in the Republic of Armenia

Saroyan K.I.
Public Administration Academy of the Republic of Armenia (Yerevan, Armenia)
karensaroyan@paara.am

Abstract: In this article we theoretically analyze the impact of the possible consequences of flat income tax on economic growth in the Republic of Armenia. We observe the possible negative consequences of flat income tax comparing them with expected benefits. This theoretically implemented analysis testifies that in the short run it seems more likely that flattening will discourage economic growth due to the possible shortening of working time and low impact of the multiplier of consumption.
Keywords: Flat income tax, unit labor, disposable income, multiplier effect, the marginal propensity to consume and to save

Արդեն երկար ժամանակ է, ինչ մի շարք զարգացող և անցումային շրջանի տնտեսություններ հարկման կոմպլեկս, պրոգրեսիվ համակարգից անցում են կատարում հարկման պարզ ռեժիմների, որոնցից մեկն էլ հանդիսանում է հարկման համահարթ համակարգը:

Սկսած 1940 թվականից մինչև 2011թ. ներառյալ, մոտավորապես 38[1] երկրներ անցում են կատարել հարկման համահարթեցված համակարգին: Երկրների կողմից վերջին տարիներին այպիսի հարկման համակարգի ընդունման 2[2] խոշոր ալիքներ են առանձնացվում: Առաջին խոշոր ալիքը ներառում է Բալթյան երկրները՝ Լատվիան, Լիտվիան և Էստոնիան և բնութագրվում է նրանով, որ այս երկրներում համահարթեցման արդյունքում հարկերը սահմանվեցին համեմատաբար բարձր դրույքաչափի սահմաններում՝ գրեթե հավասար նախկին պրոգրեսիվ համակարգի

[1]Denvil R, Duncan, Economic impact of a "Flat" Tax. What have we learned from the Russian Experience?, Scholl of Public and Enviromental Affairs, Indian University, February 2012, p. 1

[2]Salvador Barrios, Euromod working paper series, Progressive tax reforms in flat tax countries, March 2019, p. 2

ամենաբարձր սահմանային դրույքաչափին: Երկրորդ ալիքը սկիզբ առավ Ռուսաստանի Դաշնությունում, այնուհետև տարածվեց Ռումինիայում և Հունգարիայում: Այս դեպքում հատկանշական էր այն, որ բարեփոխումից հետո հարկերը սահմանվեցին այնպիսի մակարդակում, որը մոտ էր նախկին պրոգրեսիվ համակարգի ամենացածր դրույքաչափին: Ռուսաստանի Դաշնության դեպքը հանդիսանում է առավել շատ ուսումնասիրված դեպքերից մեկը, որի պատճառներից մեկն էլ համարում են դրա կիրառման հաջողությունը: 16.07.1998թ.-ին[3] ընդունված հարկային օրենսգրքի 2-րդ մասին համապատասխան՝ Ռուսաստանը 2001 թվականի հունվարի 1-ից անցում կատարեց եկամտային հարկի համահարթ դրույքաչափի՝ նախկին պրոգրեսիվ հարկման փոխարեն: Ուժի մեջ մտած հարկային օրենսգրքով Ռուսաստանի Դաշնությունում աշխատավարձերի և դրանց հավասարեցված այլ եկամուտների նկատմամբ եկամտային հարկի դրույքաչափը սահմանվեց 13 տոկոս՝ 1 տոկոս բարձր նախկին պրոգրեսիվ համակարգի ամենացածր դրույքաչափից[4]: Ռուսաստանում համահարթեցման կիրառման հաջողությունը պայմանավորում են հիմնականում այդ ժամանակահատվածում ձևավորված տնտեսական բարենպաստ միջավայրով և ընդգրկուն օրենսդրական փաթեթի կիրառմամբ:

Եկամտային հարկի համահարթեցման կողմնակիցները առանձնացնում են դրա կիրառման 3 հիմնական դրական հետևանք՝ պարզությունը, արդյունավետությունը և արդարությունը: Սակայն հարց է առաջանում, թե կոնկրետ ինչպիսի ազդեցություն է այն ունենում տնտեսական աճի վրա՝ առանձին վերցրած: Այս համատեքստում, հատկապես կարևորվում է ՀՀ-ում եկամտային հարկի համահարթեցման հետևանքների վերլուծությունը՝ տնտեսական աճի տեսանկյունից:

Ինչպես գիտենք, 25.06.2019թ.-ին ընդունված ՀՕ-68-Ն օրենքով փոփոխություններ են տեղի ունեցել ՀՀ հարկային օրենսգրքում, որի համաձայն՝ 2020թ.-ի հունվարի 1-ից ՀՀ-ում եկամտային հարկի նախկին պրոգրեսիվ դրույքաչափերի փոխարեն կիրառվելու է միասնական հաստատուն եկամտային հարկ՝ 23 տոկոս դրույքաչափով, որը հաջորդաբար իջնելու է մինչև 20 տոկոս: Այս ամենի հետևանքով նախատեսվում է հարկային եկամուտների կորուստ, որը ՊԵԿ գնահատականների համաձայն կազմելու է 26,218,853,105[5] դրամ, որի հաշվարկման մեթոդիկան տրված է ստորև բերված աղյուսակում (աղյուսակ 1):

Պետք է նշել, որ հարկային եկամուտների նշված կորուստների հաշվարկին չեն մասնակցում՝

1) միկրոձեռնարկատիրության մեջ ներգրավված վարձու աշխատողներին հարկային գործակալի կողմից վճարված եկամտային հարկի գումարները, քանի որ անկախ եկամտային հարկի բազայից միկրոձեռնարկատիրության սուբյեկտները յուրաքանչյուր աշխատողի համար ամսեկան հաշվարկում և վճարում են միանվագ 5000-ական դրամ,

2) «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքին համապատասխան հավաստագրված տնտեսավարող սուբյեկտների կողմից պահված եկամտային հարկի գումարները, քանզի նույն օրենքին և հարկային օրենսգրքի անցումային դրույթներին համապատասխան՝ մինչև 2022թ. դեկտեմբերի 31-ը ներառյալ «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» ՀՀ օրենքին համապատասխան հավաստագրված տնտեսավարող սուբյեկտները յուրաքանչյուր աշխատողի աշխատավարձի նկատմամբ հաշվարկելու և պահելու են եկամտային հարկ՝ 10 տոկոս դրույքաչափով՝ եկամտային հարկի դրույքաչափի ստանդարդ ամսեկան սանդղակի փոխարեն:

Հաշվի առնելով համահարթեցման հնարավոր հետևանքները և ՀՀ տնտեսական առանձնահատկությունները՝ այստեղ փորձել եմ առանձնացնել այն երեք կարևոր ուղղությունները, որոնցով եկամտային հարկի համահարթեցումը կարող է ազդել տնտեսական աճի վրա:

1. Աշխատաժամանակի տևողության քանակի փոփոխությունը: Ինչպես նշեցինք, 2020 թ.-ի հունվարի 1-ից ՀՀ-ում աշխատավարձերը

[3] http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_19671/
[4] http://www.garant.ru/infografika/621831/

[5] Գնահատականները կատարվել են ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համադրման արդյունքում

Հ/Հ	Ցուցանիշներ	Գնահատական
1	2018թ.-ի ընթացքում վարձու աշխատողներին հարկային գործակալի կողմից վճարված եկամուտներ	1,202,317.301,166
2	Միկրոձեռնարկատիրության մեջ ներգրավված վարձու աշխատողներին հարկային գործակալի կողմից վճարված եկամուտներ	20,685.316,829
3	Միկրոձեռնարկատիրության մեջ չներգրավված վարձու աշխատողներին հարկային գործակալի կողմից վճարված եկամուտներ	1,181,631,984,337
4	Միկրոձեռնարկատիրության մեջ չներգրավված վարձու աշխատողներին հարկային գործակալի կողմից վճարված եկամտային հարկ	297,994,209,413
5	Կանխատեսվող եկամտային հարկ 23% դրույքաչափի կիրառման արդյունքում	271,775,356,398
6	**Պետական բյուջեի հարկային եկամուտների կանխատեսվող կորուստը**	**26,218,853,015**

Աղյուսակ 1. 2020 թվականի հունվարի 1-ից եկամտային հարկի դրույքաչափի փոփոխման արդյունքում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների ազդեցության գնահատական, դրամով

և դրան հավասարեցված եկամուտները հարկվելու են միասնական 23 տոկոս դրույքաչափով (բացառությամբ միկրոձեռնարկատիրության և 'Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին' ՀՀ օրենքի շրջանակներում հարկային գործակալի կողմից պահվող եկամտյային հարկի)՝ անկախ հարկվող եկամտի մակարդակից: Նախկին դրույքաչափերի հետ համեմատությունից պարզ է դառնում, որ 150000 մինչ 2 միլիոն, ինչպես նաև 2 միլիոն և ավելի եկամուտ ստացող մարդկանց տնօրինվող եկամուտները և բացարձակ և հարաբերական աճ են գրանցելու, որի հետևանքն էլ, ըստ իս, հանդիսանալու է այն, որ շատ բարձր եկամուտ ստացող մարդիկ այս փոփոխությունների հետևանքով էլ ավելի շատ գումար են ստանալու բացարձակ առումով, ինչը կարող է հանգեցնել նրան, որ այս մարդիկ տվյալ պարագայում կզոհաբերեն իրենց աշխատաժամանակի մի մասը՝ ավելի շատ ժամանակ հատկացնելով իրենց ընտանիքին համ հանգստին, միևնույն ժամանակ նախկինի համեմատ ունենալով նույն կամ ավելի տնօրինվող եկամուտ:

ՀՀ-ում մոտավորապես գոյություն ունի 610000 գրանցված աշխատող, որի 65 տոկոսը ստանում են մինչև 150000 դրամի եկամուտ (ներառյալ հարկերը), 34,7 տոկոսը՝ 150000-ից մինչև 2 միլիոն դրամի եկամուտ, իսկ 0.3 տոկոսը՝ 2 միլիոն դրամից ավելի եկամուտ[1].



Նկար 1. 0-15000, 150000-200000 և 2 միլիոն ավելա եկամուտ ստացող աշխատողների մասնաբաժինը, տոկոսով

Ինչպես նշվեց, եկամտային հարկի համահարթեցման հետևանքով տեղի է ունենում հարկային եկամուտների կորուստ, որը կարելի է ներկայացնել ստորև բերված գրաֆիկով (նկար 2).

[1] Տվյալները վերցված են ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայից



Նկար 2. հարկային եկամուտների կորուսը եկամտային հարկի համահաթեցումից հետո

Ինչպես երևում է գրաֆիկից, A և C կետերով անցնող ուղիղը իրենից ներկայացնում է եկամտային հարկի համահարթեցումից ակնկալվող եկամուտները, որտեղ X-երի առանցքը իրենից ներկայացնում է աշխատավարձի և դրանց հավասարեցված եկամուտների մակարդակը՝ ներառյալ հարկերը, Y-երի առանցքը իրենից ներկայացնում է եկամտային հարկի մակարդակը տվյալ X-ի դեպքում: Միաժամանակ A, B և C կետերով անցնող բեկյալը իրենից ներկայացնում է գործող եկամտային հարկի դրույքաչափը՝ ամսական սանդղակով: Մաթեմատիկորեն, դա կարելի է ներկայացնել հետևալ կերպ.

1) մինչև համահարթեցումը՝

T=0.23X, երբ X-ը գտնվում է 0-150000 դրամի միջակայքում,
T= 34500+0.28X, երբ X-ը գտնվում է 150000-2000000 միջակայքում,
T=552500+0.33X, երբ X-ը մեծ է 2 միլիոնից,

2) համահարթեցումից հետո՝

Y =0.23X, X-ի ցանկացած արժեքի դեպքում,

Որտեղ՝ X-ը աշխատավարձը և դրան հավասարեցված վճարներն են, իսկ T-ն՝ աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների հարկումից գոյացող հարկային եկամուտները:

Վերոնշյալը ձևափոխելով մենք կարող ենք ստանալ տնօրինվող եկամուտների մակարդակը տրված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարումների դեպքում՝

1) մինչև համահարթեցումը՝

Y=X-0.23X=0.77X, երբ X-ը գտնվում է 0-150000 դրամի միջակայքում,
Y=150000-34500+0.72X, երբ X-ը գտնվում է 150000-2000000 միջակայքում,
Y=2000000-552500+0.67X, երբ X-ը մեծ է 2 միլիոնից,

2) համահարթեցումից հետո՝

Y=0.77X, X-ի ցանկացած արժեքի դեպքում, որտեղ՝ Y-ը դա տնօրինվող եկամտի մեծությունն է, իսկ X-ը՝ աշխատավարձի և դրանց հավասարեցված վճարների մեծությունն է՝ մինչև հարկումը:

Մինչև համահարթեցումը և համահարթեցումից հետո տնօրինվող եկամտի փոփոխությունը կարելի է ներկայացնել ստորև բերված նկարի միջոցով.

Նկարում A, B և C կետերով անցնող ուղիղը իրենից ներկայացնում է տնօրինվող եկամտի ֆունկցիան եկամտային հարկի համահարթեցումից հետո, իսկ A, D և E կետերով անցնող ուղիղը՝ տնօրինվող եկամտի ֆունկցիան մինչև համահարթեցումը:



Նկար 3. Տնօրինվող եկամտի փոփոխությունը եկամտային հարկի համահարթեցումից հետո

Տնտեսագիտության տեսության մեջ անհատական առաջարկի կորը քննարկելիս նշվում է, որ աշխատավարձի աճը (այստեղ խոսքը գնում է «մաքուր աշխատավարձի» մասին, որը չի ներառում հարկերը, այլ կերպ ասած՝ դա վերաբերում է տնօրինվող եկամտի աճին) հանգեցնում է առաջարկվող աշխատաժամանակի քանակի ավելացման, սակայն որոշակի սահմանից հետո աշխատավարձի աճը տանում է նրան, որ բարձր աշխատավարձ ստացող աշխատողները զոհաբերում են

իրենց աշխատաժամանկի մի մասը՝ ի օգուտ իրենց ազատ ժամանակի: Համադրելով անհատական առաջարկի կորը եկամտային հարկի համահարթեցումից հետո տնօրինվող եկամտի փոփոխությունն արտահայտող կորի հետ գրաֆիկորեն կարող ենք ցույց տալ հնարավոր աշխատաժամանկի տևողության կորուստը:



Նկար 4. Անհատական առաջարկի կորի ազդեցությունը եկամտային հարկի համահարթեցումից հետո

Գրաֆիկից պարզ է դառնում, որ եթե մինչև համահարթեցումը եկամտի ցանկալի մակարդակը ունենալու համար պահանջվում էր L3 տևողության աշխատաժամանակ, ապա համահարթեցումից հետո առաջարկվող աշխատաժամանկը նվազում է՝ դառնալով L2:

Աշխատաժամանակի կորստի հետևանքով անհատի եկամտի կորուստը կարելի է ներկայացնել հետևալ բանաձևով՝

(L3 – L2)*y, որտեղ՝

y-ը դա միավոր աշխատաժամանակի վարձատրությունն է համահարթեցումից հետո:

Այս ամենի հետևանքով պետական բյուջեից վերաբաշխվող եկամուտը ի օգուտ աշխատողների կնվազի առանձին անհատների աշխատաժամանակի կորստի հետևանքով անհատների եկամուտների կորստի հանրագումարի չափով, այլ կերպ՝

IL= 26,218,853,015 -$\sum_{i=1}^{n}(L_{n+k} - L_k) * y_i$, որտեղ՝

IL-ը աշխատաժամանակի սկզբնական տևողության նվազման հետևանքով սկզբնական վերաբաշխվող եկամտի կորուստների հանրագումարն է, L_{n+k}-ն՝ աշխատանքին հատկացվող սկբնական ժամանակի տևողությունն է, L_n-ը՝ համահարթեցումից հետո աշխատանքին հատկացվող ժամանակի տևողությունն է, y_i-ն՝ համահարթեցումից հետո տնօրինվող եկամտի մեծությունն է մեկ միավոր աշխատաժամանկի դեպքում

2. Պետական ծախսերի և սպառման մուլտիպլիկատորի էֆֆեկտը:

Տնտեսագիտությունից հայնտի է, որ ՀՆԱ-ն չափվում է 3 եղանակով, որոնցից մեկն էլ հանդիսանում է ծախսային եղանակը, որի միջոցով ՀՆԱ-ն արտահայտվում է հետևալ կերպ՝

GDP=C+I+G+NX, որտեղ՝

C-ն սպառումն է, I-ը՝ համախառն ներդրումները, G-ն՝ պետական ծախսերը, իսկ NX–ը՝ արտահանման և ներմուծման տարբերությունը: Եկամտային հարկի համահարթեցման հետևանքով տեղի է ունենում ՀՆԱ-ի ծախսային մասի վերաբաշխում՝ պետական ծախսերից դեպի սպառման ծախսեր, որն իր համապատասխան աղզեցությունն է գործում ՀՆԱ-ի վրա՝ միաժամանակ ազդելով նաև ՀՆԱ-ի մնացած բաղադրիչների վրա: Այս ազդեցությունն իր դրսևորումն է ստանում մուլտիպլիկատորի էֆեկտի միջոցով: Մուլտիպլիկատորի էֆֆեկտի էությունը կայանում է նրանում, որ յուրաքանչուր ծախս՝ կլինի դա սպառման ծախս, ներդրումային ծախս կամ պետական ծախս, շղթայական ռեակցիայով հանգեցնում է ՀՆԱ-ի բազմապատիկ աճի, որի մեծությունը որոշվում է k գործակցով: Գործակիցը հաշվարկելու համար օգտագործվում են այնպիսի մեծություններ, ինչպիսիք են սպառման և խնայողության սահմանային հակումները: Ժամանակին, ուսումնասիրելով սպառման, խնայողության և ներդրումների էությունը, Քեյնսը եկել է կարևոր եզրահանգման, համաձայն որի՝ խնայողությունը կախված է ոչ թե տոկոսադրույքի մեծությունից, այլ եկամտի մակարդակից: Այսինք, խնայողության առաջնային ազդակը դա առկա եկամուտն է, այլ ոչ թե տոկոսը[2]: Հաշվի առնելով դա՝ եկամուտը կարելի է ներկայացնել՝ որպես սպառման և խնայողության հանրագումար.

Y=C+S: Այս դեպքում ինչպես սպառումը, այնպես էլ խնայողություն հանդիսանում են ֆունկցիա եկամտից՝

[2] The Keynesian Revolution and its Critics, Issues of the Theory and Policy for the Monetary Production Economy, Gordon A. Fletcher, 1987, 1-st editon, p. 69

C= a+MPC*Y,

S= -a+MPS*Y, որտեղ՝

a-ն ավտոնոմ սպառումն է, MPC-ը՝ սպառման սահմանային հակումը, իսկ MPS-ը՝ խնայողության սահմանային հակումը, այստեղից հետևում է, որ MPC+MPS=1: MPC-ը դա մեկ միավոր եկամտի փոփոխության հետևանքով սպառման մեծության փոփոխությունն է: Այսինքն, եթե MPC=0.6 միավոր, իսկ լրացուցիչ եկամուտը կազմում է 100 միավոր, ապա լրացուցիչ սպառման ծախսերը կկազմեն 60 միավոր: Այս ամենը հաշվի առնելով, այժմ կարելի է գնահատել պետական ծախսերի մուլտիպլիկատորի գործակիցը, որն ունի հետևալ բանաձևը՝

Y= G+MPC*G+MPC*MPC*G+….=G/1-MPC=G/MPS, որտեղից k=1/MPS:

Տվյալ դեպքում, եթե G=100 միավոր, իսկ MPC-ն տնտեսության մասշտաբով հավասար է 0.6-ի, ապա k=100/0.4=250, այսինքն 100 միավոր պետական ծախսը բերում է250 միավոր եկամուտ: Խնդիրն այլ է հարկերի նվազեցման պարագայում: Հարկերի նվազեցումը բերում է անհատների եկամուտների ավելացման, սակայն քանի որ եկամտի մի մասը կազմում է խնայողությունը, ապա 100 միավոր հարկերի նվազեցման պարագայում սպառումը կավելանա 60 միավորով, իսկ 40-ը կուղղվի խնայողությունը, ուստի հարկերի նվազեցման մուլտիպլիկատորի գործակիցը կունենա հետևալ տեսքը՝

100*MPC+100*MPC*MPC+100*MPC*MPC*MPC=MPC/1-MPC=100*MPC/MPS,

Այսինքն՝ հարկերի նվազեցման արդյունքում մուլտիպլիկատորը կազմում է ավելի փոքր մեծություն, քան պետական ծախսերի պարագայում էր, իսկ տարբերությունը հենց իրենից ներկայանցում է G մեծությունը: Ստացվում է, որ պետական ծախսերի և սպառման ծախսերի մուլտիպլիկատորի հավասար մեծության դեպքում եկամտային հարկի համահարթեցումից հետո սկզբնական շրջանում ՀՆԱ-ն նախկինի համեմատ կրում է 26,218,853,015 դրամի կորուստ: Հարց է առաջանում, թե ինչպիսին կլինի վերջնական ազդեցությունը ՀՆԱ-ի վրա եկամտային հարկի համահարթեցումից հետո: Ամեն ինչ կախված է պետական ծախսերի և սպառման ծախսերի մուլտիպլիկատիվ էֆեկտից: Սակայն, կա մի հանգամանք, որը մեզ որակապես հնարավորություն կտա գնահատել դրանց վերջնական ազդեցությունը: Դրա էությունը կայանում է հետևալում.

Քանի որ եկատմտային հարկի համահարթեցումից հիմնականում շահում են բարձր եկամուտ ստացողները, իսկ ավել բարձր ստացող անհատների սպառման հակումը ընդհանուր եկամտում ցածր մասնաբաժին է կազմում և միջինում ավելի փոքր մեծություն է կազմում, ապա կարծում ենք, որ համահարթեցումից հետո պետական ծախսերի մուլտիպլիկատորը ընդհանուր տնտեսության մասշտաբով ավելի մեծ կլինի, քան սպառման մուլտիպլիկատորը: Դրա մասին են վկայում նաև կատարված հարցման արդյունքները, որոնց համաձայն՝ 0-150000 դրամ ստացողների սպառման միջին հակումը կազմում է մոտավորապես 0.95 միավոր, 150000-2000000 ստացողներինը՝ 0.71 միավոր, իսկ 2000000-ից ավել գումար ստացողների՝ 0.52 միավոր: Հարցման տվյալները ներառված են ստորև բերված աղյուսակում (աղյուսակ 2):

Սակայն պետք է նաև հաշվի առնել, որ 2մլն.-ից ավել գումար ստացողների տեսակարար կշիռը կազմում է ընդհանուր աշխատողների 0.3 տոկոսը կամ 1830 մարդ, ուստի եկամտային հարկի համահարթեցման արդյունքում ձևավորվող սպառման հակման միջին ցուցանիշը կկազմի մոտավորապես 0.7 միավոր:

ՀՆԱ-ի մոտավոր ընդհանուր կորուստը տվյալ դեպքում կարելի է ներկայացնել հետևալ կերպ.

TIL= 26,218,853,015/(1-MPC) –((26,218,853,015- $\sum_{i=1}^{n}(L_{n+k} - L_k) * y_i$)/(1-MPC) - 26,218,853,015)= $\sum_{i=1}^{n}(L_{n+k} - L_k) * y_i$)/(1-MPC)+26,218,853,015

Որտեղ՝ 1-ին մեծությունը ցույց է տալի պետական ծախսերի մուլտիպլիկատորի էֆեկտը, 2-րդ մեծությունը համահարթեցման արդյունքում սկզբնական կորստի մեծությունն է, իսկ 3-րդ մեծությունը իրենից ներակայացնում է համահարթեցման արդյունքում սպառման ծախսերի մուլտիպլիկատորի էֆեկտը՝ հաշվի առած նաև աշխատաժամանակի կորստի հետևանքով եկամտի հնարավոր կորուստը:

Ներմուծման մուլտիպլիկատորի ազդեցությունը: Ինչպես նշեցինք, համահարթեցման

Եկամտի սանդղակը					
0-150000		150000-20000000		2000000 և ավելի	
MPS	MPC	MPS	MPC	MPS	MPC
0	1	0.79	0.21	0.47	0.53
0.1	0.9	0.2	0.8	0.32	0.68
0	1	0.42	0.58	0.39	0.61
0	1	0.35	0.65	0.4	0.6
0.15	0.85	0.19	0.81	0.6	0.4
0	1	0.3	0.7	0.63	0.37
0.2	0.8	0.05	0.95	0.5	0.5
0	1	0.2	0.8	0.5	0.5
0	1	0	1	0.32	0.68
0.1	0.9	0.44	0.56	0.37	0.63
0.1	0.9	0	1	0.44	0.56
0	1	0.4	0.6	0.33	0.67
0	1	0	1	0.43	0.57
0	1	0.75	0.25	0.76	0.24
0.1	0.9	0.3	0.7	0.67	0.33
0.05	**0.95**	**0.29**	**0.71**	**0.48**	**0.52**

Աղյուսակ 2. Սպառման և խնայողության հակման մեծությունները եկամտային տարբեր սանդղակների դեպքում

հետևանքով բարձրանում են 150000-2000000, ինչպես նաև 2 մլն. և ավելի աշխատավարձ ստացող 213500 աշխատողների տնօրինվող եկամուտը: Այս խմբերից հիմնականում բարձր եկամուտ ստացող աշխատողներ շատ դեպքերում իրենց յուրահատուկ պահանջմունքների բավարարման նպատակով ձեռք են բերում դրսից ներմուծված ապրանքներ, ինչպես նաև պատվիրում են դրանք հատուկ ինտերնետային կայքերի միջոցով: Քանի որ ներմուծման ժամանակ գումարները դուրս են հոսում, դրանք այլևս չեն ծախսվում երկրի ներսում ապրանքների կամ ծառայությունների ձեռք բերման վրա, ուստի արգելակում են մուլտիպլիկատորի հետագա ազդեցությունը: Հետևաբար, այս գործոնը նույնպես պետք է հաշվի առնել եկամտի համահարթեցման համատեքստում: Դրա հետևանքով ՀՆԱ-ի ընդհանուր կորուստը համահարթեցումից հետո կարելի է ներկայացնել հետևալ բանաձևով՝

TIL=$\sum_{i=1}^{n}(L_{n+k} - L_k) * y_i$)/(1-MPC+MPM)+26,218,853,015

Մյուս կողմից, եկամտի այն մասը, որը չի սպառվել և խնայվել է, և որը կազմում է 26,218,853,015*MPS, հետագայում կամ սպառվում կամ որպես ավանդ ներդրվում է բանկում: Եթե մենք ընդունենք, որ MPS=MPS1+MPS2, ապա MPS1*26,218,853,015 կներկայացնի հետագայում սպառվող գումարը, իսկ MPS2*26,218,853,015 որպես ավանդ ներդրվող գումարը: Խնայվող գումարից որոշակի մասի սպառումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ժամանակի ընթացքում համահարթեցումից հետո տնօրինվող եկամտի ավելացում ունեցողները՝ տեսնելով, որ տնօրինվող եկամտի մեծացումը կրում է համեմատաբար կայուն և երկարաժամկետ բնույթ, որոշակի չափով մեծացնում են իրենց սպառման հակումը նախկինի համեմատ: Այս հանգամանքը քննարկվել է ինչպես Միլթոն Ֆրիդմանի, այնպես էլ Ֆրանկո Մոդիլյանի և Ռիչարդ Բրումբերգի կողմից: Ֆրիդմանը այն ձևակերպել է որպես 'կայուն եկամտի հիպոթեզ', իսկ Մոդիլյանին և Բրումբերգը՝ 'կյանքի ցիկլի տեսություն'[1]: Ինչ վերաբերում է որպես ավանդ ներդրվող գումարներին, ապա վերջինս ոչ միայն հետագայում հանդիսանում է որպես ներդրումային ծախս, այլև մի կողմից ավանդատուին բերում է երաշխավորված

[1] Macroeconomics: an Introduction, Chapter 11, Keynesian Fiscal Policy and the Multipliers, Internet Editing as of January 1, 2006, Copyright 2006 by Charles R. Melson, p. 9

տոկոսային գումարներ՝ որպես ներդրված ավանդի դիմաց հատուցում, մյուս կողմից՝ բանկը վարկավորելով այդ գումարները այլ կազմակերպություններին, ստանում է վարկային տոկոսային գումարներ: Այսինքն՝ երկարաժամկետ կտրվածքում տեղի կունենա ՀՆԱ-ի աճ, որը կընդունի հետևալ տեսքը՝

FI=(26,218,853,015*MPS1/1-MPC)+(26,218,853,015*MPS2/1-MPC)+ 26,218,853,015*MPS2*$(1+r)^n$+26,218,853,015* MPS2* (($\frac{r/12}{1-(1+\frac{r}{12})^{-n}}$)*n-1) =

26,218,853,015+26,218,853,015*MPS2*$((1+r)^n$+ ($\frac{r/12}{1-(1+\frac{r}{12})^{-n}}$)*n-1), որտեղ՝

26,218,853,015*MPS2*(($\frac{r/12}{1-(1+\frac{r}{12})^{-n}}$)*n-1)[2]-ը բանկի կողմից ներդրողներին վարկավորելու դիմաց ստացվող տոկոսային գումարներն են (այստեղ n մեծությունը տարիների ամիսների թիվն է), 26,218,853,015* MPS2*$(1+r)^n$ ավանդատուների ստացած վերջնական գումարներն են, որոնք ներառում են ինչպես սկզբնական ավանդի գումարը, այնպես էլ դրա դիմաց հաշվեգրվող տոկոսները:

Համադրելով ապագա եկամուտները հնարավոր կորուստների հետ կունենանք՝

NG=FI-TIL=26,218,853,015+26,218,853,015*MPS2*$(1+r)^n$ + 26,218,853,015*MPS2*(($\frac{r/12}{1-(1+\frac{r}{12})^{-n}}$)*n-1)- $\sum_{i=1}^{n}(L_{n+k}-L_k)*y_i$)/(1-MPC+MPM) - 26,218,853,015 = 26,218,853,015*MPS2* $((1+r)^n+(\frac{r/12}{1-(1+\frac{r}{12})^{-n}})*n-1)$ - $\sum_{i=1}^{n}(L_{n+k}-L_k)*y_i$/(1-MPC+MPM), որտեղ՝

NG-ն դա զուտ արդյունքն է համահարթեցումից հետո: Այստեղ պետք է հաշվի առնել, որ $\sum_{i=1}^{n}(L_{n+k}-L_k)*y_i$, $(1+r)^n$ և $(\frac{r/12}{1-(1+\frac{r}{12})^{-n}})*n$ մեծությունների մեջ n պարամետրն ունի միանգամայն տարբեր նշանակություն: Բանաձևից հետևում է, որ կարճաժամկետ կտրվածքում ավելի իրատեսական է թվում եկամտի համահարթեցման բացասական ազդեցությունը տնտեսական աճի վրա:

Մեր վերլուծությունը հիմնականում կրում էր տեսական բնույթ: Մենք ընդունեցինք, որ ընդհանուր մասշտաբով պետական, սպառման և ներդրումային ծախսերի մուլտիպլիկատորը նույն մեծությունն է: Գործնականում ամեն ինչ կախված է նրանից, թե ՀՆԱ-ի բաղադրիչներից որի մուլտիպլիկատորն ավելի ուժեղ ազդեցություն կգործի ընդհանուր արդյունքի վրա և, եթե այդպիսին լինի, ապա տնտեսական որոշումներ ընդունելիս առավել մեծ ուշադրություն պետք է դարձնել հենց այդ ագրեգատին:

Օգտագործված գրականության ցանկ

1. **R. A Musgrave and Tun Thin**, Income Tax Progression, 1929-48, Journal of Political Economy, Vol. 56, N 6 (Dec., 1948), pp. 498-514
2. **William G. Gale**, Simple, Efficient, Fair, Or is it? The Flat Tax in Theory and Practice: The Brookings Review, Vol.16., N 3 (Summer 1998), pp. 40-44, Brooking Institutional Press
3. An Economic Evaluation of the Economic Growth and Tax Relief Reconciliation Act, 2001
4. **R. Melson**, Macroeconomics: an Introduction, Chapter 11, Keynesian Fiscal Policy and the Multipliers, Internet Editing as of January 1, 2006
5. **Denvil R**. Duncan, Behavioral Responses and The Equity Effects of Personal Income Taxes, 2011
6. **Denvil R**. Duncan, Economic impact of a “Flat” Tax. What have we learned from the Russian Experience?, Scholl of Public and Enviromental Affairs, Indian University, February 2012
7. **Salvador Barrios**, Euromod working paper series, Progressive tax reforms in flat tax countries, March 2019
8. http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_19671/
9. http://www.garant.ru/infografika/621831/
10. http://www.petekamutner.am/
11. http://www.minfin.am/
12. https://vsezaimyonline.ru/reviews/protsenty-po-kreditu.html

Сдана/Հանձնվել է՝ 24.12.2019
Рецензирована/Գրախոսվել է՝ 27.12.2019
Принята/Ընդունվել է՝ 8.01.2020

[2] https://vsezaimyonline.ru/reviews/protsenty-po-kreditu.html

Содержание

ПОЛИТИКА

Корнилов А.А.
Инновации в ближневосточной стратегии
премьер-министра Израиля Биньямина Нетаньяху (2009-2013 гг.)…….. 5
Толстых В.В., Берестов В.Б.
Будущее Афганистана: грядущие вызовы …… 10
Хачатрян А.Г.
Влияние уйгурского фактора на армяно-китайские отношения …….. 17
Норикян Н. Г.
Научно-контентный краткий анализ понятий "оборонная политика" и "военная политика"……. 23
Бардакчян О. Х.
«Третья экспансия» и политическая элита КНР…… 30
Агаджанян М. А.
Сущность и значение экономических санкций …….. 37
Шакарянц С.Э.
Будущее региона в версии Ирана – США убираются изо всей Западной Азии …….. 43

ИСТОРИЯ

Погосян (Хахбакян) Г.Г.
Памятники армянской архитектуры и топонимики в странах Южной Азии.
Афганистан, Пакистан …….. 62
Саргсян С.Т.
Краткое описание газеты “Пайкар” …… 70
Закарян Л.С.
Вопросы местного самоуправления в первые годы независимости Республики Армения.
Деятельность местных советов народных депутатов в 1991-1992 годах …… 76
Погосян (Хахбакян) Г.Г.
Памятники армянской архитектуры и топонимики в странах Юго-Восточной и
Восточной Азии. *Вьетнам, Тайланд, Япония* …… 83

ПРАВО

Худоян Г. М.
Конструктивная или деструктивная? Роль НАТО в Общей внешней политике и
политике безопасности Европейского Союза …….. 89
Маркосян М.М.
Семейное насилие и особенности его предупреждения в Республике Армения ……. 99

КУЛЬТУРА И РЕЛИГИЯ

Нерсисян С. А.
Культурное наследие Ахтамара …… 105
Авагян Г. А.
Освещение проблем армянской диаспоры в армянской прессе Ливана 1960-х годов ……. 109
Григорьян Э.Р.
Алгоритм Гермеса как диалектика гармонии ……. 116

ЭКОНОМИКА

Гишян К.
Оценка факторов, влияющих на приток денежных переводов в Армению с
помощью статистических инструментов …… 124
Асланян Г. С.
Взаимосвязь валютного курса с макроэкономическими показателями на примере РА …….. 131
Казарян Р. А.
Рынок труда и безработица в Республике Армения …….. 138
Левонян С.Р.
Динамика государственного долга Армении, его состав и структура ……. 143
Амбардзумян Л.С.
Сравнительный анализ пенсионных систем Эстонии и Армении …….. 148
Сароян К.И.
Влияние возможных последствий выравнивания подоходного налога
на экономический рост в Республике Армения …….. 155

Բովանդակություն

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կորնիլով Ա.Ա.
Իսրայելի վարչապետ Բենյամին Նեթանյահույի նորարարությունները մերձավորարևելյան ռազմավարությունում …….. 5

Տոլստիխ Վ.Վ., Բերեստով Վ.Բ.
Աֆղանստանի ապագան. զալիք մարտահրավերները ……..... 10

Խաչատրյան Ա.Գ.
Ույղուրական գործոնի ազդեցությունը հայ-չինական հարաբերությունների վրա…….. 17

Նորիկյան Ն.Գ.
«Պաշտպանական քաղաքականություն» և «ռազմական քաղաքականություն» հասկացությունների իմաստաբանական ու բովանդակային համառոտ վերլուծություն ……. 23

Բարդակչյան Հ. Խ.
«Երրորդ Էքսպանսիան» և Չինաստանի քաղաքական էլիտան……. 30

Աղաջանյան Մ.Ա.
Տնտեսական պատժամիջոցների էությունը և նշանակությունը …… 37

Ծաքարյանց Ս.Է.
Տարածաշրջանի ապագան ըստ Իրանի վարկածի. ԱՄՆ-ը հեռանում են ամբողջ Արևմտյան Ասիայից ……. 43

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Պողոսյան (Խաղբակյան) Գ.Հ.
Հայկական ճարտարապետական եւ տեղանվանական հուշարձանները Հարավային Ասիայի երկրներում. *Աֆղանստան, Պակիստան* …… 62

Սարգսյան Ս. Թ.
«Պայքար» պարբերականի համառոտ նկարագիրը …….. 70

Զաքարյան Լ.Ս.
Ժողովրդական պատգամավորների տեղական խորհուրդների գործունեությունը 1991-1992 թթ. ……..... 76

Պողոսյան (Խաղբակյան) Գ.Հ.
Հայկական ճարտարապետական եւ տեղանվանական հուշարձանները Հարավ-Արևելյան եւ Արևելյին երկրներում. *Վիետնամ, Թաիլանդ, Ճապոնիա* …… 83

ԻՐԱՎՈՒՆՔ

Խուդոյան Գ. Մ.
Կառուցողակա՞ն, թե՞ ապակառուցողական: ՆԱՏՕ-ի դերը ԵՄ Ընդհանուր արտաքին և անվտանգության քաղաքականությունում ……. 89

Մարկոսյան Մ. Մ.
Ընտանեկան բռնությունը և դրա կանխարգելման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում ……. 99

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ

Ներսիսյան Ս. Ա.
Աղթամարի մշակութային ժառանգությունը …… 105

Ավագյան Գ. Ա.
Սփյուռքահայերի կրթության խնդիրների լուսաբանումը 1960-ական թթ. լիբանանահայ մամուլում …… 109

Գրիգորյան Է.Ռ.
Հերմեսի ալգոռիթմը որպես ներդաշնակության դիալեկտիկա …….. 116

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գիշյան Կ.
Հայաստանի դրամական փոխանցումների ներհոսքի վրա ազդող գործոնների գնահատում վիճակագրական գործիքներով …… 124

Ասլանյան Գ. Ս.
Փոխարժեքի փոխկապվածությունը մակրոտնտեսական ցուցանիշների հետ ՀՀ օրինակով …… 131

Ղազարյան Ռ. Ա.
ՀՀ աշխատաշուկան և գործազրկությունը …… 138

Լեվոնյան Ս.Ռ.
ՀՀ պետական պարտքի դինամիկան, դրա կազմի և կառուցվածքի գնահատականը ……. 143

Համբարձումյան Լ. Ս.
Էստոնիայի և Հայաստանի կենսաթոշակային համակարգերի համեմատական վերլուծությունը …… 148

Սարոյան Կ.Ի.
Եկամտային հարկի համահարթեցման հնարավոր հետեվանքների ազդեցությունը տնտեսական աճի վրա Հայաստանի Հանրապետությունում ……. 155

Content

POLICY

Kornilov A.A.
Innovations in the Middle East Strategy of the Prime Minister Benjamin Netanyahu of Israel, 2009-2013…… 5
Tolstykh V.V., Berestov V.B.
The Future of Afghanistan: Future Calls…… 10
Khachatryan A.G.
Influence of the Uyghur Factor on Armenian-Chinese Relations…… 17
Norikyan N.G.
The Scientific-content Brief analysis of the Definitions "Defense Policy" and "Military Policy"…… 23
Bardakchyan H.Kh.
«Third expansion» and the political elite of China ……... 30
Aghajanyan M.A.
The Nature and Significance of Economic Sanctions …….. 37
Shakaryants S.E.
The future of the region in the Iranian version - the US is removed from all of West Asia …… 43

HISTORY

Poghosyan (Khaghbakyan) G.H.
The Monuments of Armenian Architectures and Toponymy in Countries of Sout Asia. *Afghanistan, Pakistan* …… 62
Sargsyan S.T.
Brief description of the newspaper "Paykar" …….. 70
Zakaryan L.S.
Issues of local government in the first years of independence of the Republic of Armenia. The activities of local councils of people's deputies in 1991-1992 …….. 76
Poghosyan (Khaghbakyan) G.H.
The Monuments of Armenian Architectures and Toponymy in Countries of Southeast and East Asia. *Vietnam, Thailand, Japan* …… 83

LAW

Khudoyan G. M.
Constructive or Destructive? The Role of NATO in CFSP/CFDP of EU ……... 89
Markosyan M.M. The
Domestic Violence and the Peculiarities of Its Prevention in the Repabliq of Armenia ……. 99

CULTURE AND RELIGION

Nersisyan S. A.
The cultural heritage of Akhtamar ……. 105
Avagyan G.A.
The Coverage of the Educational Issues of Diaspora Armenians in the Lebanese-Armenian press of 1960s …… 109
Grigoryan E.R.
Hermes Algorithm as a Dialectic of Harmony ……. 116

ECONOMY

Gishyan K.
Estimating the Factors Affecting the Remittance Inflow to Armenia with Statistical Tools …… 124
Aslanyan G. S.
The relationship between exchange rate and macroeconomic indicators by the example of RA …….. 131
Ghazaryan R. A.
Labour market and unemployment in the Republic of Armenia …….. 138
Levonyan S.R.
The dynamics of the state debt of Armenia, Assessment of its Composition and Structure …… 143
Hambardzumyan L.S.
Comparative Analysis of Pension Systems of Estonia and Armenia …….. 148
Saroyan K.I.
The Impact of the Possible Consequences of Flat Income Tax on Economic Growth in the Republic of Armenia …… 155

Научно-аналитический журнал

РЕГИОН И МИР

2020, том XI, № 1

(Регистрационный номер 211.200.00757)

Учредитель: “Общественный институт политических и социальных исследований Черноморско-Каспийского региона” ОО
Регистрационное удостоверение 03 Ц 090670
от 16.02.2011 г.
Адрес редакции: Ереван, 3-ий пр. Тиграна Меца, д. 9
Website**:** geopolitika.am; E-mail: blacksea-caspian@mail.ru
Тел: (+37410) 23-71-95, 093944440, 093868797

Ответственный за номер: *Г. Погосян*
Редактор: *Л. Андриасян*
Компьютерная верстка и оформление: *А. Меликсетян*

Подписано к печати 28.01.2020
Бумага офсетная, формат А4
Усл.п.листов 10,375
Основные шрифты: Times New Roman, Sylfaen,
Особые шрифты: Raavi, Mangal, SimSun, Angsana New.
Тираж 200 экз.
Издательство: Общественный институт политических и социальных исследований Черноморско-Каспийского региона
Отпечатано в типографии “Time to print”